

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

"B "C1

ԽՈՐՀՐԴԻ (ԵՀ) 1998 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 2135/98 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ,  
որով փոփոխության են ենթարկվում «Ճանապարհային տրանսպորտում  
ձայնագրող սարքավորման մասին» թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգը եւ թիվ  
3820/85 ու 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգերի կիրառման վերաբերյալ 88/599/ԵՏՀ  
հրահանգը

▼B

(ՊՏ L 274, 09.10.1998թ., էջ 1)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագրով		
		թիվ	էջ	ամսաթիվ
"M1	Հանձնաժողովի 2002 թվականի հունիսի 13-ի L 207 թիվ 1360/2002 կանոնակարգով (ԵՀ)	1		5.8.2002 05.08.2002թ
"M2	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 L 102 թվականի մարտի 15-ի թիվ 561/2006 (ԵՀ) կանոնակարգով	1		11.4.2006թ. 11.04.2006թ.

Ուղղված՝

"C1

Ուղղում՝ ՊՏ L 049, 25.02.1999թ., էջ 46 (2135/98)

"B

**▼C1**

**Խորհրդի կանոնակարգ (ԵՀ) թիվ 2135/98**

**1998 թվականի սեպտեմբերի 24-ին՝ փոփոխելով ճանապարհային տրանսպորտի գրանցման սարքավորումների վերաբերյալ ԵՏՀ թիվ 3821/85 կանոնակարգը եւ թիվ 3820/85 եւ 3821/85 ԵՏՀ կանոնակարգերի կիրառման վերաբերյալ 88/599/ԵՏՀ հրահանգը**

**"B**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը եւ, մասնավորապես, դրա 75(1)(գ) եւ (դ) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան (3),

- 1) քանի որ «Ճանապարհային տրանսպորտի գրանցման սարքավորումների մասին» Խորհրդի (ԵՏՀ) 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3821/85 կանոնակարգով սահմանվում են ճանապարհային տրանսպորտի գրանցման սարքավորումների պատրաստման, տեղադրման, օգտագործման եւ ստուգման մասին դրույթներ,
- 2) քանի որ փորձը ցույց է տվել, որ ճանապարհային տրանսպորտի տնտեսական ճնշումն ու մրցակցությունը հանգեցրել են նրան, որ ճանապարհային տրանսպորտային բեռնափոխադրման կազմակերպությունների որոշ աշխատակիցներ չեն ենթարկվում որոշ կանոնների, մասնավորապես, այն կանոններին, որոնք համապատասխանում են 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3820/85 «ճանապարհային փոխադրումներին վերաբերող սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին» Խորհրդի կանոնակարգով (ԵՏՀ) սահմանված՝ մեքենավարման եւ հանգստի ժամերին,

- 3) քանի որ ակնհայտ իրավախախտումներն ու խարդախությունները ճանապարհային անվտանգության վտանգ են ներկայացնում եւ մրցակցային պատճառներով անընդունելի են օրենքը հարգող անհատ վարորդների համար,
  
- 4) քանի որ եւ՛ իրականացնող, եւ՛ իրավասու մարմինների կողմից վարորդի պահվածքի ու վարքագծի, ինչպես նաեւ մեքենայի ընթացքի մանրամասն ավտոմատ գրանցումն ու կանոնավոր դիտանցումները, օրինակ՝ արագությունն ու անցած ճանապարհը, կբարելավեն ճանապարհային անվտանգությունը,
  
- 5) քանի որ Համայնքի սոցիալական կանոնակարգերում ամենօրյա մեքենավարման եւ հանգստի, ինչպես նաեւ ընդհանուր մեքենավարման եւ հանգստի ժամերի մինչեւ երկու շաբաթ սահմանափակումներ կան, քանի որ դժվար է ստուգել այդ պահանջներին համապատասխանելիությունը, քանզի տվյալները գրանցվում են մի քանի ամենօրյա գրանցման թերթիկների վրա, ուստի ընթացիկ շաբաթվա եւ նախորդ շաբաթվա վերջին օրվա գրանցման թերթիկները պետք է խցիկում պահվեն,
  
- 6) քանի որ ներկա համակարգի ամենատարածված չարաշահումներին վերջ դնելու համար անհրաժեշտ է ներմուծել նոր առաջադեմ սարքավորումներ, ինչպես, օրինակ՝ այնպիսի ձայնագրող սարքավորումներ, որոնք հագեցած կլինեն համապատասխան տեղեկություն պահելու համար էլեկտրական սարքով եւ անհատական վարորդի քարտերով՝ ապահովելով ձայնագրված տվյալների վերականգնելիությունը, տպելուց հետո ընթեռնելիությունն ու մատչելիությունը եւ հուսալիությունը, ինչպես նաեւ ապահովելով վերջին մի քանի օրերի ընթացքում վարորդի, եւ մի քանի ամսվա ընթացքում ավտոմեքենայի կատարած աշխատանքի վերաբերյալ ճշգրիտ ձայնագրություն,
  
- 7) քանի որ ձայնագրող սարքավորման արդյունավետ աշխատանքի համար համակարգի եւ դրա բաղադրիչների ընդհանուր անվտանգությունը կարելու է,

- 8) քանի որ պետք է հաստատվեն IB հավելվածում նշված հիշողության քարտերի տրամադրման եւ օգտագործման պայմանները կարգավորող դրույթներ,
- 9) քանի որ վարորդների գործողությունների վերաբերյալ տվյալները պետք է հաստատվեն անձամբ վարորդների, նրանց աշխատանքի ընդունած կազմակերպությունների եւ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից, քանի որ, այնուամենայնիվ, միայն իրենց համապատասխան գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը պետք է հասանելի լինի վարորդին եւ իր կազմակերպությանը,
- 10) քանի որ սույն Կանոնակարգում ներկայացված ձայնագրող սարքավորումները պետք է տեղադրվեն այն մեքենաների վրա, որոնք առաջին անգամ շահագործման են հանվել Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում տեխնիկական մասնագրերի հրապարակումից հետո, որոնցից մի քանիսը սահմանված են Հանձնաժողովի կողմից՝ համաձայն կոմիտեի ընթացակարգի, որի մասին նշված է թիվ 3821/85 Կանոնակարգի (ԵՏՀ) 18-րդ հոդվածում, քանի որ անցումային շրջան է հարկավոր, որպեսզի թույլ տրվի, որ նոր ձայնագրող սարքավորումներն արտադրվեն համաձայն այդ տեխնիկական մասնագրերի եւ ստանան ԵՀ բաղադրիչային տեսակի հաստատում,
- 11) քանի որ ցանկալի է, որ IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորումները նաեւ հնարավորություն ստեղծեն, որպեսզի ցածր գներով ընդլայնվի դրանց՝ մեքենաների կազմի կառավարման գործառույթը,
- 12) քանի որ սուբսիդիարության սկզբունքի համաձայն, Համայնքի գործողություններն անհրաժեշտ են՝ թիվ 3821/85 Կանոնակարգը (ԵՏՀ) փոփոխելու համար, որպեսզի ապահովվի IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորումների համատեղելիությունը վարորդի քարտերի հետ եւ որպեսզի ձայնագրող սարքավորումների արժարձած՝ I եւ IB հավելվածներին համապատասխանող տվյալները հաստատուն լինեն,

13) քանի որ տեխնիկական առաջընթացը սույն Կանոնակարգի հավելվածներում սահմանված պահանջների ընդունման անհրաժեշտություն է առաջացնում, քանի որ այս նպատակի համար անհրաժեշտ միջոցների կատարմանն աջակցելու համար այս հավելվածների տեխնիկական համապատասխանության վերաբերյալ դրույթ պետք է նախատեսվի, որը պետք է հաստատվի Հանձնաժողովի կողմից եւ պետք է գործի՝ համաձայն Կոմիտեի աշխատակարգի, որը սահմանվել է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորություններն իրականացնելու համար ընթացակարգեր սահմանող՝ Խորհրդի 1987 թվականի հուլիսի 13-ի թիվ 87/373/ԵՏՀ որոշմամբ,

14) եւ քանի որ նոր ձայնագրող սարքավորումների ներմուծումը նշանակում է, որ թիվ 3820/85 եւ 3821/85 կանոնակարգերի (ԵՏՀ) մասին թիվ 88/599/ԵՏՀ հրահանգի որոշ դրույթներ պետք է փոփոխվեն,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

Թիվ 3821/85 կանոնակարգում (ԵՏՀ) սույնով կատարվում են հետեւյալ փոփոխությունները՝

1. 1-ին հոդվածում «եւ դրա I ու II հավելվածների պահանջներին» բառերը փոխարինվում են «եւ I կամ IB հավելվածներին եւ դրա II հավելվածի» բառերով,

2. 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ եւ 11-րդ հոդվածները պետք է փոփոխվեն՝ ավելացնելով «կամ հիշողության քարտ» բառերն այնտեղ, որտեղ անդրադարձ է կատարվում «գրանցման թերթիկին» կամ «գրանցման թերթիկներին»,

3. 4-րդ հոդվածում հետեւյալ ենթապարբերությունն ավելացնել առաջին ենթապարբերությունից առաջ.

«Սույն գլխի նպատակներով՝ «ձայնագրող սարքավորում» բառերը պետք է նշանակեն «ձայնագրող սարքավորում կամ դրա բաղադրիչները»:

4. 5-րդ հոդվածի առաջին ենթապարբերությունը փոխարինել հետևյալով.

«Անդամ պետությունը պետք է ԵՄ բաղադրիչային տեսակի հաստատում տրամադրի ձայնագրող սարքավորումների ցանկացած տեսակի, ցանկացած գրանցման թերթիկի կամ հիշողության քարտի նմուշի համար, որը համապատասխանում է սույն Կանոնակարգի I եւ IB հավելվածում սահմանված պահանջներին՝ պայմանով, որ անդամ պետությունը հնարավորություն ունենա ստուգելու արտադրական նմուշների համապատասխանությունը հաստատված նախատիպին:

Համակարգի անվտանգությունը պետք է համապատասխանի IB հավելվածում սահմանված տեխնիկական պահանջներին: 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով գործելով՝ Հանձնաժողովն ապահովում է, որ նշված հավելվածում սահմանվի, որ ձայնագրող սարքավորումները չեն կարող ԵՄ բաղադրիչ տեսակի հաստատում ստանալ, քանի դեռ ամբողջ համակարգը (ձայնագրող սարքավորումը, վարորդի քարտը եւ էլեկտրական փոխանցման տուփի միացումները) ցույց չի տվել մեքենավարման ժամանակի վերաբերյալ տվյալներին ապօրինի միջամտելու կամ փոփոխելու փորձերը կանխելու հնարավորություն: Այն ամրապնդելու համար անհրաժեշտ ստուգումներ պետք է կատարվեն ժամանակակից ապօրինի միջամտության տեխնիկաներին ծանոթ փորձագետների կողմից:»:

5. 12-րդ հոդվածում՝

ա) 1-ին պարբերությունը լրացնել հետևյալով.

«Հավաստագրված արհեստանոցի եւ տեղադրողի քարտերի վարչական վավերության ժամկետը չպետք է գերազանցի մեկ տարին:

Եթե հավաստագրված արհեստանոցին կամ տեղադրողին տրամադրված քարտի ժամկետը պետք է երկարաձգվի, այն անսարք է, կորել կամ գողացվել է, ապա պատասխանատու մարմինը պետք է մանրամասն դիմումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում փոխարինող քարտ տրամադրի:

Երբ հին քարտը փոխարինվում է նորով, նոր քարտը պետք է կրի նույն արհեստանոցի տվյալների համարը, սակայն ցուցիչը պետք է մեկով բարձր լինի: Քարտ տրամադրող մարմինը պետք է գրանցի կորած, գողացված կամ վնասված քարտերը:

Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն ցանկացած քայլ՝ կանխելու հավաստագրված արհեստանոցներին եւ տեղադրողներին բաժանված քարտերի կեղծումը:»:

բ) 2-րդ պարբերությունը փոխարինել հետեւյալով.

«2. Հավաստագրված տեղադրողը կամ արհեստանոցը պետք է իր դրած կապարակնիքի վրա հատուկ նշան դնի, ինչպես նաեւ գրանցի ձայնագրող սարքավորումը՝ IB հավելվածի համաձայն, էլեկտրոնային անվտանգության տվյալները՝ օգտագործման համար, մասնավորապես՝ նույնականացման ստուգումները: Յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմինները պետք է գրանցեն օգտագործված նշումները, էլեկտրոնային անվտանգության տվյալները եւ հավաստագրված արհեստանոցներին ու տեղադրողներին տրամադրված քարտերը:»:

գ) 3-րդ պարբերությունը փոխարինել հետեւյալով.

«3. Անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է Հանձնաժողով ուղարկեն հավաստագրված տեղադրողների, արհեստանոցների եւ նրանց տրամադրված քարտերի ցուցակը, ինչպես նաեւ, պետք է ուղարկեն նշումների ու էլեկտրոնային անվտանգությանը վերաբերող օգտագործված համապատասխան տվյալների մասին տեղեկատվության պատճենները:»:

դ) 4-րդ պարբերության «Հավելված I» հղումը փոխարինել «Հավելված I եւ IB» հղումով,

ե) 5-րդ պարբերությունում «կամ IB հավելվածի VI(գ) մասում» բառերը գրել «4-րդ պարբերություն» բառերից հետո,

6. 13-րդ հոդվածին փոխարինում է հետեւյալը՝

*«Հոդված 13*

Գործատուն եւ վարորդը պետք է ապահովեն մի կողմից ձայնագրող սարքավորման, իսկ մյուս կողմից՝ վարորդի քարտի ճիշտ աշխատանքը եւ պատշաճ կիրառությունը, երբ վարորդից պահանջվում է վարել IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորմամբ զինված մեքենա:»:

7. 14-րդ հոդվածում՝

ա) 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Գործատուն պետք է IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորմամբ զինված մեքենաների վարորդներին բավարար թվով գրանցման թերթիկներ հատկացնի՝ չմոռանալով, որ այդ թերթիկները անհատականացված են, ինչպես նաեւ չմոռանալով այդ թերթիկների ծառայողական ժամկետի եւ վնասված կամ լիազոր-տեսուչի կողմից վերցված

թերթիկների փոխարինման հնարավոր պարտականության մասին: Գործատուն պետք է վարորդներին տրամադրի միայն հաստատված ձեռագրի թերթիկներ, որոնք հարմարեցված են՝ մեքենայում տեղադրված սարքավորումներում օգտագործելու համար:

Երբ մեքենայի վրա տեղադրված է IB հավելվածին համապատասխանեցված ձայնագրող սարքավորում, գործատուն եւ վարորդը պետք է հանգզվեն, որ հաշվի առնելով ծառայության ընթացքի երկարությունը՝ ստուգման դեպքում IB հավելվածում նշված դիմումով նյութերի տպումը կարող է ճշգրիտ կատարվել:»:

բ) ավելացնել հետեւյալ պարբերությունը.

«3. IB հավելվածով սահմանված վարորդի քարտը տրամադրվում է վարորդի դիմումի հիման վրա՝ վարորդի սովորական բնակության վայր հանդիսացող անդամ պետության լիազորված մարմնի կողմից:

Անդամ պետությունը կարող է թիվ 3820/85 հավելվածին (ԵՏՀ) ենթակա, իր տարածքում սովորական բնակություն ունեցող վարորդից պահանջել, որ նա վարորդի քարտ ունենա:

ա) Սույն Կանոնակարգի իմաստով՝ «սովորական բնակություն» նշանակում է այն վայրը, որտեղ անձը սովորաբար բնակվում է, այսինքն՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մեջ առնվազն 185 օր, անձնական եւ աշխատանքային կապերի արդյունքում, կամ աշխատանքային կապերի բացակայության դեպքում՝ անձնական կապերի արդյունքում, որը տվյալ անձի եւ իր բնակության վայրի միջեւ սերտ կապ է ենթադրում:

Սակայն, եթե անձի աշխատանքային կապերն առկա են մի վայրում, իսկ անձնական կապերը մեկ այլ վայրում են, եւ ով դրա հետեւանքով հերթականությամբ բնակվում է երկու կամ ավելի անդամ պետությունների տարբեր վայրերում, ապա նրա սովորական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ առկա են իր անձնական կապերը, քանզի այդ անձը պարբերաբար վերադառնում է այդտեղ: Այս վերջին պահանջին համապատասխանելը պարտադիր չէ այն անձի համար, ով բնակվում է որեւէ անդամ պետությունում՝ սահմանված ժամկետով առաջադրանք կատարելու նպատակով:

բ) Վարորդներն իրենց բնակության վայրի վերաբերյալ ապացույց են ներկայացնում ցանկացած պատշաճ եղանակով, ինչպես, օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթով կամ այլ վավեր փաստաթղթով:

գ) Եթե վարորդի քարտ տրամադրող անդամ պետության իրավասու մարմինները կասկածներ ունեն (բ) կետի համաձայն ներկայացված սովորական բնակության վայրին



վերաբերող տեղեկատվության վերաբերյալ կամ որոշակի հատուկ վերահսկողության նպատակով, ապա նրանք կարող են պահանջել ցանկացած լրացուցիչ տեղեկություն կամ ապացույց:

դ) քարտ տրամադրող անդամ պետության իրավասու մարմինները պետք է հնարավորինս համոզվեն, որ դիմորդն արդեն իսկ չունի վարորդի վավեր քարտ:»:

4.

ա) Անդամ պետության իրավասու մարմինը պետք է անհատականացնի վարորդի քարտը՝ համաձայն IB հավելվածի դրույթների:

Վարչական նպատակներից ելնելով՝ վարորդի քարտը չի կարող հինգ տարուց ավելի վավեր լինել:

Վարորդը կարող է միայն մեկ վավեր վարորդի քարտ ունենալ: Վարորդն իրավունք ունի օգտագործելու միայն իր անհատականացված վարորդի քարտը: Վարորդը չի կարող օգտագործել ժամկետանց կամ վարորդի վնասված քարտ:

Երբ հին քարտը փոխարինվում է նորով, նոր քարտը պետք է կրի նույն վարորդի քարտի հատկացման համարը, սակայն ցուցիչը պետք է մեկով բարձր լինի: Վարորդի քարտ տրամադրող մարմինը պետք է գրանցի տրամադրված, գողացված, կորած կամ վնասված քարտերի տվյալները առնվազն այնքան ժամանակով, որքան դրանց վարչական վավերականության ժամկետն է:

Համապատասխան մարմինը վարորդի քարտը վնասվելու, անսարք լինելու, կորելու կամ գողացվելու դեպքում պետք է մանրամասն դիմումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում փոխարինող քարտ տրամադրի:

Այն դեպքում, երբ հայտ է ներկայացվում փոխել հին քարտը, որի վավերականության ժամկետը մոտենում է ավարտին, քարտ տրամադրող մարմինը պետք է նոր քարտ տրամադրի նախքան նախորդի վավերականության ժամկետի ավարտը՝ պայմանով, որ դիմումն ուղարկվել է 15-րդ հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ սահմանված ժամկետում:

բ) վարորդի քարտերը պետք է տրամադրվեն միայն թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) դրույթներին համապատասխանող դիմորդներին:

զ) Վարորդի քարտը պետք է անհատական լինի: Իր պաշտոնական վավերականության ժամկետում քարտերը չեն կարող որեւիցե պատճառով հետ վերցվել կամ դրա գործունեությունը դադարեցվել, բացառությամբ այն դեպքի, երբ որեւէ անդամ պետության իրավասու մարմին բացահայտում է, որ քարտը կեղծվել է կամ վարորդն օգտագործում է մի քարտ, որն իրեն չի պատկանում, կամ որ քարտը ձեռք է բերվել կեղծ հայտարարագրերի եւ (կամ) կեղծ փաստաթղթերի հիման վրա: Եթե այն տրամադրող անդամ պետությունից բացի մեկ այլ անդամ պետություն ձեռնարկում է քարտի գործունեությունը դադարեցնելու կամ հետ վերցնելու նման միջոցներ, ապա վերջինս պետք է քարտը վերադարձնի այն տրամադրած անդամ պետության իշխանություններին եւ պետք է նշի այն վերադարձնելու պատճառները:

դ) Անդամ պետությունների կողմից տրամադրված վարորդի քարտերը պետք է փոխադարձաբար ճանաչվեն:

Եթե վավեր վարորդի քարտի տերը սովորական բնակության վայր է հաստատում մեկ այլ անդամ պետությունում, ապա նա կարող է խնդրել, որ իր քարտը փոխարինվի համազոր վարորդի քարտով: Անհրաժեշտության դեպքում ներկայացված քարտի վավերականությունը ստուգելը փոխանակումն իրականացնող անդամ պետության պատասխանատվությունն է:

Փոխանակում իրականացնող անդամ պետությունները պետք է հին քարտերը վերադարձնեն այն տրամադրած անդամ պետության իշխանություններին եւ նշեն նման ձեռով վարվելու պատճառները:

ե) Եթե որեւէ անդամ պետություն վարորդի քարտ է փոխանակում կամ կրկնօրինակ է տրամադրում, ապա փոխանակումը կամ կրկնօրինակի տրամադրումը, եւ ցանկացած հաջորդ կրկնօրինակների տրամադրումը կամ նորացումը պետք է գրանցվի այդ անդամ պետությունում:

Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխեն վարորդի քարտերի կեղծման ցանկացած հնարավորություն:

5. Անդամ պետությունները պետք է համոզվեն, որ Համայնքում մեխանիկական տրանսպորտային միջոցների որոշ կատեգորիաների համար նախատեսված արագության սահմանափակման սարքավորումների տեղադրման եւ օգտագործման մասին թիվ 3820/85 Կանոնակարգին (ԵՏՀ) եւ Խորհրդի 1992 թվականի փետրվարի 10-ի 93/68/ԵՏՀ հրահանգին համապատասխանության ստուգման համար անհրաժեշտ տվյալները, որոնք ձայնագրվում եւ պահպանվում են սույն Կանոնակարգի IB հավելվածին համապատասխան,

կարող են տրամադրվել ձայնագրման օրվանից առնվազն 365 օր անց, եւ որ կարող են տրամադրվել այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են տվյալների անվտանգությունն ու ճշգրտությունը:

Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն ցանկացած անհրաժեշտ միջոց, որպեսզի համոզվեն, որ ձայնագրող սարքավորումների վերավաճառքը կամ դուրսգրումը չի նվազեցնում, մասնավորապես, սույն պարբերության բավարար կիրառությունը:

8. 15-րդ հոդվածում՝

ա) 1-ին եւ 2-րդ պարբերությունների առաջին ենթապարբերությունը փոփոխվում է՝ «գրանցման թերթիկներ» բառերի փոխարեն ավելացնելով «կամ վարորդի քարտ» բառերը,

բ) 1-ին հոդվածում՝

հետեւյալ ենթապարբերությունն ավելացվում է առաջին պարբերությունից հետո.

—

«Եթե վարորդը ցանկանում է նորացնել իր վարորդի քարտը, նա պետք է դիմի իր սովորական բնակության անդամ պետության իրավասու մարմիններին ոչ ուշ, քան քարտի վավերականության ժամկետը լրանալուց 15 աշխատանքային օր առաջ:»:

ավելացնել հետեւյալ չորրորդ ենթապարբերությունը.

—

«Եթե վարորդի քարտը վնասված է, անսարք է, կորել կամ գողացվել է, ապա վարորդը պետք է կրկնօրինակի տրամադրման համար յոթ օրացուցային օրերի ընթացքում դիմի իր սովորական բնակության անդամ պետության իրավասու մարմիններին:»:

գ) 5-րդ հոդվածից հետո ավելացնել հետեւյալ պարբերությունը.

«5ա. Վարորդը պետք է IB հավելվածին համապատասխան ձայնագրող սարքավորման մեջ մուտքագրի այն երկրների խորհրդանիշները, որոնցում նա սկսում եւ ավարտում է իր ամենօրյա աշխատանքը: Սակայն, անդամ պետությունները կարող են պահանջել, որ իրենց սահմաններում տրանսպորտային աշխատանքներ իրականացնող մեքենաները երկրի խորհրդանիշից բացի ավելացնեն նաեւ առավել մանրամասն աշխարհագրական մասնագրեր՝ պայմանով, որ տվյալ անդամ պետությունն այդ մասնագրերի մասին

տեղեկացրել է Հանձնաժողովին նախքան 1998 թվականի ապրիլի 1-ը, եւ որ դրանց թիվը չի գերազանցում 20-ը:

Վերոնշյալ մուտքագրված տվյալները պետք է ակտիվացվեն վարորդի կողմից եւ կարող են լինել միանգամայն մեխանիկական կամ մեքենայացված, եթե ձայնագրող սարքավորումը միացված է որեւէ արբանյակային վերահսկողության համակարգի:»:

դ) 6-րդ պարբերության առաջին ենթապարբերության սկզբում «սարքավորումներ» բառը փոխարինել «I հավելվածով սահմանված ձայնագրող սարքավորումներ» բառերով,

ե) 7-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7. Եթե վարորդը վարում է I հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորմամբ հագեցած մեքենա, նա պետք է կարողանա պահանջի դեպքում տեսուչին ներկայացնել.

ընթացիկ շաբաթվա եւ, ցանկացած դեպքում, նախորդ շաբաթվա մեքենավարման վերջին օրվա գրանցման թերթիկները,

առկայության դեպքում՝ վարորդի քարտը եւ

տպվածքները IB հավելվածում նշված ձայնագրող սարքավորումից, որոնք վերաբերում են 3-րդ հոդվածի երկրորդ պարբերության ա, բ, գ եւ դ կետերով սահմանված ժամանակահատվածին, եթե նա նման ձայնագրող սարքավորմամբ հագեցած մեքենա է վարել սույն պարբերության առաջին մասով նշված ժամանակահատվածում:

Եթե վարորդը վարում է IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորմամբ հագեցած մեքենա, նա պետք է կարողանա պահանջի դեպքում տեսուչին ներկայացնել.

իրեն պատկանող վարորդի քարտը,

նախորդ ենթապարբերության առաջին մասում նշված՝ I հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորմամբ հագեցած մեքենա վարելու նույն ժամանակահատվածին վերաբերող գրանցման թերթիկները:

Լիազորված տեսուչը կարող է թիվ 3820/85 Կանոնակարգին (ԵՏՀ) համապատասխանելիությունը ստուգել՝ ձայնագրող սարքավորման կամ վարորդի քարտի ձայնագրած տվյալների արտապատկերված կամ տպված գրանցման թերթիկները վերլուծելով կամ, անհամապատասխանելիության դեպքում, վերլուծելով ցանկացած այլ

օժանդակ փաստաթուղթ, որը հիմնավորում է որեւիցե դրույթին չհամապատասխանելը, ինչպես, օրինակ՝ 16-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված փաստաթղթերը:»:

զ) ավելացնել հետեւյալ պարբերությունը՝

«8. Արգելվում է գրանցման թերթիկում, ձայնագրող սարքավորման մեջ, վարորդի քարտի վրայի կամ IB Հավելվածով սահմանված ձայնագրող սարքավորումներից տպվածքների տվյալների կեղծումը, խտացումը կամ վերացումը: Նույնը վերաբերում է ձայնագրող սարքավորումների, գրանցման թերթիկների կամ վարորդի քարտի ցանկացած ձեւափոխման, որը կարող է հանգեցնել տվյալների եւ (կամ) տպված տեղեկատվության կեղծման, խտացման կամ վերացման: Այդպիսի ծառայություն մատուցող ոչ մի սարքավորում չի կարող օգտագործվել մեքենայի վրա:»:

9. 16-րդ հոդվածում՝

ա) 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Եթե ձայնագրող սարքավորումն անսարք է կամ շահագործման համար պիտանի չէ, ապա վարորդները պետք է նշումներ կատարեն գրանցման թերթիկի կամ թերթիկների, կամ մի ժամանակավոր թերթիկի վրա, որը պետք է կցել գրանցման թերթիկին կամ վարորդի քարտին, որտեղ նա պետք է իր անձը հաստատող տվյալներ մուտքագրի (վարորդի քարտի համարը եւ (կամ) անունը, եւ (կամ) վարորդական իրավունքի համարը)՝ ներառյալ իր ստորագրությունը եւ ցանկացած տեղեկատվություն այն ժամանակահատվածների վերաբերյալ, որոնք այլեւս ճշգրիտ չեն ձայնագրվել կամ տպվել ձայնագրող սարքավորման կողմից:

Եթե վարորդի քարտը վնասվել է, անսարք է, կորել է կամ գողացվել, ապա վարորդը պետք է իր ուղեւորության վերջում տպի ձայնագրող սարքավորման գրանցած ժամանակահատվածի տեղեկատվությունը եւ պետք է այդ փաստաթղթի վրա նշի իր անձը հաստատող տվյալները (վարորդի քարտի համարը եւ (կամ) անունը, եւ (կամ) վարորդական իրավունքի համարը)՝ ներառյալ իր ստորագրությունը:»:

բ) ավելացնել հետեւյալ պարբերությունը՝

«3. Եթե վարորդի քարտը վնասվել է կամ անսարք է, վարորդը պետք է այն վերադարձնի իր սովորական բնակության վայր հանդիսացող անդամ պետության իրավասու մարմիններին: Գողացված վարորդի քարտերը ենթակա են պաշտոնական հայտարարագրման այն անդամ պետության իրավասու մարմիններում, որտեղ այն գողացվել է:

Գողացված վարորդի քարտը պետք է պաշտոնապես հայտարարագրվի այն տրամադրած անդամ պետության իրավասու մարմիններում եւ սովորական բնակության անդամ պետության, եթե դրանք տարբեր երկրներ են, իրավասու մարմիններում:

Վարորդը կարող է շարունակել մեքենավարել առանց վարորդի քարտի առավելագույնը 15 օրացուցային օր, կամ ավելի երկար ժամանակով, եթե դա հարկավոր է, որպեսզի մեքենան վերադարձվի իր կայանատեղի՝ պայմանով, որ վարորդը կարող է ապացուցել, որ այդ ժամանակահատվածում քարտն օգտագործելը կամ կրկնօրինակ ձեռք բերելն անհնար է:

Եթե վարորդի սովորական վայր հանդիսացող անդամ պետության իրավասու մարմինները տարբերվում են քարտը տրամադրած իրավասու մարմիններից, եւ եթե վարորդը դիմում է իր սովորական բնակության վայրի իրավասու մարմիններին՝ վարորդի քարտի նորացման, կրկնօրինակի տրամադրման կամ փոխանակման համար, վերջիններս պետք է տեղեկացնեն հին քարտը տրամադրած իրավասու մարմիններին դրա նորացման, կրկնօրինակի տրամադրման կամ փոխանակման հստակ պատճառների մասին:»:

10. 17-րդ հոդվածը փոխարինել հետեւյալով՝

*«Հոդված 17*

1. Այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են՝ հավելվածները տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար, պետք է ընդունվեն՝ 18-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համաձայն:

2. IB հավելվածի հետեւյալ բաժիններին վերաբերող տեխնիկական մասնագրերը պետք է հնարավորինս շուտ ընդունվեն եւ, հնարավորության դեպքում, նույն ընթացակարգով՝ նախքան 1998 թվականի հուլիսի 1-ը.

ա) գլուխ II

դ) 17

—

ձայնագրող սարքավորման սխալների արտապատկերում եւ տպում

դ) 18

—

վարորդի քարտի սխալների արտապատկերում եւ տպում

(դ) 21

—

անփոփ նկարագրի արտապատկերում եւ տպում

բ) գլուխ III

ա) 6.3

—

մեքենաների էլեկտրականության պաշտպանության ստանդարտներ էլեկտրական միջամտման եւ մագնիսական դաշտերից:

ա) 6.5

—

Ամբողջ համակարգի պաշտպանությունը (անվտանգությունը)

գ) 1

—

Ձայնագրող սարքավորման ներքին անսարքությունների մասին նախազգուշացնող ազդանշաններ

գ) 5

—

զգուշացման ձեւաչափերը,

գ)

—

առավելագույն սահմանը

գ) գլուխ IV, Ա

— 4

—

ստանդարտներ,

— 5

—

անվտանգություն՝ ներառյալ տվյալները պահպանելը

— 6

—

ջերմաստիճանի միջակայք

— 8

—

էլեկտրոնային բնութագրեր

— 9

—

վարորդի քարտի տրամաբանական կառուցվածքը

— 10

—

գործառույթներ ու հրահանգներ,

— 11

—

տարրական ֆայլեր,

եւ Գլուխ IV, Բ,

դ) Գլուխ V.

տպիչ եւ ստանդարտ տպվածքներ:»:

11. 18-րդ հոդվածը փոխարինել հետեւյալով՝



### «Հողված 18

1. Եթե անդրադարձ է կատարվում սույն հոդվածով սահմանված ընթացակարգին, ապա Հանձնաժողովին պետք է աջակցի մի կոմիտե, որը բաղկացած է անդամ պետությունների ներկայացուցիչներից եւ որին նախագահում են Հանձնաժողովի ներկայացուցիչները:

2. Հանձնաժողովի ներկայացուցիչը Կոմիտե է ներկայացնում ձեռնարկվելիք միջոցների նախագիծը: Կոմիտեն նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը ներկայացնում է ըստ խնդրի հրատապության՝ նախագահի կողմից սահմանված ժամկետում: Եզրակացությունն ընդունվում է Պայմանագրի 148(2) հոդվածով սահմանված մեծամասնության կողմից այն որոշումների դեպքում, որոնք Խորհուրդը պետք է ընդունի Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա: Կոմիտեի շրջանակներում անդամ պետությունների ներկայացուցիչների ձայները հաշվարկվում են այդ հոդվածով սահմանված կարգով: Նախագահը ձայնի իրավունք չունի:

3.

ա) Հանձնաժողովն ընդունում է նախատեսված միջոցները, եթե դրանք համապատասխանում են կոմիտեի եզրակացությանը:

բ) Եթե նախատեսված միջոցները չեն համապատասխանում կոմիտեի եզրակացությանը, կամ եթե եզրակացություն չի ներկայացվում, ապա Հանձնաժողովը ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ անհապաղ առաջարկ է ներկայացնում Խորհուրդ: Խորհուրդը որոշում է կայացնում ձայների որակյալ մեծամասնությամբ:

Եթե Խորհրդին դիմելուց հետո եռամսյա ժամկետի ավարտին Խորհուրդը որոշում չի կայացրել, ապա առաջարկված միջոցներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից:»:

12. IB հավելվածը, սույն Կանոնակարգի հավելվածին համապատասխան, սույնով ավելացվում է:

### Հողված 2

#### "M2

1.

ա) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 561/2006 (ԵՀ) «Ճանապարհային տրանսպորտին վերաբերող որոշ սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման եւ Խորհրդի թիվ 3821/85 (ԵՏՀ) եւ թիվ 2135/98 (ԵՀ) կանոնակարգերը փոփոխելու մասին» Կանոնակարգի հրապարակման 20-րդ օրվանից սկսած՝ առաջին անգամ շահագործման հանված մեքենաների վրա պետք է թիվ 3821/85 (ԵՏՀ) Կանոնակարգի IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորումներ տեղադրվեն:

#### **▼B**

բ) (ա) ենթապարբերության դրույթներն ուժի մեջ մտնելու օրվանից 10 տոննան գերազանցող քաշով եւ վարորդի նստատեղից բացի ութից ավելի նստատեղերով ուղեւորափոխադրող մեքենաները, ինչպես նաեւ 12 տոննան գերազանցող քաշով ապրանքափոխադրող մեքենաները, սկսած 1996 թվականի հունվարի 1-ից, համապատասխան սարքավորման տեղադրման ժամանակ պետք է բավարարեն թիվ 3821/85 (ԵՏՀ) Կանոնակարգի IB հավելվածի պահանջները, քանզի դրանցում տեղադրված ձայնագրող սարքավորումներին ուղարկվող ազդանշանները բացառապես էլեկտրական են:

#### **▼M2**

2. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն, որպեսզի համոզվեն, որ ի վիճակի են վարորդի քարտեր տրամադրել ամենաուշը թիվ 561/2006 (ԵՀ) կանոնակարգի ընդունման 20-րդ օրը:

#### **▼B**

3. Եթե 1-ին պարբերությունում նշված ակտի հրապարակման օրվանից 12 ամիս անց թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգի IB հավելվածի պահանջներին համապատասխանող որեւիցե ձայնագրող սարքավորման ԵՀ տեսակի հաստատում չի տրամադրվել, ապա Հանձնաժողովը պետք է Խորհուրդ առաջարկ ներկայացնի՝ 1-ին եւ 2-րդ պարբերություններում սահմանված վերջնաժամկետները երկարաձգելու վերաբերյալ:

4. Այն վարորդները, ովքեր նախքան 2-րդ պարբերությամբ սահմանված օրը վարում են թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգի IB հավելվածի պահանջներին համապատասխանող ձայնագրող սարքավորմամբ հագեցած մեքենաներ, որոնց համար իրավասու մարմինները դեռեւս ի վիճակի չեն եղել վարորդի քարտ տրամադրել, պետք է ամենօրյա աշխատաժամանակի վերջում տպեն ձայնագրող սարքավորման միջոցով ձայնագրած՝

տարբեր ժամանակահատվածներին վերաբերող տեղեկատվությունը եւ պետք է տպվածքի վրա նշեն իրենց անձը հաստատող տվյալները (անունն ու վարորդական իրավունքի համարը) եւ ստորագրեն:

### Հոդված 3

88/599/ԵՏՀ հրահանգում կատարվել են հետեւյալ փոփոխությունները՝

1. 3(2) հոդվածը փոխարինվում է հետեւյալով՝

«2. Ճանապարհային ստուգումների տարրերն են՝

օրական մեքենավարման ժամանակահատվածները, ընդմիջումները եւ օրական հանգստի ժամանակը, նաեւ, անսարքությունների ակնհայտ նշանների դեպքում, նախորդ օրվա գրանցման թերթիկները, որոնք պետք է մեքենայի մեջ լինեն՝ համաձայն թիվ 2135/98 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգի 15(7) հոդվածի, եւ (կամ) վարորդի քարտի, եւ (կամ) IB հավելվածին համապատասխանող ձայնագրող սարքավորման հիշողության մեջ գրանցված նույն ժամանակահատվածին վերաբերող տվյալները,

թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգի 15 (7) հոդվածով սահմանված ժամանակահատվածի բոլոր դեպքերը, երբ մեքենայի թույլատրելի արագությունը գերազանցվել է, որը սահմանվում է որպես ցանկացած 1 րոպեն գերազանցող ժամանակահատված, որի ընթացքում N3 կարգի մեքենայի արագությունը գերազանցել է 90 կմ/ժամը, իսկ M3 կարգի մեքենայինը՝ 105 կմ/ժամը (N3 եւ M3 դասերը սահմանված են թիվ 70/156/ԵՏՀ հրահանգի I հավելվածում),

անհրաժեշտության դեպքում՝ նաեւ մեքենայի կարճատեւ արագությունը, որը գրանցվել է ձայնագրող սարքավորման կողմից առավելագույնը մեքենայի շահագործման վերջին 24 ժամվա ընթացքում,

անհրաժեշտության դեպքում՝ վերջին շաբաթական հանգստի ժամանակահատվածը,

ձայնագրող սարքավորման ճիշտ գործունեությունը (սարքավորումների եւ (կամ) վարորդի քարտերի, եւ (կամ) գրանցման թերթիկների հնարավոր սխալ կիրառման հայտնաբերումը) կամ, անհրաժեշտության դեպքում, թիվ 3820/85 (ԵՏՀ) Կանոնակարգի 14 (15) հոդվածում նշված փաստաթղթերի առկայությունը:»:

2. 4(3) հոդվածը փոխարինել հետևյալով՝

«3. Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ իրավասու մարմինների գրասենյակներում, համապատասխան փաստաթղթերի եւ (կամ) գործողությունների արդյունքում տվյալ մարմնի խնդրանքով տրամադրված տվյալների հիման վրա իրականացված ստուգումները պետք է ունենան նույն կարգավիճակը, որն ունեն գործողության վայրի ստուգումները:»:

#### *Հոդված 4*

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակմանը հաջորդող օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն գործում է բոլոր անդամ պետություններում:

**"M1**

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՀԱՎԵԼՎԱԾ I Բ

Պատրաստման, փորձարկման, տեղադրման եւ ստուգման համար ներկայացվող պահանջները

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ...
- II. Ձայնագրող սարքավորումների ընդհանուր բնութագրերն ու գործառույթները...
  1. Ընդհանուր բնութագրերը...
  2. Գործառույթները...
  3. Գործունեության ռեժիմները...
  4. Անվտանգությունը...

---

- III. Ձայնագրող սարքավորումների համար ներկայացվող պատրաստման եւ գործառական պահանջները...

- 
1. Քարտերի տեղադրման եւ հանման վերահսկում...
  2. Արագության եւ տարածության չափումներ...
    - 2.1. Անցած ճանապարհի չափում...
    - 2.2. Արագության չափում...
  3. Ժամանակի չափում...
  4. Վարորդի գործողությունների վերահսկում...
  5. Մեքենավարման կարգավիճակի դիտանցում

6. Վարորդի մեխանիկական մուտքագրումները...
- 6.1. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերի մուտքագրում...
- 6.2. Վարորդի գործողությունների մեխանիկական մուտքագրում...
- 6.3. Առանձնահատուկ պայմանների մուտքագրում...
7. Կազմակերպության ուղեկապերի կառավարումը...
8. Վերահսկման գործողությունների դիտանցումը...
9. Պատահարների եւ (կամ) սխալների հայտնաբերում...
- 9.1. Անվավեր քարտի մուտքարկման դեպք...
- 9.2. Քարտերի անհամատեղելիության դեպք...
- 9.3. Ժամանակի համընկնման դեպք...
- 9.4. Առանց պատշաճ քարտի մեքենավարելու դեպք...
- 9.5. Մեքենավարման ընթացքում քարտի մուտքարկման դեպք...
- 9.6. Վերջին քարտի օգտագործման փուլի սխալ ամփոփման դեպք...
- 9.7. Արագության գերազանցման դեպք...
- 9.8. Հոսանքի մատակարարման ընդհատման դեպք...
- 9.9. Ընթացքի վերաբերյալ տվյալների սխալի դեպք...
- 9.10. Անվտանգության խախտման դեպք...
- 9.11. Քարտի անսարքություն...
- 9.12. Ձայնագրող սարքավորման անսարքություն...
10. Սարքինության ստուգում եւ ինքնաստուգումներ...

11. Վերարժարծում տվյալների հիշողությունից...
12. Ձայնագրում եւ պահպանում տվյալների հիշողության մեջ...
- 12.1. Սարքավորման նույնականացման տվյալներ...
- 12.1.1. Մեքենայի միավորի նույնականացման տվյալներ...
- 12.1.2. Ընթացքի սենսորի նույնականացման տվյալներ...
- 12.2. Անվտանգության տարրեր...
- 12.3. Վարորդի քարտերի տեղադրման եւ հանման վերաբերյալ տվյալներ...
- 12.4. Վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 12.5. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերը...
- 12.6. Վազքաչափի տվյալներ...
- 12.7. Արագության վերաբերյալ մանրամասն տվյալներ...
- 12.8. Պատահած դեպքերի վերաբերյալ տվյալներ...
- 12.9. Անսարքությունների վերաբերյալ տվյալներ...
- 12.10. Չափաբերման տվյալներ...
- 12.11. Ժամանակի համապատասխանեցման տվյալներ...
- 12.12. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 12.13. Կազմակերպության ուղեկապերի վերաբերյալ տվյալներ...
- 12.14. Ներբեռնման գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 12.15. Հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներ...
13. Վերարժարծում պտուտաչափի քարտերից,
14. Պտուտաչափի քարտերի վրա ձայնագրելն ու պահպանելը...

- 15. Արտապատկերում...
- 15.1 Ստանդարտ դիսփլեյ...
- 15.2. Զգուշացման դիսփլեյ...
- 15.3. Մուտք ցանկին...
- 15.4. Այլ դիսփլեյներ...
- 16. Տպել...
- 17. Զգուշացումներ...
- 18. Տվյալների ներբեռնում արտաքին կրիչների վրա...
- 19. Հավելյալ արտաքին սարքավորումներին ելքագրված տվյալներ...
- 20. Չափաբերում...
- 21. Ժամանակի համապատասխանեցում...
- 22. Աշխատանքի կատարման բնութագրեր...
- 23. Նյութերը...
- 24. Նշումները...
- IV. Պտուտաչափի քարտերի համար ներկայացվող պատրաստման եւ գործառական պահանջներ...
- 1. Տեսանելի տվյալները...
- 2. Անվտանգությունը...
- 3. Չափանիշները...
- 4. Շրջակա միջավայրի եւ էլեկտրական մասնագրերը...
- 5. Տվյալների պահում...



- 5.1. Քարտի նույնականացման եւ անվտանգության տվյալներ...
- 5.1.1. Գործածման նույնականացում...
- 5.1.2. Չիպի նույնականացում...
- 5.1.3. Ինտեգրացված միացման քարտերի նույնականացում...
- 5.1.4. Անվտանգության տարրեր...
- 5.2. Վարորդի քարտ...
- 5.2.1. Քարտի նույնականացում...
- 5.2.2. Քարտատիրոջ նույնականացում...
- 5.2.3. Վարորդական իրավունքի տվյալները...
- 5.2.4. Շահագործված մեքենաների տվյալներ...
- 5.2.5. Վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.2.6. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերը...
- 5.2.7. Պատահարների վերաբերյալ տվյալներ...
- 5.2.8. Անսարքությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.2.9. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.2.10. Քարտային փուլի տվյալներ...
- 5.2.11. Հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներ...
- 5.3. Արհեստանոցի քարտ...
- 5.3.1. Անվտանգության տարրեր...
- 5.3.2. Քարտի նույնականացում...
- 5.3.3. Քարտատիրոջ նույնականացում...

- 5.3.4. Շահագործված մեքենաների տվյալներ...
- 5.3.5. Վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.3.6. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վերաբերյալ տվյալներ...
- 5.3.7. Պատահարների եւ անսարքությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.3.8. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.3.9. Չափաբերման եւ ժամանակի համապատասխանեցման տվյալներ...
- 5.3.10. Հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներ...
- 5.4. Վերահսկման քարտ...
- 5.4.1. Քարտի նույնականացում...
- 5.4.2. Քարտատիրոջ նույնականացում...
- 5.4.3. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ...
- 5.5. Կազմակերպության քարտ...
- 5.5.1. Քարտի նույնականացում...
- 5.5.2. Քարտատիրոջ նույնականացում...
- 5.5.3. Կազմակերպության գործունեության վերաբերյալ տվյալներ...
- V. Ձայնագրող սարքավորումների տեղադրում...
- 1. Տեղադրում...
- 2. Տեղադրման պիտակ...
- 3. Կապարակնքում...
- VI. Ստուգում, զննություն եւ վերանորոգում...

1. Տեղադրողների եւ արհեստանոցների հաստատում...
  2. Նոր կամ վերանորոգված գործիքների ստուգում...
  3. Տեղադրման ստուգում...
  4. Պարբերական ստուգումներ...
  5. Սխալների չափում...
  6. Վերանորոգում...
- VII. Քարտի տրամադրում...
- VIII. Ձայնագրող սարքավորումների եւ պտուտաչափի քարտերի տեսակի հաստատում...
1. Ընդհանուր կետեր...
  2. Անվտանգության հավաստագիր...
  3. Գործառական հավաստագիր...
  4. Համաօգտագործելիության հավաստագիր...
  5. Տեսակի հաստատման վկայական...
  6. Բացառիկ աշխատակարգեր. առաջին համաօգտագործելիության փորձաստուգում...
- ՀԱՎԵԼՎԱԾ 1 Տվյալների բառարան...
- ՀԱՎԵԼՎԱԾ 2 Պտուտաչափի քարտի մասնագրեր
- ՀԱՎԵԼՎԱԾ 3 Գծապատկերներ
- ՀԱՎԵԼՎԱԾ 4 Տվյալներ
- ՀԱՎԵԼՎԱԾ 5 Դիսփլեյ (էկրան)

ՀԱՎԵԼՎԱԾ 6 Արտաքին միջերեսներ

ՀԱՎԵԼՎԱԾ 7 Տվյալների ներբեռնման կարգ

ՀԱՎԵԼՎԱԾ 8 Չափաբերման կարգ

ՀԱՎԵԼՎԱԾ 9 Տեսակի հաստատում. նվազագույն պահանջի թեստերի ցանկ

ՀԱՎԵԼՎԱԾ 10 Անվտանգության ընդհանուր թիրախներ

ՀԱՎԵԼՎԱԾ 11 Ընդհանուր անվտանգության մեխանիզմներ

## I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն հավելվածում՝

ա) «ակտիվացում» նշանակում է՝

Փուլ, որում ձայնագրող սարքավորումը դառնում է միանգամայն գործունե և կիրառում է բոլոր գործառույթները՝ ներառյալ անվտանգության գործառույթը,

*Ձայնագրող սարքավորման ակտիվացումը պահանջում է արհեստանոցի քարտի կիրառում և դրա PIN ծածկագրի մուտքագրում,*

բ) «նույնականացում» նշանակում է՝ գործառույթ, որի նպատակն է հաստատել և ստուգել յուրաքանչյուր պահանջված ինքնություն,

գ) «իսկություն» նշանակում է՝ հատկանիշ՝ համաձայն որի տեղեկատվությունը ստացվում է այնպիսի աղբյուրից, որի ինքնությունը հնարավոր է ստուգել,

դ) «ներկառուցված թեստ» նշանակում է՝ թեստ, որն իրականացվում է օպերատորի կամ արտաքին սարքավորման պահանջի դեպքում,

ե) «օրացուցային օր» նշանակում է՝ օր, որն սկսվում է ժամը 00:00-ին եւ ավարտվում է ժամը 24:00-ին: Բոլոր օրացուցային օրերը հաշվարկվում են համաշխարհային կոորդինացված ժամանակով (Յու Թի Սի UTC)

զ) «չափաբերում» նշանակում է՝

մեքենայի պարամետրերի թարմացում կամ հաստատում՝ տվյալների հիշողությունում պահվելու համար: Մեքենայի պարամետրերը ներառում են մեքենայի նույնականացումը (մեքենայի նույնականացման համարը, մեքենայի գրանցման համարն ու գրանցող անդամ պետության անվանումը) եւ մեքենայի բնութագրերը (w, k, l, անվադողի չափը, առկայության դեպքում՝ արագությունը սահմանափակող սարքավորման կարգավորումները, ներկա Յու Թի Սի ժամը, վազքի ցուցիչի ներկա ցուցմունքը),

*ձայնագրող սարքավորման չափագրումը պահանջում է արհեստանոցի քարտի կիրառում,*

է) «քարտային համար» նշանակում է՝

16 տառաթվային նիշերով համարը, որն անհատականաբար նույնականացնում է պտուտաչափի քարտն անդամ պետությունների սահմաններում: Քարտային համարը ներառում է մի հաջորդական ցուցիչ (առկայության դեպքում), փոխարինման ցուցիչ եւ նորացման ցուցիչ,

ուստի, քարտն անհատականաբար նույնականացվում է քարտը տրամադրած անդամ պետության կողով եւ քարտային համարով,

ը) «քարտային հաջորդական ցուցիչ» նշանակում է՝ քարտային համարի 14-րդ տառաթվային նիշը, որն օգտագործվում է՝ տարաբնույթ պտուտաչափային քարտեր տրամադրելու համար իրավասու կազմակերպությանը կամ մարմնին տրամադրած տարբեր քարտերի տարբերակման համար: Կազմակերպությունը կամ մարմինն անհատականացվում է քարտային համարի առաջին 13 նիշերով,

թ) «քարտային նորացման ցուցիչ» նշանակում է՝ քարտային համարի 16-րդ տառաթվային նիշը, որը մեկով աճում է՝ ամեն անգամ, երբ պտուտաչափի քարտը նորացվում է,

ժ) «քարտային փոխարինման ցուցիչ» նշանակում է՝ քարտային համարի 15-րդ ալֆանյումերիկ նիշը, որը մեկով աճում է՝ ամեն անգամ, երբ պտուտաչափի քարտը փոխարինվում է,

ժա) «մեքենայի բնութագրական գործակից» նշանակում է՝ այն թվային բնութագիրը, որը ցույց է տալիս ելքային ազդանշանի այն արժեքը, որն արտաբերվում է ձայնագրող սարքավորմանը միացված մեքենայի մասից (փոխանցման տուփի ելքային լիսեռ կամ առնի), երբ մեքենան ստանդարտ փորձարկման պայմաններում անցնում է մեկ կիլոմետր տարածություն (տե՛ս VI(5) գլուխը): Բնութագրական գործակիցն արտահայտվում է մեկ կիլոմետրին վազքի համար հրումների թվով ( $w = \dots$ հրում/կմ),

ժբ) «կազմակերպության քարտ» նշանակում է՝

պտուտաչափի քարտ, որը տրվում է անդամ պետության իշխանությունների կողմից ձայնագրող սարքավորումներից հագեցած մեքենատիրոջը կամ շահագործողին,

*կազմակերպության քարտը նույնականացնում է կազմակերպությունը եւ թույլ է տալիս կազմակերպության կողմից կնքված ձայնագրող սարքավորման պահպանած տվյալների արտապատկերումը, ներբեռնումն ու տպումը,*

ժգ) «ձայնագրող սարքավորման հաստատուն մեծություն» նշանակում է թվային բնութագիր, որը տալիս է մուտքային ազդանշանի արժեքը, որը պահանջվում է անցած մեկ կիլոմետր հեռավորությունը ցույց տալու եւ գրանցելու համար. այս հաստատուն մեծությունը արտահայտվում է մեկ կիլոմետր վազքի համար հրումների թվով ( $k = \dots$ հրում/կմ),

ժդ) «անընդհատ մեքենավարման ժամանակը» հաշվարկվում է ձայնագրող սարքավորման

մեջ որպես՝ անընդհատ մեքենավարման ժամանակը հաշվարկվում է՝ որպես տվյալ վարորդի առկա կուտակային մեքենավարման ժամանակ՝ սկսված նրա վերջին ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ կամ ԸՆԴՄԻՋՄԱՆ, կամ ԱՆՀԱՅՏ 45 թույլ կամ ավելի ժամանակահատվածը (այս ժամանակահատվածը կարող է բաժանվել մի քանի 15 թույլ կամ ավելի ժամանակահատվածների): Կիրառվող հաշվարկներով հաշվի են առնվում, ըստ անհրաժեշտության, վարորդի քարտի վրա պահպանված վերջին գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Եթե վարորդը քարտը չի տեղադրել, ապա հաշվարկները կատարվում են՝ համաձայն այն տվյալների հիշողության գրանցումների, որոնք վերաբերում են առանց քարտի մեքենավարման ներկա ժամանակահատվածին եւ համապատասխան մասնաբաժնին,

ժե) «վերահսկման քարտ» նշանակում է՝

Պտուտաչափի քարտ, որը տրվում է որեւէ ազգային իրավասու վերահսկող մարմնի՝ անդամ պետության իշխանությունների կողմից,

*վերահսկման քարտով նույնականացվում են վերահսկող մարմինը թերեւս, նաեւ վերահսկող անձը եւ տվյալների հիշողության կամ վարորդի քարտի վրա պահպանված տվյալները հասանելի են դառնում՝ կարդալու, տպելու եւ (կամ) ներբեռնելու համար:*

ժզ) «կուտակային ընդմիջման ժամանակը» հաշվարկվում է ձայնագրող սարքավորման մեջ որպես՝

մեքենավարման ընթացքում կուտակային ընդմիջման ժամանակը հաշվարկվում է՝ որպես տվյալ վարորդի ներկա կուտակային ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ կամ ԸՆԴՄԻՋՄԱՆ կամ ԱՆՀԱՅՏ 15 թույլ կամ ավելի ժամանակահատվածները՝ սկսված նրա վերջին ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ կամ ԸՆԴՄԻՋՄԱՆ կամ ԱՆՀԱՅՏ 45 թույլ կամ ավելի ժամանակահատվածը (այս ժամանակահատվածը կարող է բաժանվել մի քանի 15 թույլ կամ ավելի ժամանակահատվածների)

Կիրառվող հաշվարկներով հաշվի են առնվում, ըստ անհրաժեշտության, վարորդի քարտի վրա պահպանված վերջին գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Երկու տարբեր ձայնագրող սարքավորումների միջեւ ժամանակի համընկնման շնորհիվ ստեղծված բացասական արժեքով անհայտ ժամանակահատվածները (անհայտ

ժամանակահատվածի սկիզբ > անհայտ ժամանակահատվածի ավարտ) հաշվարկի համար չեն դիտարկվում:

Եթե վարորդը քարտը չի տեղադրել, ապա հաշվարկները կատարվում են այն տվյալների հիշողության գրանցումների համաձայն, որոնք վերաբերում են առանց քարտի մեքենավարման ներկա ժամանակահատվածին եւ համապատասխան մասնաբաժնին,

ժէ) «տվյալների հիշողություն» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման մեջ ներկառուցված էլեկտրական տվյալների պահպանման սարք,

ժը) «էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է՝ տվյալների խմբին ավելացված մյուս տվյալները կամ դրա կրիպտոգրաֆիկական ձեւափոխումը, որը թույլ է տալիս տվյալների խմբի ստացողին հաստատել տվյալների խմբի իսկությունն ու ամբողջականությունը,

ժթ) «ներբեռնում» նշանակում է՝

էլեկտրոնային ստորագրությամբ տվյալների մասնակի կամ ամբողջական խմբի կրկնօրինակումը, որը պահպանված է մեքենայի տվյալների հիշողության կամ պտուտաչափի քարտի հիշողության մեջ,

*ներբեռնումը չի կարող փոփոխել կամ ջնջել որեւէ պահպանված տվյալ,*

ի) «վարորդի քարտ» նշանակում է՝

պտուտաչափի քարտ, որը որեւէ անդամ պետության իշխանությունների կողմից տրվում է վարորդին,

*վարորդի քարտով նույնականացվում է վարորդը եւ հնարավոր է դառնում վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալների պահպանումը,*

իա) «անվադողերի արդյունավետ շրջանագծի երկարություն» նշանակում է՝



փոխադրամիջոցը տեղաշարժող յուրաքանչյուր անիվի (շարժաբեր անիվներ) անցած միջին հեռավորությունը մեկ ամբողջական պտույտի ժամանակ: Այս հեռավորությունների չափումը կատարվում է ստանդարտ փորձարկման պայմաններում ( VI(5) գլուխ) եւ արտահայտվում է՝ որպես «l = ...մմ» Մեքենաշինական ընկերությունները կարող են փոխարինել այս հեռավորությունների չափումները տեսական հաշվարկներով, որոնք հաշվի են առնում առնինների վրա քաշի բաշխումը, աշխատանքային նորմալ վիճակում մեքենայի սեփական քաշը: Նման տեսական հաշվարկման մեթոդները հաստատվում են անդամ պետության իրավասու մարմնի կողմից,

իբ) «պատահար» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման կողմից բացահայտված ոչ նորմալ գործունեություն, որը կարող է կեղծարարության փորձի արդյունք լինել,

իգ) «անսարքություն» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման կողմից բացահայտված ոչ նորմալ գործունեություն, որը կարող է սարքավորման անսարքության կամ ծախողման հետեւանք լինել,

իդ) «տեղադրում» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման տեղադրումը մեքենայի մեջ,

իե) «շարժման սենսոր» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման այն հատվածը, որը մեքենայի արագության եւ (կամ) անցած ճանապարհի վերաբերյալ ազդանշաններ է տալիս,

իզ) «անվավեր քարտ» նշանակում է՝ քարտ, որն անսարք է ճանաչվել կամ որի նախնական իսկությունը ծախողվել է, կամ որի վավերականության ժամկետը դեռ չի սկսվել, կամ որի վավերականության ժամկետն անցել է,

իէ) «շրջանակներից դուրս» նշանակում է՝ երբ համաձայն Խորհրդի թիվ 3820/85 (ԵՏՀ)

Կանոնակարգի՝ ձայնագրող սարքավորման կիրարկումը պահանջված չէ,

իը) «արագության գերազանցում» նշանակում է՝ մեքենայի թույլատրելի արագության գերազանցում, որը սահմանված է՝ որպես ցանկացած 60 վայրկյանից ավելի ժամանակահատված, որի ընթացքում մեքենայի արագությունը գերազանցում է արագության սահմանափակման սարքավորման տեղադրման սահմանը, որը սահմանված է Խորհրդի՝ «Համայնքում որոշակի կատեգորիաների ավտոմեքենաների համար արագության սահմանափակման սարքավորումների տեղադրման եւ օգտագործման մասին» 92/6/ԵՏՀ 1992 թվականի փետրվարի 10-ի հրահանգով,

իթ) «պարբերական զննումներ» նշանակում է՝ գործողությունների խումբ, որով հսկվում է, որ ձայնագրող սարքավորումը պատշաճորեն աշխատի, եւ որ դրա կարգավորումները համապատասխանում են մեքենայի պարամետրերին,

լ) «տպիչ» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման բաղադրիչ, որը պահպանված տվյալների տպված տարբերակներն է տալիս,

լա) «ձայնագրող սարքավորում» նշանակում է՝ ճանապարհային փոխադրամիջոցներում տեղադրման համար նախատեսված ամբողջական սարքավորում, որն ավտոմատ եւ կիսաավտոմատ կերպով ցույց է տալիս, ձայնագրում ու գրանցում է այդ փոխադրամիջոցների տեղաշարժման եւ դրանց վարորդների աշխատանքային որոշակի ժամերի վերաբերյալ մանրամասներ,

լբ) «նոր քարտի տրամադրում» նշանակում է՝ նոր պտուտաչափի քարտի տրամադրում, երբ գոյություն ունեցող քարտը հասնում է իր վավերականության ժամկետի ավարտին կամ թերի է աշխատում եւ վերադարձվել է այն տրամադրած մարմիններին: Նոր քարտի տրամադրմամբ միշտ ենթադրվում է, որ վստահաբար միաժամանակ գոյություն չունեն երկու վավեր քարտեր,

լգ) «վերանորոգում» նշանակում է՝ շարժման սենսորի կամ մեքենայի միավորի որեւէ վերանորոգում, որը պահանջում է, որ դրա հոսանքի մատակարարումն անջատվի կամ այն բացվի, կամ անջատվի ձայնագրող սարքավորման այլ բաղադրիչներից,

լդ) «փոխարինում» նշանակում է՝ կորած, գողացված կամ անսարք ճանաչված եւ այն տրամադրած մարմիններին չվերադարձված՝ գոյություն ունեցող քարտի փոխարեն նոր պտուտաչափի քարտի տրամադրում: Փոխարինման դեպքում միշտ վտանգ կա, որ միաժամանակ կարող են երկու վավեր քարտեր գոյություն ունենալ,

լե) «անվտանգության հավաստագրում» նշանակում է՝ Եվրոպայի տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության գնահատման չափորոշիչների հավաստագրման մարմնի կողմից ուսումնասիրվող ձայնագրող սարքավորման (կամ բաղադրիչների) կամ պտուտաչափի քարտի՝ 10-րդ հավելվածի Անվտանգության ընդհանուր թիրախներով սահմանված անվտանգության պահանջներին համապատասխանելիության հավաստագրման գործընթաց,

լզ) «ինքնաստուգում» նշանակում է՝ ձայնագրող սարքավորման կողմից պարբերաբար եւ ավտոմատ կերպով արված ստուգումներ, որոնց նպատակն անսարքությունների հայտնաբերումն է,

լէ) «պտուտաչափի քարտ» նշանակում է՝

սմարթ քարտեր՝ որոնք նախատեսված են ձայնագրող սարքավորման հետ օգտագործելու համար: Պտուտաչափի քարտերը թույլ են տալիս ձայնագրող սարքավորման կողմից քարտատիրոջ ինքնության (կամ ինքնության խմբի) նույնականացումը եւ տվյալների փոխանցումն ու պահպանումը: Պտուտաչափի քարտերը կարող են հետեւյալ տեսակների լինել՝

- վարորդի քարտ,

- վերահսկման քարտ,

- արհեստանոցի քարտ,
- կազմակերպության քարտ,

լը) «տեսակի հաստատում» նշանակում է՝ անդամ պետության կողմից՝ ուսումնասիրվող ձայնագրող սարքավորման (կամ բաղադրիչների) կամ պտուտաչափի քարտի՝ սույն Կանոնակարգի պահանջներին համապատասխանելիության հավաստագրման գործընթաց,

լթ) «անվադողի չափս» նշանակում է՝ անվադողերի եզրաչափերի (արտաքին մեքենավարման անիվների) արժեքը՝ համաձայն 92/23/ԵՏՀ 1992 թվականի մարտի 31-ի հրահանգի,

խ) «մեքենայի նույնականացում» նշանակում է՝ մեքենայի նույնականացման թվերը. մեքենայի գրանցման համարը՝ նշելով գրանցող անդամ պետությունը, եւ մեքենայի նույնականացման համարը,

խա) «մեքենայի միավոր» նշանակում է՝ ձայնագրող սարքավորումը՝ չհաշված շարժման սենսորը եւ շարժման սենսորը միացնող մալուխները: Մեքենայի միավորը կարող է լինել մեկ միավոր կամ մեքենայի վրա տեղաբաշխված մի քանի միավորներ՝ պայմանով, որ այն համապատասխանում է սույն կանոնակարգման անվտանգության պահանջներին,

խբ) ձայնագրող սարքավորման հաշվարկային նպատակներով՝ «շաբաթ» նշանակում է՝ Յու Թի Սի ժամանակով երկուշաբթի օրվա ժամը 00:00-ից մինչեւ կիրակի օրվա ժամը 24:00-ն ընկած ժամանակահատվածը,

խգ) «արհեստանոցի քարտ» նշանակում է՝

անդամ պետության իշխանությունների կողմից տվյալ անդամ պետության կողմից հաստատված ձայնագրող սարքավորումներ արտադրողին, տեղադրողին, ավտոմեքենա արտադրողին կամ արհեստանոցին տրամադրված պտուտաչափի քարտ:

*Արհեստանոցի քարտը նույնականացնում է քարտատիրոջը եւ թույլ է տալիս ձայնագրող սարքավորման ստուգումը, չափաբերումը եւ (կամ) ներբեռնումը:*

## **II. Ձայնագրող սարքավորումների ընդհանուր բնութագրերն ու գործառույթները**

Յուրաքանչյուր ավտոմեքենա, որի վրա տեղադրված է սույն հավելվածի դրույթներին համապատասխանող ձայնագրող սարքավորում, պետք է ներառի արագության դիսփլեյ եւ վազքի ցուցիչ: Սույն գործառույթները պետք է ներառվեն ձայնագրող սարքավորման մեջ:

### **1. Ընդհանուր բնութագրերը**

Ձայնագրող սարքավորման գործառույթը վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալները ձայնագրելը, պահպանելը, արտապատկերելը, տպելը եւ տրամադրելն է:

Ձայնագրող սարքավորումը ներառում է մալուխներ, շարժման սենսոր եւ մեքենայի միավոր:

Մեքենայի միավորը ներառում է տվյալների մշակման միավոր, տվյալների հիշողություն, ժամացույց, երկու սմարթ քարտերի բնիկներ (վարորդի եւ վարորդի օգնականի), տպիչ սարք, էկրան, տեսողական նախազգուշացում, չափաբերման/ներբեռնման միակցիչներ եւ օգտագործողի նշումների մուտքագրման հարմարանքներ:

Ձայնագրող սարքավորումը կարող է հավելյալ միակցիչներով միացվել այլ սարքերի:

Ցանկացած հաստատված կամ այլ գործառույթի, սարքավորման կամ սարքավորումների ներառումը կամ միակցումը ձայնագրող սարքավորմանը չի կարող միջամտել կամ ունակ լինել միջամտելու ձայնագրող սարքավորման պատշաճ եւ անվտանգ աշխատանքին ու Կանոնակարգի դրույթներին:

Ձայնագրող սարքավորումներն օգտագործողները սարքավորման համար հաստատում են իրենց ինքնությունը պտուտաչափի քարտերի միջոցով:

Ձայնագրող սարքավորումը տվյալների եւ գործառույթների հասանելիության տարբերակված իրավունք է տալիս՝ կախված օգտագործողի տեսակից եւ (կամ) ինքնությունից:

Ձայնագրող սարքավորումը ձայնագրում եւ պահպանում է տվյալներն իր տվյալների հիշողության եւ պտուտաչափի քարտի մեջ:

Սա արվում է՝ համաձայն «Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգի:

## **2. Գործառույթները**

Ձայնագրող սարքավորումը պետք է ապահովի հետեւյալ գործառույթները.

- քարտերի տեղադրման եւ հանման վերահսկում,
- արագության եւ տարածության չափումներ,
- ժամանակի չափում,
- վարորդի գործողությունների վերահսկում,
- մեքենավարման կարգավիճակի դիտանցում,
- վարորդի մեխանիկական մուտքագրումները՝  
—
- ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերի մուտքագրում,
- վարորդի գործողությունների մեխանիկական մուտքագրում,
- առանձնահատուկ պայմանների մուտքագրում
- կազմակերպության ուղեկապերի կառավարում,
- վերահսկման գործողությունների դիտանցում,
- պատահարների եւ (կամ) սխալների հայտնաբերում,
- սարքիչնության ստուգում եւ ինքնաստուգում,
- վերարձածում տվյալների հիշողությունից,

- ձայնագրում եւ պահպանում տվյալների հիշողության մեջ,
- վերարձաձում պտուտաչափի քարտերից,
- պտուտաչափի քարտերի վրա ձայնագրումն ու պահպանումը,
- արտապատկերում,
- տպել,
- զգուշացում,
- տվյալների ներբեռնում արտաքին կրիչների վրա,
- հավելյալ արտաքին սարքավորումներին ելքագրված տվյալներ,
- չափաբերում,
- ժամանակի համապատասխանեցում:

### **3. Գործունեության ռեժիմները**

Ձայնագրող սարքավորումը պետք է ունենա գործունեության չորս ռեժիմ՝

- շահագործման ռեժիմ,
- վերահսկման ռեժիմ,
- չափաբերման ռեժիմ,
- կազմակերպության ռեժիմ:

Ձայնագրող սարքավորումը կարող է անցնել հետեւյալ գործունեության ռեժիմին՝ ըստ քարտի տեղադրման սարքավորման մեջ մտցված վավեր պտուտաչափի քարտի.

Գործունեության ռեժիմ		Վարորդի քարտի բնիկ				
		Առանց քարտ	Վարորդի քարտ	Վերահսկման քարտ	Արհեստանոցի քարտ	Կազմակերպության քարտ
Վարորդի օգնականի բնիկ	Առանց քարտ	շահագործման	շահագործման	վերահսկման	չափաբերման	կազմակերպության
	Վարորդի քարտ	շահագործման	շահագործման	վերահսկման	չափաբերման	կազմակերպության
	Վերահսկման քարտ	վերահսկման	վերահսկման	վերահսկման	շահագործման	շահագործման
	Արհեստանոցի քարտ	չափաբերման	չափաբերման	շահագործման	չափաբերման	շահագործման
	Կազմակերպության քարտ	կազմակերպության	կազմակերպության	շահագործման	շահագործման	կազմակերպության

Սույն իրավիճակներում ձայնագրող սարքավորումը պետք է օգտագործի միայն վարորդի բնիկում տեղադրված պտուտաչափի քարտը:



Ձայնագրող սարքավորումը պետք է անտեսի մտցված անվավեր քարտերը՝ բացառությամբ ժամկետանց քարտերի վրայի տվյալների արտապատկերման, տպման կամ ներբեռնման, որը հնարավոր է:

II.2.-ում նշված բոլոր գործառույթները պետք է գործեն շահագործման ցանկացած ռեժիմում՝ հետեւյալ բացառություններով.

- չափաբերման գործառույթը հասանելի է միայն չափաբերման ռեժիմում,
- ժամանակի համապատասխանեցման գործառույթը չափաբերման ռեժիմից դուրս սահմանափակ է,
- վարորդի մեխանիկական մուտքագրումների գործառույթները հասանելի են միայն շահագործման եւ չափաբերման ռեժիմներում,
- կազմակերպության ուղեկապերի կառավարման գործառույթը հասանելի է միայն կազմակերպության ռեժիմում,
- վերահսկման գործողությունների դիտանցման գործառույթն ակտիվ է միայն վերահսկման ռեժիմում,
- ներբեռնման գործառույթը շահագործման ռեժիմում հասանելի չէ (բացառությամբ 150-րդ պահանջով նախատեսված դեպքերի)

Ձայնագրող սարքավորման միջոցով կարող է էկրանին, տպիչին կամ արտաքին սարքերին տրամադրվել ցանկացած տվյալ՝ բացառությամբ հետեւյալի.

- շահագործման ռեժիմում՝ ցանկացած անձնական նույնականացման տվյալ (անուններ եւ ազգանուններ), որը չի համապատասխանում մտցված պտուտաչափի քարտին, պետք է փակվի, եւ ցանկացած քարտային համար, որը չի համապատասխանում պտուտաչափի քարտին, պետք է մասնակիորեն փակվի (փակել ձախից աջ բոլոր կենտ նիշերը),- կազմակերպության ռեժիմում վարորդին վերաբերող տվյալները (081, 084 եւ 087 պահանջներ) կարող են տրամադրվել միայն այն ժամանակահատվածի համար, որը կազմակերպության կողմից արգելափակված չէ (արտահայտված կազմակերպության քարտի համարի առաջին 13 թվերով)
- եթե ձայնագրող սարքավորման մեջ ոչ մի քարտ տեղադրված չէ, ապա վարորդին վերաբերող տվյալները կարելի է ստանալ միայն տվյալ եւ նախորդ ութ օրացուցային օրերի համար:

#### **4. Անվտանգությունը**

Համակարգի անվտանգության նպատակը տվյալների հիշողությունն այնպես պաշտպանելն է, որ կանխվեն չարտոնված մուտքերը տվյալներին ու դրանց փոփոխությունը եւ, որպեսզի բացահայտվեն ցանկացած նմանատիպ փորձերը՝ պաշտպանելով շարժման սենսորի եւ մեքենայի միավորի միջեւ փոխանակվող տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը, պաշտպանելով ձայնագրող սարքավորումների եւ պտուտաչափի քարտերի միջեւ փոխանակվող տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը եւ ստուգելով ներբեռնված տվյալների ամբողջականությունն ու ճշգրտությունը:

Որպեսզի համակարգի անվտանգությունն իրականացվի, ձայնագրող սարքավորումները պետք է բավարարեն անվտանգության պահանջները, որոնք հստակեցված են շարժման սենսորի եւ մեքենայի միավորների ընդհանուր անվտանգության թիրախներով ( 10-րդ հավելված):

### **III. Ձայնագրող սարքավորումների համար ներկայացվող պատրաստման եւ գործառական պահանջներ**

#### **1. Քարտերի տեղադրման եւ հանման դիտանցում**

Ձայնագրող սարքավորումը դիտանցում է քարտերի համար նախատեսված սարքերը, որպեսզի արձանագրի քարտերի տեղադրման եւ հանման դեպքերը:

Քարտի տեղադրման դեպքում ձայնագրող սարքն արձանագրում է, արդյոք տեղադրված քարտը վավեր պտուտաչափի քարտ է, եւ նման դեպքում ճանաչում է քարտի տեսակը:

Ձայնագրող սարքավորումները պետք է այնպես ձեւավորված լինեն, որ պտուտաչափի քարտերը, սարքավորման մեջ պատշաճ կերպով տեղադրվելու դեպքում, ֆիքսվեն տվյալ դիրքում:

Պտուտաչափի քարտերը կարող են հեռացվել միայն այն դեպքում, երբ մեքենան կանգնած է, եւ համապատասխան տվյալները պահպանվել են քարտերի վրա: Քարտի հեռացումը օգտագործողի կողմից ուղղակի գործողություն է պահանջում:

## **2. Արագության եւ տարածության չափումներ**

Սույն գործառույթի միջոցով պետք է անընդհատ չափումներ կատարվեն, եւ հնարավոր լինի տրամադրել մեքենայի անցած ընդհանուր տարածության վերաբերյալ վազքաչափի ցուցմունքը:

Սույն գործառույթի միջոցով պետք է անընդհատ չափումներ կատարվեն, եւ հնարավոր լինի տրամադրել մեքենայի արագության տվյալներ:

Արագության չափման գործառույթի միջոցով պետք է նաեւ տեղեկատվություն տրամադրվի այն մասին, թե արդյոք մեքենան ընթացքի մեջ է, թե կանգնած է: Համարվում է, որ ավտոմեքենան ընթանում է, հենց որ գործառույթը շարժման սենսորից առնվազն հինգ վայրկյանի ընթացքում արձանագրում է ավելի քան 1 հրում/վայրկյան: Այլապես համարվում է, որ ավտոմեքենան կանգնած է:

Արագությունն ու անցած ճանապարհը ցույց տվող սարքերը, որոնք տեղադրված են սույն Կանոնակարգի դրույթներին համապատասխանող ծայնագրող սարքավորմամբ հագեցած ցանկացած մեքենայի վրա, պետք է համապատասխանեն սույն հավելվածով ( III(2) եւ III(2)(2) գլուխներ) սահմանված առավելագույն թույլատրելի սահմանի վերաբերյալ պահանջներին:

### **2.1. Անցած ճանապարհի չափումը**

Անցած ճանապարհը չափվում է կամ.

– այնպես, որ ներառվեն եւ առաջընթաց եւ հետընթաց շարժումները, կամ

– այնպես, որ ներառվի միայն առաջընթաց շարժումը:

Ձայնագրող սարքավորումը պետք է չափի 0-ից 9.999.999,9 կմ հեռավորություն:

Չափված հեռավորությունը պետք է լինի հետեւյալ շեղումների սահմաններում (առնվազն 1000մ հեռավորություններ)`

-  $\pm 1 \%$ ՝ նախքան տեղադրումը,

-  $\pm 2 \%$  տեղադրման եւ պարբերական փորձարկումների ժամանակ,

-  $\pm 4 \%$  շահագործման ընթացքում:

Հեռավորության չափումը պետք է ունենա 0.1կմ կամ ավելի բարձր զգայնություն:

## 2.2. Արագության չափում

Ճայնագրող սարքավորումը պետք է չափի 0-ից 220 կմ/ժ արագություն:

Որպեսզի գրանցված արագության առավելագույնը  $\pm 6$  կմ/ժ շեղում ապահովվի, եւ հաշվի առնելով

-  $\pm 2$  կմ/ժ մուտքային տատանումների շեղում (անվադողի տատանումներ,...),

-  $\pm 1$  կմ/ժ չափումների շեղում տեղադրման կամ պարբերական ստուգումների ժամանակ,

20-180 կմ/ժ արագությունների եւ մեքենայի 4000-25000 հրում/կմ բնութագրիչ գործակցի համար ճայնագրող սարքավորումը պետք է չափի արագությունը  $\pm 1$  կմ/ժ շեղմամբ (հաստատուն արագության դեպքում):

Ծանոթագրություն. Տվյալների պահպանման զգայնությունը ճայնագրող սարքավորման պահպանած արագությանը բերում է հավելյալ  $\pm 0.5$  կմ/ժ շեղում:

Արագությունը պետք է չափվի ճշգրտորեն նորմալ շեղման սահմաններում արագության փոփոխման ավարտից 2 վայրկյանի ընթացքում, երբ արագությունը փոխվում է 2մ/ս2 հաճախականությամբ:

Արագության չափումը պետք է ունենա 1կմ/ժ կամ ավելի բարձր զգայնություն:

## 3. Ժամանակի չափում

Ժամանակի չափման գործառույթի միջոցով մշտապես չափվում եւ թվայնորեն արտահայտվում է Յու Թի Սի ժամն ու ամսաթիվը:

Յու Թի Սի ժամն ու ամսաթիվն օգտագործվում են ճայնագրող սարքավորման գործառույթների ժամանակի ֆիքսման համար (ճայնագրում, տպվածքներ, տվյալների փոխանակում, արտապատկերում,...):

Տեղական ժամանակի պատկերման համար պետք է հնարավոր լինի կես ժամյա փուլերով փոխել ժամային հաշվարկը:

Տեսակի հաստատման պայմաններով՝ ժամանակի անցումը պետք է լինի օրական  $\pm 2$  վայրկյան:

Ժամանակի չափումը պետք է ունենա 1վրկ կամ ավելի բարձր զգայնություն:

Տեսակի հաստատման պայմաններով՝ ժամանակի չափման վրա չպետք է ազդի որեւէ 12 ամսից պակաս արտաքին էլեկտրամատակարարման ընդհատում:

#### **4. Վարորդի գործողությունների դիտանցում**

Սույն գործառույթը մշտապես եւ առանձին-առանձին դիտանցում է մեկ վարորդի եւ մեկ վարորդի օգնականի գործողությունները:

Վարորդի գործողությունները պետք է լինեն՝ ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ, ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՍԱՆԵԼԻ կամ ԸՆԴՄԻՋՈՒՄ/ՀԱՆԳԻՍ:

Պետք է հնարավոր լինի, որպեսզի վարորդը կամ վարորդի օգնականը ձեռքով ընտրեն ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՍԱՆԵԼԻ կամ ԸՆԴՄԻՋՈՒՄ/ՀԱՆԳԻՍ:

Երբ մեքենան ընթացքի մեջ է, վարորդի համար ավտոմատ կերպով նշվում է ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ, իսկ վարորդի օգնականի համար ավտոմատ կերպով նշվում է ՀԱՍԱՆԵԼԻ:

Երբ մեքենան կանգնում է, վարորդի համար ավտոմատ կերպով նշվում է ԱՇԽԱՏԱՆՔ:

Մեքենայի կանգնելու հետեւանքով ավտոմատ կերպով ԱՇԽԱՏԱՆՔ-ի անցման 120 վայրկյանների ընթացքում կատարված առաջին փոփոխությունը պետք է համարվի մեքենայի կանգնելու ժամանակ կատարված փոփոխությունը (ուստի՝ հավանաբար կասեցնելով ԱՇԽԱՏԱՆՔ-ի անցումը):

Սույն գործառույթը պետք է ձայնագրող գործառույթին գործողությունների փոփոխման վերաբերյալ ազդանշան տա՝ մեկ րոպե զգայնությամբ:

Եթե մեկ րոպեի ընթացքում որեւիցե ՄԵՔԵՆԱՎԱՐՄԱՆ գործողություն է կատարվում, ապա այդ ամբողջ րոպեն պետք է դիտվի որպես ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ:

Եթե տվյալ րոպեին անմիջապես նախորդող եւ հաջորդող րոպեների ընթացքում որեւիցե ՄԵՔԵՆԱՎԱՐՄԱՆ գործողություն է կատարվում, ապա այդ ամբողջ րոպեն պետք է դիտվի որպես ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ:

Եթե տվյալ թույլն, նախորդ պահանջների համաձայն, չի դիտվում որպես ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ, ապա այդ ամբողջ թույլն համարվում է նույն տեսակի, ինչ որ տվյալ թույլի ընթացքում կատարված ամենաերկարատե գործողությունը (կամ ամենաերկար հավասար տեւողությամբ գործողություններից վերջինը):

Սույն գործառույթը պետք է նաեւ մշտապես դիտանցի անընդհատ մեքենավարման ժամանակը եւ վարորդի կուտակային ընդմիջումների ժամանակը:

## **5. Մեքենավարման կարգավիճակի դիտանցում**

Սույն գործառույթը պետք է մշտապես եւ ավտոմատ կերպով դիտանցի մեքենավարման կարգավիճակը:

Երբ սարքավորման մեջ երկու վավեր վարորդի քարտեր են տեղադրված, մեքենավարման կարգավիճակը նշվում է որպես ԱՆՁՆԱԿԱԶՄ, ցանկացած այլ դեպքում՝ ՄԻԱՆՁՆՅԱ:

## **6. Վարորդի մեխանիկական մուտքագրումները**

### **6.1. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերի մուտքագրում**

Սույն գործառույթի միջոցով գրանցվում է վարորդի եւ (կամ) վարորդի օգնականի աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտման վայրերը:

Վայրերը գրանցվում են որպես երկրներ եւ, համապատասխան դեպքերում, գրանցվում է նաեւ տարածաշրջանը:

Ամեն անգամ, երբ վարորդի (արհեստանոցի) քարտը հեռացվում է, ձայնագրող սարքավորումը հուշում է վարորդին (վարորդի օգնականին)՝ մուտքագրել օրվա աշխատաժամանակի ավարտի վայրի անվանումը:

Ձայնագրող սարքավորումը պետք է թույլ տա անտեսել այս խնդրանքը:

Պետք է հնարավոր լինի մուտքագրելու օրվա աշխատաժամերի սկսման եւ ավարտման վայրերի անվանումները՝ առանց քարտի կամ քարտի տեղադրման ու հեռացման ժամանակից դուրս:

## 6.2. Վարորդի գործողությունների մեխանիկական մուտքագրում

Վարորդի (կամ արհեստանոցի) քարտի տեղադրման դեպքում, եւ միայն այս ժամանակ, ձայնագրող սարքավորումը պետք է.

- քարտատիրոջը հիշեցնի վերջին անգամ քարտը հեռացնելու օրվա եւ ժամի մասին եւ
- քարտատիրոջը խնդրի՝ նշել, թե արդյոք քարտի տվյալ տեղադրումն իրենից ներկա օրական աշխատաժամանակի շարունակություն է ներկայացնում:

Ձայնագրող սարքավորումը պետք է քարտատիրոջը թույլ տա առանց պատասխանելու հարցն անտեսել, կամ դրական, կամ բացասական պատասխան տա.

- այն դեպքում, երբ քարտատերն անտեսում է հարցը, ձայնագրող սարքավորումը պետք է նրան հուշի՝ նշել օրվա աշխատաժամանակի սկսման վայրը: Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ընձեռի անտեսելու այս խնդրանքը: Եթե որեւէ վայր է նշվում, ապա այն պետք է ձայնագրվի հիշողության եւ պտուտաչափի քարտի մեջ եւ վերաբերի քարտի տեղադրման ժամին,

- դրական կամ բացասական պատասխանի դեպքում ձայնագրող սարքավորումը պետք է քարտատիրոջն հնարավորություն ընձեռի ձեռքով մուտքագրել ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՍԱՆԵԼԻ կամ ԸՆԴՄԻՋՈՒՄ/ՀԱՆԳԻՍ գործողությունները՝ իրենց սկսման եւ ավարտի ժամով ու ամսաթվով, որոնք խստագույնս կընկնեն միայն քարտի վերջին հեռացման եւ ներկա տեղադրման ժամանակահատվածում՝ թույլ չտալով, որ այդ գործողությունները փոխադարձաբար համընկնեն: Սա արվում է հետեւյալ ընթացակարգի համաձայն.

—

- այն դեպքում, երբ քարտատերը դրական պատասխան է տալիս, ձայնագրող սարքավորումը քարտատիրոջն առաջարկում է քարտի վերջին հեռացման եւ ներկա տեղադրման ժամանակահատվածի համար ձեռքով ու ժամանակագրական հերթականությամբ մուտքագրել գործողությունները: Գործընթացն ավարտվում է, երբ ձեռքով մուտքագրված գործողության ավարտի ժամանակը հավասարվում է քարտի տեղադրման ժամանակին:

- այն դեպքում, երբ քարտատերը բացասական պատասխան է տալիս, ձայնագրող սարքավորումը պետք է՝

—

- քարտատիրոջն առաջարկի քարտի հեռացման ժամանակից մինչև տվյալ օրվա աշխատաժամանակի ավարտն ընկած ժամանակահատվածի համար ձեռքով եւ ժամանակագրական հերթականությամբ մուտքագրել գործողությունները (կամ տվյալ մեքենային վերաբերող գործողությունները, այն դեպքում, երբ գրանցման թերթիկի վրա տվյալ օրվա աշխատաժամանակը շարունակվում է): Հետեւաբար, նախքան քարտատիրոջը թույլ կտա յուրաքանչյուր գործողություն ձեռքով մուտքագրել, ձայնագրող սարքավորումը պետք է քարտատիրոջն առաջարկի նշել, թե արդյոք նախորդ գրանցված գործողության ժամանակի ավարտը նախորդ աշխատաժամանակի ավարտն է (տե՛ս ստորեւ ներկայացված ծանոթագրությունը),

—

Ծանոթագրություններ. այն դեպքում, երբ քարտատերը չի գրանցում նախորդ աշխատաժամանակի ավարտը եւ ձեռքով մուտքագրում է մի գործողություն, որի ավարտի ժամը համընկնում է քարտի տեղադրման ժամի հետ, ձայնագրող սարքավորումը պետք է.

- ենթադրի, թե օրվա աշխատաժամանակն ավարտվել է քարտը հանելուց հետո առաջին ՀԱՆԳՍՏԻ (կամ մնացած ԱՆՀԱՅՏ) ժամանակի սկզբում կամ եթե հանգստի ժամանակ չի գրանցվել՝ քարտը հանելու ժամանակ (եւ եթե ոչ մի ԱՆՀԱՅՏ ժամանակահատված չկա),

- ենթադրի, թե սկսվելու ժամանակը (տես ստորեւ) համընկնում է քարտի տեղադրման ժամանակի հետ,

- գործի՝ համաձայն ստորեւ բերված քայլերի,

- այնուհետեւ, եթե համապատասխան աշխատաժամանակի ավարտը տարբերվում է քարտի հեռացման ժամանակից կամ եթե այդ ժամանակահատվածի համար աշխատանքային օրվա ավարտի ոչ մի վայր չի նշել, ձայնագրող սարքավորումը պետք է քարտատիրոջը հուշի՝ հաստատել կամ մուտքագրել աշխատանքային օրվա ավարտի վայրի անվանումը (ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ընձեռի անտեսելու այս խնդրանքը): Եթե որեւէ վայր է մուտքագրվում, այն պետք է գրանցվի միայն պտուտաչափի քարտում, եւ միայն եթե այն տարբերվում է քարտի հեռացման ժամանակ մուտքագրված ժամից (առկայության դեպքում) եւ վերաբերում է աշխատաժամանակի ավարտի ժամանակին,

- այնուհետեւ քարտատիրոջն առաջարկում է մուտքագրել տվյալ աշխատանքային օրվա սկսման ժամը (կամ տվյալ մեքենային վերաբերող գործողությունների սկսման ժամը, այն



դեպքում, երբ քարտատերն այդ ժամանակահատվածում օգտագործել է գրանցման թերթիկ) եւ քարտատիրոջը հուշում է նշել աշխատանքային օրվա սկսման վայրը (ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ընձեռի անտեսելու այս խնդրանքը): Եթե որեւէ վայր է նշվում, ապա այն պետք է գրանցվի պտուտաչափի քարտում եւ վերաբերի սկսման ժամին: Եթե այս սկսման ժամը համընկնում է քարտի տեղադրման ժամի հետ, ապա վայրը նույնպես պետք է գրանցվի տվյալների հիշողության մեջ,

- այնուհետեւ, եթե այս սկսման ժամը տարբերվում է քարտի տեղադրման ժամից, քարտատիրոջն առաջարկում է ձեռքով եւ ժամանակագրական հերթականությամբ մուտքագրել այս սկսման ժամից մինչեւ քարտի տեղադրումը կատարված գործողությունները: Գործընթացն ավարտվում է, երբ ձեռքով մուտքագրված գործողության ավարտի ժամանակը հավասարվում է քարտի տեղադրման ժամանակին,

- այնուհետեւ ձայնագրող սարքավորումը պետք է քարտատիրոջը թույլ տա փոփոխել ձեռքով մուտքագրված ցանկացած գործողություն, մինչեւ այն հստակ հրահանգով հաստատելը, որից հետո պետք է արգելի ցանկացած նման փոփոխություն,

- նախնական հարցմանը տրված նման պատասխանները, որոնց ոչ մի գործողության մուտքագրում չի հաջորդում, պետք է ձայնագրող սարքավորման կողմից ընկալվեն այնպես, կարծես քարտատերն անտեսել է հարցումը:

Այս ամբողջ գործընթացի ժամանակ ձայնագրող սարքավորումը պետք է մուտքագրումների սպասի ոչ ավելի, քան մինչեւ հաջորդ ժամանակի սպառումը.

- եթե մեկ ընթացքում մարդ-սարքավորում շփում չի լինում (30 վայրկյան հետո տեսողական եւ, հավանաբար, լսողական ազդանշանով) կամ

- եթե քարտը հեռացվում է կամ մեկ այլ վարորդի (կամ արհեստանոցի) քարտ է տեղադրվում կամ

- հենց որ մեքենան շարժվում է,

այս դեպքում ձայնագրող սարքավորումը պետք է հաստատի արդեն կատարված բոլոր մուտքագրումները:

### **6.3. Առանձնահատուկ պայմանների մուտքագրում**

Ձայնագրող սարքավորումը պետք է վարորդին թույլ տա իրական ժամանակում մուտքագրել հետեւյալ երկու առանձնահատուկ պայմանները՝

- «ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ» (սկիզբ, վերջ)

- «ԼԱՍՏԱՆԱՎԻ/ԳՆԱՅՔԻ ԱՆՅՈՒՄ»

«ԼԱՍՏԱՆԱՎԻ/ԳՆԱՅՔԻ ԱՆՅՈՒՄԸ» չի կարող պատահի, եթե «ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ» պայմանն է բացված:

Եթե վարորդական քարտ է տեղադրվում կամ հեռացվում, ձայնագրող սարքավորումը պետք է ավտոմատ կերպով փակի բաց «ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ» պայմանը:

## **7. Կազմակերպության ուղեկապերի կառավարումը**

Սույն գործառույթը պետք է կազմակերպությանը թույլ տա կառավարել կազմակերպության ռեժիմում տվյալներից օգտվելու հնարավորությունը սահմանափակելու նպատակով տեղադրված ուղեկապերը:

Կազմակերպության ուղեկապերը բաղկացած են սկսման ամսաթվից/ժամից (մուտքագրում) եւ ավարտի ամսաթվից/ժամից (ելքագրում), որոնք առնչվում են կազմակերպության նույնականացմամբ՝ ըստ կազմակերպության քարտի համարի (մուտքագրման ժամանակ):

Ուղեկապերը միայն իրական ժամանակում կարող են միացվել եւ անջատվել:

Համակարգից միայն այն կազմակերպությունը կարող է դուրս գալ, որն արդեն մուտք է գործել (որն արտահայտվում է կազմակերպության քարտի համարի առաջին 13 թվերով) կամ

դուրս գալն արվում է ավտոմատ կերպով, եթե մեկ այլ կազմակերպություն է մուտք գործում:

Այն դեպքում, երբ կազմակերպությունը մուտք է գործում եւ նախորդ մուտք նույն կազմակերպությանն է, կենթադրվի, որ նախորդ մուտքը չի անջատվել եւ դեռեւս ակտիվ է:

## **8. Վերահսկման գործողությունների դիտանցումը**

Սույն գործառույթը պետք է դիտանցի ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ, ՏՊԵԼ, ՄԵՔԵՆԱՅԻ ՄԻԱՎՈՐԸ եւ քարտային ՆԵՐԲԵՌՆՄԱՆ գործողությունները, որոնք իրականացվել են վերահսկման ռեժիմում:

Սույն գործառույթը պետք է նաեւ վերահսկման ռեժիմում դիտանցի ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ գործողությունները: Համարվում է, որ արագության գերազանցման վերահսկողություն է իրականացվել, երբ վերահսկման ռեժիմում «արագության գերազանցման» տպվածքներն ուղարկվել են տպիչին կամ էկրանին, կամ երբ «պատահարների եւ անսարքությունների» վերաբերյալ տվյալները ներբեռնվել են մեքենայի միավորի տվյալների հիշողությունից:

## **9. Պատահարների եւ (կամ) անսարքությունների հայտնաբերում**

Գործառույթը պետք է հայտնաբերի հետեւյալ պատահարները եւ (կամ) անսարքությունները.

### **9.1. Անվավեր քարտի մուտքարկում**

Սույն պատահարը պետք է գրանցվի ցանկացած անվավեր քարտի մուտքարկման դեպքում եւ (կամ) երբ մուտքարկված քարտի վավերականության ժամկետն անցնում է:

### **9.2. Քարտերի անհամատեղելիություն**

Սույն պատահարը պետք է գրանցվի հետեւյալ աղյուսակում X-ով նշված վավեր քարտերի համակցություններից մեկի դեպքում:

Քարտերի անհամատեղելիու թյուն	Վարորդի քարտի բնիկ					
	Անքարտ	Վարորդի քարտ	Վերահսկման քարտ	Արհեստանոցի քարտ	Կազմակերպու- թյան քարտ	
Վարորդի օգնականի բնիկ	Առանց քարտ					
	Վարորդի քարտ			X		
	Վերահսկման քարտ			X	X	X
	Արհեստանոցի քարտ	X		X	X	X
	Կազմակերպու- թյան քարտ			X	X	X

### 9.3. Ժամանակի համընկնում

Սույն պատահարը պետք է գրանցվի, երբ վարորդի քարտի վերջին հեռացման օրը/ժամը, որը գրանցված է քարտի վրա, ավելի ուշ է, քան ձայնագրող սարքավորման ներկա օրը/ժամը:

**9.4. Առանց համապատասխան քարտի մեքենավարում**

Սույն պատահարը պետք է գրանցվի հետեւյալ աղյուսակում X-ով նշված ցանկացած պտուտաչափի քարտի համակցության դեպքում, երբ վարորդի գործողությունը փոխվում է ՄԵՔԵՆԱՎԱՐՄԱՆ կամ երբ շահագործման ռեժիմը փոխվում է, մինչ վարորդի գործողությունը ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄՆ է.

Առանց համապատասխան քարտի մեքենավարում		Վարորդի քարտի բնիկ				
		Անքարտ (կամ անվավեր քարտ)	Վարորդի քարտ	Վերահսկման քարտ	Արհեստանոցի քարտ	Կազմակերպության քարտ
Վարորդի օգնականի քարտի բնիկ	Անքարտ (կամ անվավեր քարտ)	X		X		X
	Վարորդի քարտ	X		X	X	X
	Վերահսկման քարտ	X	X	X	X	X
	Արհեստանոցի քարտ	X	X	X		X

	<b>Կազմակերպության քարտ</b>	X	X	X	X	X
--	-----------------------------	---	---	---	---	---

#### **9.5. Մեքենավարման ընթացքում քարտի մուտքարկում**

Սույն պատահարը պետք է գրանցվի, երբ պտուտաչափի քարտը մուտքարկվում է որեւէ բնիկի մեջ այն ժամանակ, երբ վարորդի գործողությունը ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄՆ է:

#### **9.6. Վերջին քարտային փուլի սխալ ավարտում**

Սույն պատահարը պետք է գրանցվի այն ժամանակ, երբ քարտը մուտքարկելու ժամանակ ծայնագրող սարքավորումը հայտնաբերում է, որ, անկախ III(1) պարբերությամբ սահմանված դրույթներից, նախորդ քարտային փուլը պատշաճ կերպով չի փակվել (քարտը հեռացվել է՝ նախքան բոլոր համապատասխան տվյալները կպահպանվեին դրա վրա): Սույն պատահարը պետք է գրանցվի միայն վարորդի եւ արհեստանոցի քարտերով:

#### **9.7. Արագության գերազանցում**

Սույն պատահարը պետք է գրանցվի արագության յուրաքանչյուր գերազանցման համար:

#### **9.8. Հոսանքի մատակարարման ընդհատում**

Սույն պատահարը պետք է գրանցվի այն ժամանակ, երբ չափաբերման ռեժիմից դուրս շարժման սենսորի եւ (կամ) մեքենայի միավորի հոսանքի մատակարարումը 200 միլիվայրկյանից ավելի ընդհատվում է: Ընդհատման շեմը սահմանվում է արտադրողի կողմից: Մեքենայի շարժիչի միացման ժամանակ հոսանքի մատակարարման անկումը չպետք է հանգեցնի սույն պատահարին:

#### **9.9. « Ընթացքի վերաբերյալ տվյալների սխալ»-ի դեպք**

Սույն պատահարը գրանցվում է այն դեպքում, երբ շարժման սենսորի եւ մեքենայի միավորի միջեւ տվյալների սովորական հոսքն ընդհատվում է եւ (կամ) եթե շարժման սենսորի ու մեքենայի միավորի միջեւ տվյալների փոխանակման ժամանակ տվյալների ամբողջականության կամ ճշգրտման սխալ է տեղի ունեցել:

### 9.10. Անվտանգության խախտում

Սույն պատահարը պետք է գրանցվի չափաբերման ռեժիմից դուրս ցանկացած պատահարի դեպքում, որն ազդում է շարժման սենսորի եւ (կամ) մեքենայի միավորի անվտանգության վրա, ինչպես ընդգծված է այդ կազմակերպությունների ընդհանուր անվտանգության թիրախներով:

### 9.11. Քարտի անսարքություն

Սույն անսարքությունը պետք է գրանցվի այն ժամանակ, երբ աշխատանքի ժամանակ պտուտաչափի քարտի գործողության խախտում է տեղի ունենում:

### 9.12. Ձայնագրող սարքավորման անսարքություն

Սույն անսարքությունը պետք է գրանցվի չափաբերման ռեժիմից դուրս հետեւյալ անսարքություններից ցանկացածի դեպքում՝

- մեքենայի միավորի ներքին անսարքություն,
- տպիչ սարքի անսարքություն,
- էկրանի անսարքություն,
- ներբեռնման անսարքություն,
- սենսորի անսարքություն:

## 10. Սարքիության ստուգում եւ ինքնաստուգում

Ձայնագրող սարքավորումը պետք է ինքնաստուգմամբ եւ **սարքիության** ստուգմամբ հայտնաբերի անսարքությունները՝ համաձայն հետեւյալ աղյուսակի.

Ստուգման ենթակա միավորը	ինքնաստուգում	Սարքիության ստուգում
Ծրագիր		Ամբողջականություն
Տվյալների հիշողություն	հասանելիություն	Հասանելիություն,



		տվյալների ամբողջականություն
Քարտակիր սարքեր	Հասանելիություն	Հասանելիություն
Ստեղնաշար		Մեխանիկական ստուգում
Տպիչ	(արտադրողի հայեցողությամբ)	Տպվածք
Դիսփլեյ (էկրան)		Տեսողական ստուգում
Ներբեռնում (իրականացվում է միայն ներբեռնման ժամանակ)	Պատշաճ աշխատանք	
Սենսոր	Պատշաճ աշխատանք	Պատշաճ աշխատանք

### 11. Վերարձաձում տվյալների հիշողությունից

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա կարդալու իր տվյալների հիշողության վրա պահպանված ցանկացած տվյալ:

### 12. Ձայնագրում եւ պահպանում տվյալների հիշողության մեջ

Սույն պարբերության իմաստով.

- 365 օրը սահմանվում է որպես մեքենայում վարորդի միջին գործողությունների 365 օրացուցային օր: Մեքենայում օրական միջին գործողությունը սահմանվում է որպես առնվազն վեց վարորդ կամ վարորդի օգնական, վեց քարտի տեղադրման եւ հանման շրջան ու 256 գործողության փոփոխություն: Հետեւաբար, 365 օրը ներառում է 2190 վարորդ (վարորդի օգնական), 2190 քարտի տեղադրման եւ հանման շրջան եւ 93440 գործողության փոփոխություն,

- ժամերը գրանցվում են մեկ րոպե կտրվածքով եթե այլ բան նախատեսված չէ,

- վազբաչափի ցուցմունքները գրանցվում են մեկ կիլոմետր կտրվածքով,

- արագությունները գրանցվում են 1կմ/ժ կտրվածքով,

Տեսակի հաստատման պայմաններով՝ տվյալների հիշողության մեջ պահպանված տվյալների վրա չպետք է ազդի որեւէ 12 ամսից պակաս արտաքին էլեկտրամատակարարման ընդհատում:

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա իր տվյալների հիշողության մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձայնագրելու եւ պահպանելու հետեւյալ տվյալները.

## **12.1. Սարքավորման նույնականացման տվյալներ**

### **12.1.1. Մեքենայի միավորի նույնականացման տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա իր տվյալների հիշողության մեջ պահպանելու մեքենայի միավորների նույնականացման հետեւյալ տվյալները.

- արտադրողի անվանումը,
- արտադրողի հասցեն,
- սարքավորման մասերի համարները,
- սերիական համարը,
- ծրագրի հերթական թողարկման համարը,
- ծրագրի հերթական թողարկման տեղադրման ամսաթիվը,
- սարքավորման արտադրության տարեթիվը,
- գործունեության իրականացման թույլտվության համարը:

Մեքենայի միավորն արտադրողը մեքենայի միավորի նույնականացման տվյալները ձայնագրում եւ պահպանում է մեկ անգամ եւ ընդմիշտ, բացառությամբ ծրագրին վերաբերող տվյալների եւ գործունեության իրականացման թույլտվության համարի, որոնք ծրագրի թարմացման դեպքում կարող են փոփոխվել:

### **12.1.2. Ընթացքի սենսորի նույնականացման տվյալներ**

Ընթացքի սենսորը պետք է կարողանա իր հիշողության մեջ պահպանել հետեւյալ նույնականացման տվյալները.

- արտադրողի անվանումը,
- սարքավորման մասերի համարները,
- սերիական համարը,
- գործունեության իրականացման համար թույլտվության համարը,
- ֆիքսված անվտանգության բաղադրիչի նույնականացման տվյալը (օրինակ՝ ներքին չիպի/պրոցեսորի համարը),
- օպերացիոն համակարգի նույնականացման տվյալը (օրինակ՝ ծրագրի հերթական թողարկման համարը):

Ընթացքի սենսորն արտադրողը դրա նույնականացման տվյալները ձայնագրում եւ պահպանում է մեկ անգամ եւ ընդմիջտ:

Մեքենայի միավորը պետք է կարողանա ձայնագրել եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանել հետեւյալ՝ այդ պահի դրությամբ համաձայնեցված շարժման սենսորի նույնականացման տվյալները.

- սերիական համարը,
- գործունեության իրականացման թույլտվության համարը,
- առաջին անգամ համաձայնեցման ամսաթիվը:

### **12.2. Անվտանգության տարրեր**

Ձայնագրող սարքավորումը պետք է կարողանա պահպանել հետեւյալ անվտանգության տարրերը.

- Եվրոպական հանրային բանաձեւ,
- Անդամ պետությունների հավաստագիր,
- սարքավորման հավաստագիր,

- սարքավորման գաղտնի բանաձեւը:

Ձայնագրող սարքավորման անվտանգության տարրերը սարքի մեջ են մուտքագրվում մեքենայի միավորի արտադրողի կողմից:

### 12.3. Վարորդական քարտերի տեղադրման եւ հանման վերաբերյալ տվյալներ

Վարորդի կամ արհեստանոցի քարտի սարքավորման մեջ յուրաքանչյուր տեղադրման եւ հանման փուլում ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր հիշողության մեջ պահպանի.

- քարտատիրոջ ազգանունն ու անունը (անունները), ինչպես պահպանված է քարտում,
- քարտային համարը, քարտը տրամադրող անդամ պետության անվանումը եւ վավերականության ժամկետը, ինչպես պահպանված է քարտում,
- տեղադրման օրն ու ժամը,
- մեքենայի վազքաչափի ցուցմունքը՝ քարտը տեղադրելու պահին,
- քարտի տեղադրման բնիկը,
- քարտը հանելու օրն ու ժամը,
- մեքենայի վազքաչափի ցուցմունքը՝ քարտը հանելու պահին,
- վարորդի օգտագործած նախորդ մեքենայի վերաբերյալ հետեւյալ տեղեկատվությունը, ինչպես պահպանված է քարտում.

—

- մեքենայի գրանցման համարը եւ գրանցող անդամ պետության անվանումը,
- քարտը հանելու օրն ու ժամը,
- նշան, որը ցույց է տալիս՝ արդյոք քարտը տեղադրելու պահին քարտատերը ձեռքով մուտքագրել է գործողությունները, թե ոչ:

Տվյալների հիշողությունը պետք է կարողանա այս տվյալները պահել առնվազն 365 օր:

Երբ հիշողությունը լցվում է, նոր տվյալները պետք է փոխարինեն ամենահին տվյալներին:

#### 12.4. Վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներ

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այն դեպքերը, երբ վարորդի եւ (կամ) վարորդի օգնականի գործողություններում որեւէ փոփոխություն է կատարվում, եւ (կամ) երբ մեքենավարման կարգավիճակում որեւէ փոփոխություն է կատարվում, եւ (կամ) երբ վարորդի կամ արհեստանոցի քարտը տեղադրվում կամ հեռացվում է:

- մեքենավարման կարգավիճակը (ԱՆՁՆԱԿԱԶՄ, ՄԻԱՆՁՆՅԱ),
- բնիկը (ՎԱՐՈՐԴ, ՎԱՐՈՐԴԻ ՕԳՆԱԿԱՆ),
- համապատասխան բնիկում քարտի կարգավիճակը (ՏԵՂԱԴՐՎԱԾ, ՉՏԵՂԱԴՐՎԱԾ) (տե՛ս ծանոթագրությունը),
- գործողությունը (ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ, ՀԱՍԱՆԵԼԻ, ԱՇԽԱՏԱՆՔ, ԸՆԴՄԻՋՈՒՄ/ՀԱՆԳԻՍ),
- փոփոխության օրն ու ժամը:

*Ծանոթագրություն..* ՏԵՂԱԴՐՎԱԾ նշանակում է, որ բնիկում վավեր վարորդի կամ արհեստանոցի քարտ է տեղադրված: ՉՏԵՂԱԴՐՎԱԾ նշանակում է հակառակը, որ բնիկում վավեր վարորդի կամ արհեստանոցի քարտ տեղադրված չէ (օրինակ՝ կազմակերպության քարտ է տեղադրված կամ ընդհանրապես քարտ տեղադրված չէ):

*Ծանոթագրություն..* Վարորդի կողմից ձեռքով մուտքագրված գործողությունների տվյալները չեն ձայնագրվում տվյալների հիշողության մեջ:

Տվյալների հիշողությունը պետք է վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալները առնվազն 365 օր պահելու հնարավորություն ունենա:

Երբ հիշողությունը լցվում է, նոր տվյալները պետք է փոխարինեն ամենահին տվյալներին:

#### 12.5. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերը

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այն դեպքերը, երբ վարորդը (վարորդի օգնականը) մուտքագրում է այն վայրի անվանումը, որտեղ աշխատանքային օրն սկսվում եւ (կամ) ավարտվում է.

- առկայության դեպքում՝ վարորդի (վարորդի օգնականի) քարտի համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը,

- մուտքագրման օրն ու ժամը (կամ, մեխանիկորեն մուտքագրման ընթացքում կատարված մուտքագրմանը վերաբերող օրն ու ժամը),
- գրառման տեսակը (սկիզբ կամ ավարտ, մուտքագրման պայմանը),
- մուտքագրված երկիրը կամ տարածաշրջանը,
- ավտոմեքենայի վազքաչափի ցուցմունքը:

Տվյալների հիշողությունը պետք է կարողանա պահպանել օրական աշխատաժամանակի սկսման եւ ավարտի վերաբերյալ տվյալներն առնվազն 365 օր (ենթադրելով, որ մեկ վարորդն օրական մուտքագրում է երկու տվյալ):

Երբ հիշողությունը լցվում է, նոր տվյալները պետք է փոխարինեն ամենահին տվյալներին:

#### **12.6. Վազքաչափի տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է իր տվյալների հիշողության մեջ ձայնագրի մեքենայի վազքաչափի ցուցմունքները եւ յուրաքանչյուր օրացուցային օրվա կեսգիշերին՝ նաեւ համապատասխան ամսաթիվը:

Տվյալների հիշողությունը պետք է հնարավորություն ունենա վազքաչափի կեսգիշերվա ցուցմունքները պահել առնվազն 365 օր:

Երբ հիշողությունը լցվում է, նոր տվյալները պետք է փոխարինեն ամենահին տվյալներին:

#### **12.7. Արագության վերաբերյալ մանրամասն տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի ավտոմեքենայի ակնթարթային արագությունը եւ համապատասխան օրն ու ժամը՝ մեքենայի շարժման առնվազն վերջին 24 ժամվա յուրաքանչյուր վայրկյանի համար:

#### **12.8. Պատահարների վերաբերյալ տվյալներ**

Սույն ենթապարբերության իմաստով՝ ժամանակը պետք է գրանցվի մեկ վայրկյան կտրվածքով:

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի հետեւյալ տվյալները՝ յուրաքանչյուր պատահարի համար, որը հայտնաբերվել է՝ համաձայն հետեւյալ պահպանման կանոնների.

<b>Պատահար</b>	<b>Պահպանման կանոնները</b>	<b>Յուրաքանչյուր պատահարի համար գրանցվելիք տվյալները</b>
Քարտերի անհամատեղելիություն	<ul style="list-style-type: none"> <li>- վերջին 10 պատահարները</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- պատահարի սկսման օրն ու ժամը,</li> <li>- պատահարի ավարտի օրն ու ժամը,</li> <li>- քարտերի տեսակը, համարը եւ երկու անհամատեղելի քարտը տրամադրած անդամ պետության անվանումը:</li> </ul>
Առանց համապատասխան քարտի մեքենավարում	<ul style="list-style-type: none"> <li>- յուրաքանչյուր վերջին 10 օրվա ամենաերկար դեպքը</li> <li>- վերջին 365 օրվա ընթացքում հինգ ամենաերկար դեպքերը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- պատահարի սկսման օրն ու ժամը,</li> <li>- պատահարի ավարտի օրն ու ժամը,</li> <li>- քարտերի տեսակը, համարը եւ պատահարի սկզբում եւ (կամ) ավարտին տեղադրված ցանկացած քարտ տրամադրած անդամ պետության անվանումը,</li> <li>- այդ օրվա նմանօրինակ դեպքերի թիվը:</li> </ul>

<p>Մեքենավարման ընթացքում քարտի մուտքարկում</p>	<p>- յուրաքանչյուր վերջին 10 օրերի վերջին դեպքը</p>	<p>- պատահարի օրն ու ժամը, քարտի տեսակը, համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը, - այդ օրվա նմանօրինակ դեպքերի թիվը:</p>
<p>Վերջին քարտային փուլի սխալ ավարտում</p>	<p>- վերջին 10 պատահարները</p>	<p>- քարտի մուտքարկման օրն ու ժամը, քարտի տեսակը, համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը, - վերջին փուլի տվյալները՝ ստացված քարտից. — - քարտի մուտքարկման օրն ու ժամը, - մեքենայի գրանցման համարը եւ գրանցման անդամ պետությունը:</p>
<p>Արագության գերազանցում</p>	<p>- պատահարի յուրաքանչյուր վերջին 10 օրվա ամենալուրջ պատահարը (այսինքն՝ ամենաբարձր</p>	<p>- պատահարի սկսման օրն ու ժամը, - պատահարի ավարտի օրն ու ժամը, - դեպքի ժամանակ գրանցված ամենաբարձր</p>



	<p>միջին արագությունը),</p> <ul style="list-style-type: none"> <li>- վերջին 365 օրվա ընթացքում հինգ ամենալուրջ դեպքերը</li> <li>- վերջին չափաբերումից հետո պատահած առաջին դեպքը:</li> </ul>	<p>արագությունը</p> <ul style="list-style-type: none"> <li>- դեպքի ժամանակ գրանցված արագությունների հանրահաշվական միջինը, քարտի տեսակը, համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը (առկայության դեպքում),</li> <li>- այդ օրվա նմանօրինակ դեպքերի թիվը:</li> </ul>
<p>Հոսանքի մատակարարման ընդհատում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- յուրաքանչյուր վերջին 10 օրվա ամենաերկար դեպքը</li> <li>- վերջին 365 օրվա ընթացքում հինգ ամենաերկար դեպքերը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- պատահարի սկսման օրն ու ժամը,</li> <li>- պատահարի ավարտի օրն ու ժամը,</li> <li>- քարտերի տեսակը, համարը եւ պատահարի սկզբում եւ (կամ) ավարտին տեղադրված ցանկացած քարտ տրամադրած անդամ պետության անվանումը,</li> <li>- այդ օրվա նմանօրինակ դեպքերի թիվը:</li> </ul>
<p>Շարժման վերաբերյալ տվյալների սխալ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- յուրաքանչյուր վերջին 10 օրվա ամենաերկար դեպքը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- պատահարի սկսման օրն ու ժամը,</li> <li>- պատահարի ավարտի օրն ու ժամը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>- վերջին 365 օրվա ընթացքում հինգ ամենաերկար դեպքերը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- քարտերի տեսակը, համարը եւ պատահարի սկզբում եւ (կամ) ավարտին տեղադրված ցանկացած քարտ տրամադրած անդամ պետության անվանումը,</li> <li>- այդ օրվա նմանօրինակ դեպքերի թիվը:</li> </ul>
<p>Անվտանգության խախտման փորձ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- յուրաքանչյուր պատահարի տեսակի ամենավերջին 10 դեպքերը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- պատահարի սկսման օրն ու ժամը,</li> <li>- պատահարի ավարտի օրն ու ժամը (անհրաժեշտության դեպքում),</li> <li>- քարտերի տեսակը, համարը եւ պատահարի սկզբում եւ (կամ) ավարտին տեղադրված ցանկացած քարտ տրամադրած անդամ պետության անվանումը,</li> <li>- պատահարի տեսակը:</li> </ul>
<p>1) Ձայնագրող սարքավորումը պետք է նաեւ իր տվյալների հիշողության մեջ ձայնագրի եւ պահպանի.</p> <ul style="list-style-type: none"> <li>- վերջին ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ օրն ու ժամը,</li> <li>- սույն ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ դեպքին հաջորդող առաջին արագության գերազանցման օրն ու ժամը,</li> <li>- վերջին ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ դեպքից հետո արագության գերազանցման դեպքերի թիվը:</li> </ul>		

2) Այս տվյալները կարող են ձայնագրվել միայն հոսանքի մատակարարումը վերսկսելու դեպքում, ժամերը կարելի է իմանալ մեկ րոպեի ճշգրտությամբ:

### 12.9. Անսարքությունների վերաբերյալ տվյալներ

Սույն ենթապարբերության իմաստով՝ ժամանակը պետք է գրանցվի մեկ վայրկյան կտրվածքով:

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի հետեւյալ տվյալները՝ յուրաքանչյուր անսարքության համար, որը հայտնաբերվել է՝ համաձայն հետեւյալ պահպանման կանոնների.

<b>Անսարքություն</b>	<b>Պահպանման կանոնները</b>	<b>Յուրաքանչյուր անսարքության համար գրանցվելիք տվյալները</b>
Քարտի անսարքություն	- վարորդի քարտի անսարքության ամենավերջին 10 դեպքերը:	- անսարքության սկսման օրն ու ժամը, - անսարքության ավարտի օրն ու ժամը, - քարտի տեսակը, համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը,
Ձայնագրող սարքավորման անսարքություններ	- յուրաքանչյուր անսարքության տեսակի համար ամենավերջին 10 դեպքերը, - առաջին անսարքությունը	- անսարքության սկսման օրն ու ժամը, - անսարքության ավարտի օրն ու ժամը, - անսարքության տեսակը, - քարտերի տեսակը, համարը եւ

	վերջին չափաբերումից հետո:	անսարքության սկզբում եւ (կամ) ավարտին տեղադրված ցանկացած քարտ տրամադրած անդամ պետության անվանումը:
--	---------------------------------	--

### 12.10. Չափաբերման տվյալներ

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են.

- ակտիվացման պահին հայտնի չափաբերման պարամետրերին,
- ակտիվացումից հետո առաջին չափաբերմանը
- տվյալ մեքենայում (ըստ մեքենայի նույնականացման համարի) իրականացված առաջին չափաբերմանը,
- վերջին հինգ չափաբերմանը (եթե մեկ օրացուցային օրվա ընթացքում մի քանի չափաբերումներ են կատարվել, ապա միայն այդ օրվա վերջին չափաբերումն է պահպանվում):

Այս չափաբերումներից յուրաքանչյուրի համար պետք է գրանցվեն հետեւյալ տվյալները.

- չափաբերման նպատակը (ակտիվացում, առաջին անգամ տեղադրում, տեղադրում, պարբերական ստուգում),
- արհեստանոցի անունն ու հասցեն,
- արհեստանոցի քարտի համարը, քարտը տրամադրած անդամ պետության անվանումը եւ քարտի վավերականության ժամկետը,
- մեքենայի նույնականացում,
- թարմացված կամ հաստատված պարամետրերը. w, k, l, անվադողի չափը, արագությունը սահմանափակող սարքի կարգավորումները, վազքաչափի ցուցմունքները (հին եւ նոր), ամսաթիվը եւ ժամը (հին եւ նոր արժեքները):

Շարժման սենսորը պետք է ձայնագրի եւ իր հիշողության մեջ պահպանի հետեւյալ՝ շարժման սենսորի տեղադրման տվյալները.

- առաջին անգամ մեքենայի միավորին միացումը (օրը, ժամը, մեքենայի միավորի հաստատման համարը, մեքենայի միավորի սերիական համարը),
- վերջին անգամ մեքենայի միավորին միացումը (օրը, ժամը, մեքենայի միավորի հաստատման համարը, մեքենայի միավորի սերիական համարը),

#### **12.11. Ժամանակի համապատասխանեցման տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են.

- ժամանակի վերջին համապատասխանեցմանը
- վերջին չափաբերումից հետո հինգ ամենաձավալուն ժամանակային համապատասխանեցումներին,

իրականացված չափաբերման ռեժիմում՝ սովորական չափաբերման շրջանակներից դուրս ((գ)սահմանում)

Այս ժամանակի համապատասխանեցումներից յուրաքանչյուրի համար պետք է գրանցվեն հետեւյալ տվյալները.

- ամսաթիվն ու ժամը, հին արժեքը,
- ամսաթիվն ու ժամը, նոր արժեքը,
- արհեստանոցի անունն ու հասցեն,
- արհեստանոցի քարտի համարը, քարտը տրամադրած անդամ պետության անվանումը եւ քարտի վավերականության ժամկետը:

#### **12.12. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են վերջին 20 վերահսկման գործողություններին.

- վերահսկման օրն ու ժամը,
- վերահսկման քարտի համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը,
- վերահսկման տեսակը (արտապատկերում եւ (կամ) տպում, եւ (կամ) մեքենայի միավորի ներբեռնում, եւ (կամ) քարտի ներբեռնում):

Ներբեռնման դեպքում ամենահին եւ ամենավերջին ներբեռնման օրերը եւս պետք է ձայնագրվեն:

#### **12.13. Կազմակերպության ուղեկապերի վերաբերյալ տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են վերջին 20 կազմակերպության ուղեկապերին.

- մուտքի օրն ու ժամը,
- ելքի օրն ու ժամը,
- կազմակերպության քարտի համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը,
- կազմակերպության անունն ու հասցեն,

#### **12.14. Ներբեռնման գործողությունների վերաբերյալ տվյալներ**

Ձայնագրող սարքավորումը պետք է ձայնագրի եւ իր տվյալների հիշողության մեջ պահպանի այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են կազմակերպության կամ չափաբերման ռեժիմում արտաքին կրիչի վրա վերջին անգամ տվյալների հիշողության ներբեռնմանը.

- ներբեռնման օրն ու ժամը,
- կազմակերպության կամ արհեստանոցի քարտի համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը,
- կազմակերպության կամ արհեստանոցի անվանումը:



### 12.15. Հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներ

Ձայնագրող սարքավորումը պետք է իր տվյալների հիշողության մեջ ձայնագրի հատուկ պայմաններին վերաբերող հետեւյալ տվյալները.

- մուտքագրման օրն ու ժամը,
- առանձնահատուկ պայմանի տեսակը:

Տվյալների հիշողությունը պետք է հնարավորություն ունենա հատուկ պայմաններին վերաբերող տվյալները պահպանելու առնվազն 365 օր (ընդունելով, որ, միջինը, մեկ օրվա ընթացքում բացվում եւ փակվում է մեկ պայման): Երբ հիշողությունը լցվում է, նոր տվյալները պետք է փոխարինեն ամենահին տվյալներին:

### 13. Վերարձածում պտուտաչափի քարտերից

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա պտուտաչափի քարտից վերարձածելու անհրաժեշտ տվյալները (առկայության դեպքում).

- որպեսզի ճանաչի քարտը, քարտատիրոջը, նախորդ մեքենան, վերջին անգամ քարտը հանելու օրն ու ժամը եւ այդ ժամանակ նշված գործողությունը,
- որպեսզի ստուգի, որ վերջին քարտային փուլը ճշգրիտ է ավարտվել,
- որպեսզի հաշվարկի վարորդի անընդհատ մեքենավարման ժամանակը, կուտակային հանգստի ժամանակը եւ կուտակային մեքենավարման ժամանակը՝ նախորդ եւ ներկա շաբաթվա համար,
- որպեսզի տպի վարորդի քարտի վրա ձայնագրված տվյալներին վերաբերող տպվածքները,
- որպեսզի վարորդի քարտի տվյալները ներբեռնի արտաքին կրիչի վրա:

Վերարձածման սխալի դեպքում ձայնագրող սարքավորումը պետք է միեւնույն վերարձածման հրահանգը առավելագույնը երեք անգամ կրկին փորձի, այնուհետեւ, եթե սխալը շարունակվի՝ քարտն անսարք եւ անվավեր ճանաչի:



#### **14. Պտուտաչափի քարտերի վրա ձայնագրելն ու պահպանելը**

Քարտը տեղադրելուն պես ձայնագրող սարքավորումը պետք է քարտային փուլին վերաբերող տվյալներն անմիջապես անցկացնի վարորդի կամ արհեստանոցի քարտի մեջ:

Ձայնագրող սարքավորումը պետք է վարորդի, արհեստանոցի եւ (կամ) վերահսկման վավերական քարտերի վրա պահպանված տվյալները թարմացնի բոլոր անհրաժեշտ տվյալներով, որոնք վերաբերում են քարտատիրոջը եւ այն ժամանակահատվածին, որի ընթացքում քարտը տեղադրված է: Այս քարտերում պահպանված տվյալները հստակեցվում են IV գլխում:

Ձայնագրող սարքավորումը պետք է թարմացնի վարորդի գործողություններին եւ գտնվելու վայրին վերաբերող տվյալները (ինչպես հստակեցված է IV գլխի 5.2.5 եւ 5.2.6 պարբերություններում), որոնք քարտատերը ձեռքով է մուտքագրել եւ պահպանված են վավեր վարորդի եւ (կամ) արհեստանոցի քարտերի վրա:

Պտուտաչափի քարտերի թարմացումը պետք է այնպես լինի, որ անհրաժեշտության դեպքում եւ հաշվի առնելով քարտի իրական հիշողության ծավալը, ամենանոր տվյալները փոխարինեն ամենահին տվյալներին:

Ձայնագրման սխալի դեպքում ձայնագրող սարքավորումը պետք է միեւնոյն ձայնագրման հրահանգը առավելագույնը երեք անգամ կրկին փորձի, այնուհետեւ, եթե սխալը շարունակվի՝ քարտն անսարք եւ անվավեր ճանաչի:

Նախքան վարորդի քարտը հանելը եւ այն բանից հետո, երբ բոլոր համապատասխան տվյալները պահվել են քարտի վրա, ձայնագրող սարքավորումը պետք է գրոյացնի քարտային փուլի տվյալները:

#### **15. Արտապատկերում**

Էկրանը պետք է արտապատկերի առնվազն 20 նիշ:

Նիշերի նվազագույն չափսը պետք է լինի 5մմ բարձրության եւ 3.5մմ լայնության:

Էկրանը պետք է ճանաչի լատինական 1 եւ հունական նիշերը, որոնք սահմանված են ISO 8859 1-ին եւ 7-րդ մասերով՝ համաձայն 1-ին հավելվածի 4-րդ գլխի «նիշերի խմբի»: Էկրանը կարող է կիրառել պարզեցված նշաններ (օրինակ՝ շեշտված նիշերը կարող են

արտապատկերվել առանց շեշտի կամ փոքրատառերը կարող են մեծատառ արտապատկերվել):

Էկրանը պետք է աչք չծակող լույս ունենա:

Ցուցիչները պետք է տեսանելի լինեն ճայնագրող սարքավորումից դուրս:

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա արտապատկերելու.

- ստանդարտ տվյալներ,
- զգուշացումների վերաբերյալ տվյալներ,
- ցանկ մուտք գործելու վերաբերյալ տվյալներ,
- օգտագործողի պահանջած այլ տվյալներ:

Ձայնագրող սարքավորումը կարող է արտապատկերել հավելյալ տեղեկատվությունը՝ պայմանով, որ դա ակնհայտորեն տարանջատելի է վերելում պահանջված տեղեկատվությունից:

Ձայնագրող սարքավորման էկրանը պետք է օգտագործի 3-րդ հավելվածում թվարկված գրաֆիկական պատկերները կամ գրաֆիկական պատկերների համակցությունները: Էկրանը կարող է նաեւ տրամադրել հավելյալ գրաֆիկական պատկերներ կամ գրաֆիկական պատկերների համակցություններ, եթե դրանք ակնհայտորեն տարանջատելի են վերոնշյալ գրաֆիկական պատկերներից կամ գրաֆիկական պատկերների համակցություններից:

Մեքենայի ընթացքի ժամանակ էկրանը պետք է միշտ ՄԻԱՅՎԱԾ լինի:

Ձայնագրող սարքավորումը կարող է մեքենայի կանգնած ժամանակ էկրանն ԱՆՋԱՏԵԼՈՒ ավտոմատ կամ մեխանիկական հատկանիշ ներառել:

Արտապատկերման ձեւաչափը սահմանվում է 5-րդ հավելվածով:

### 15.1. Ստանդարտ դիսփլեյ

Երբ այլ տեղեկատվություն տրամադրելու կարիք չկա, ճայնագրող սարքավորումը պետք է ինքնաբերաբար արտապատկերի հետեւյալը.

- տեղական ժամանակը (Յու Թի Սի ժամ + վարորդի նշած ժամային հաշվարկի արդյունքը)
- շահագործման ռեժիմը,

- վարորդի եւ վարորդի օգնականի ընթացիկ գործողությունը,

- վարորդին վերաբերող տեղեկություն.

—

- եթե ընթացիկ գործողությունը ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ է, ապա արտապատկերվում է նրա ընթացիկ անընդհատ մեքենավարման ժամանակը եւ կուտակային հանգստի ժամանակը,

- եթե ընթացիկ գործողությունը ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ չէ, ապա՝ վարորդի գործողության (նշման պահից սկսված) ընթացիկ տեւողությունը եւ ընթացիկ կուտակային հանգստի ժամանակը,

- վարորդի օգնականին վերաբերող տեղեկություն.

—

- նրա գործողության (նշման պահից սկսված) ընթացիկ տեւողությունը:

Յուրաքանչյուր վարորդի վերաբերյալ տվյալների արտապատկերումը պետք է լինի պարզ եւ հասկանալի: Այն դեպքերում, երբ վարորդին եւ վարորդի օգնականին վերաբերող տեղեկությունը չի կարող միառժամանակ արտապատկերվել, ձայնագրող սարքավորումը պետք է ավտոմատ կերպով արտապատկերի վարորդին վերաբերող տեղեկությունը եւ պետք է օգտագործողին թույլ տա՝ նշել վարորդի օգնականին վերաբերող տեղեկությունը:

Այն դեպքերում, երբ արտապատկերման լայնությունը թույլ չի տալիս ինքնաբերաբար արտապատկերել շահագործման ռեժիմը, ձայնագրող սարքավորումը պետք է կարճ ժամանակով արտապատկերի շահագործման նոր ռեժիմը դրա փոփոխման ժամանակ:

Քարտը տեղադրելիս ձայնագրող սարքավորումը պետք է արտապատկերի քարտատիրոջ անունը:

Երբ «ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ» պայմանն է բաց, ապա, օգտագործելով համապատասխան գրաֆիկական պատկերներ, էկրանը պետք է ինքնաբերաբար ցույց տա, որ այդ պայմանն է բաց (թույլատրվում է միառժամանակ վարորդի ընթացիկ գործողությունը ցույց չտալ):

## 15.2. **Չգուշացման դիսփլեյ**

Օգտագործելով առաջին հերթին 3-րդ հավելվածում նշված գրաֆիկական պատկերները՝ ձայնագրող սարքավորումը պետք է զգուշացնող տեղեկություն տրամադրի՝ անհրաժեշտության դեպքում այն լրացնելով հավելյալ թվային տեղեկությամբ: Կարելի է նաեւ ավելացնել զգուշացման բառացի նկարագիրը՝ վարորդի նախընտրած լեզվով:

## 15.3. **Մուտք ցանկին**

Ձայնագրող սարքավորումը պետք է պատշաճ ցանկային կառուցվածքի միջոցով տրամադրի անհրաժեշտ հրահանգներ:

## 15.4. **Այլ դիսփլեյներ**

Պետք է պահանջի դեպքում հնարավոր լինի արտապատկերել ըստ ընտրության.

- Յու Թի Սի օրն ու ժամը,
- շահագործման ռեժիմը (եթե ավտոմատ կերպով չի տրամադրվում),
- վարորդի անընդհատ մեքենավարման ժամանակը եւ կուտակային հանգստի ժամանակը,
- վարորդի օգնականի անընդհատ մեքենավարման ժամանակը եւ կուտակային հանգստի ժամանակը,
- նախորդ եւ ընթացիկ շաբաթվա ընթացքում վարորդի կուտակային մեքենավարման ժամանակը,
- նախորդ եւ ընթացիկ շաբաթվա ընթացքում վարորդի օգնականի կուտակային մեքենավարման ժամանակը,
- նույն ձեւաչափով վեց տպվածքից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Տպվածքների բովանդակության արտապատկերումը պետք է տող առ տող հաջորդական լինի: Եթե պատկերի լայնությունը 24 նիշից ավելի է, ապա օգտագործողին պետք է պատշաճ կերպով ամբողջական տեղեկատվություն տրամադրվի (մի քանի տող, գրվածքի ուղղաձիգ թերթում, ...): Տպվածքների՝ ձեռագիր տեղեկությանը նվիրված տողերը կարող են արտապատկերման համար բաց թողնվել:

## 16. Տպել

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա իր տվյալների հիշողությունից եւ (կամ) պտուտաչափի քարտից տեղեկատվություն տպել՝ համաձայն հետեւյալ վեց տպվածքների.

- վարորդի գործողությունները՝ քարտի ամենօրյա տպվածքից,
- վարորդի գործողությունները՝ մեքենայի միավորի ամենօրյա տպվածքից,
- պատահարներն ու անսարքությունները՝ քարտի տպվածքից,
- պատահարներն ու անսարքությունները՝ մեքենայի միավորի տպվածքից,
- տեխնիկական տվյալների տպվածք,
- արագության գերազանցման վերաբերյալ տպվածք:

Այս տպվածքների մանրամասն ձեւաչափն ու բովանդակությունը հստակեցվում է 4-րդ հավելվածով:

Տպվածքների վերջում կարող են հավելյալ տվյալներ տրամադրվել:

Ձայնագրող սարքավորումը կարող է հավելյալ տպվածքներ տրամադրել, եթե դրանք հստակորեն տարբերվում են վերոնշյալ վեց տպվածքներից:

«Վարորդի գործողությունները՝ քարտի ամենօրյա տպվածքից» եւ «պատահարներն ու անսարքությունները՝ քարտի տպվածքից» հնարավոր է ձեռք բերել միայն այն դեպքում, երբ ձայնագրող սարքավորման մեջ վարորդի կամ արհեստանոցի քարտ է տեղադրված: Նախքան տպելը՝ ձայնագրող սարքավորումը պետք է թարմացնի համապատասխան քարտի վրայի տվյալները:

«Վարորդի գործողությունները՝ քարտի ամենօրյա տպվածքից» կամ «պատահարներն ու անսարքությունները՝ քարտի տպվածքից» տրամադրելու համար ձայնագրող սարքավորումը պետք է.

- կամ ավտոմատ կերպով նշի վարորդի կամ արհեստանոցի քարտը, եթե այս քարտերից միայն մեկն է տեղադրված,
- կամ, եթե այս քարտերից երկուսն էլ տեղադրված են ձայնագրող սարքի մեջ, այն պետք է հրահանգի՝ ընտրելու համար քարտային աղբյուրը կամ վարորդի քարտի բնիկում տեղադրված քարտը:

Տպիչը պետք է յուրաքանչյուր տողի վրա 24 նիշ տպելու հնարավորություն ունենա:

Նիշերի նվազագույն չափսը պետք է լինի 2.1մմ բարձրության եւ 1.5մմ լայնության:

Տպիչը պետք է ճանաչի լատինական 1 եւ հունական նիշերը, որոնք սահմանված են ISO 8859 1-ին եւ 7-րդ մասերով՝ համաձայն 1-ին հավելվածի 4-րդ գլխի «նիշերի խմբի»:

Տպիչները պետք է այնպես նախագծված լինեն, որ այս տպվածքներն այն աստիճան պարզությամբ տրամադրեն, որպեսզի խուսափեն ցանկացած անընթեռնելի դեպքերից:

Տպվածքները պետք է պահպանեն իրենց տրամաչափերը եւ տպված տվյալները խոնավության (10-90%) եւ ջերմաստիճանի նորմալ պայմաններում:

Ձայնագրող սարքի համար օգտագործվող թուղթը պետք է իր վրա կրի համապատասխան տեսակի հաստատման նշանը, եւ պետք է նշված լինի, թե որ տեսակի ձայնագրող սարքավորումների համար այն կարող է օգտագործվել: Տպվածքները պետք է պահպանման սովորական պայմաններում (լուսավորություն, խոնավություն եւ ջերմաստիճան) առնվազն մեկ տարի մնան միանգամայն ընթեռնելի եւ հասկանալի:

Պետք է նաեւ հնարավոր լինի այս փաստաթղթերին ավելացնել ձեռագիր նշումներ, ինչպես, օրինակ՝ վարորդի ստորագրությունը:

Ձայնագրող սարքավորումը պետք է ապահովի թղթի ելքը, այն դեպքերում, երբ նոր թուղթ դնելուց հետո այն վերստին տպում է տպվածքի սկզբից կամ շարունակում է տպել եւ տրամադրում է հասկանալի տեղեկություն նախորդ տպված հատվածի վերաբերյալ:

## **17. Չգուշացումներ**

Ցանկացած պատահար եւ (կամ) անսարքություն հայտնաբերելու դեպքում ձայնագրող սարքավորումը պետք է դրա մասին զգուշացնի վարորդին:

Հոսանքի մատակարարման ընդհատման վերաբերյալ զգուշացումը կարող է հետաձգվել այնքան ժամանակ, մինչեւ հոսանքի մատակարարման վերսկսումը:

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա վարորդին զգուշացնելու 4 ժամ 30 րոպե անընդհատ մեքենավարման ժամանակի լրանալուց 15 րոպե առաջ եւ լրանալու պահին:

Զգուշացումները պետք է տեսանելի լինեն: Տեսողական զգուշացումներից բացի՝ ձայնային զգուշացումներ եւս կարող են լինել:

Տեսողական զգուշացումները պետք է օգտագործողի համար հստակորեն ճանաչելի լինեն, պետք է լինեն վարորդի տեսադաշտում, եւ պետք է միանգամայն ընթեռնելի լինեն եւ՝ ցերեկը, եւ՝ գիշերը:

Տեսողական զգուշացումները պետք է ձայնագրող սարքավորման մեջ ներկառուցված լինեն եւ (կամ) ձայնագրող սարքավորումից հեռու լինեն:

Երկրորդ դեպքում այն պետք է իր վրա կրի «T» նշանը եւ պետք է լինի դեղին կամ ծիրանագույն:

Եթե օգտագործողը, ձայնագրող սարքավորման որեւէ կոճակ սեղմելով, չի հաստատում զգուշացումը, ապա այն պետք է առնվազն 30 վայրկյան տեւողություն ունենա: Այս առաջին հաստատումը չպետք է էկրանից ջնջի զգուշացման պատճառը, որին անդրադառնում է հաջորդ պարբերությունը:

Զգուշացման պատճառը պետք է էկրանի վրա արտապատկերված եւ տեսանելի մնա այնքան ժամանակ, մինչեւ որ օգտագործողն այն կհաստատի՝ օգտագործելով ձայնագրող սարքավորման համապատասխան հրահանգը կամ կոճակը:

Հավելյալ զգուշացումներ եւս կարող են տրամադրվել, քանի դեռ դրանք, նախորդ զգուշացումների կողքին, չեն շփոթեցնում վարորդներին:

## **18. Տվյալների ներբեռնում արտաքին կրիչների վրա**

Ձայնագրող սարքավորումը պետք է հնարավորություն ունենա, պահանջի դեպքում, տվյալների հիշողությունից կամ վարորդի քարտից տվյալներ ներբեռնել արտաքին կրիչների վրա՝ չափաբերման/ներբեռնման միացման միջոցով: Նախքան ներբեռնելը՝ ձայնագրող սարքավորումը պետք է թարմացնի համապատասխան քարտի վրայի տվյալները:

Բացի դրանից եւ որպես ընտրովի հատկանիշ՝ ձայնագրող սարքավորումը հնարավորություն ունի շահագործման ցանկացած ռեժիմում տվյալներ ներբեռնելու այլ միացման միջոցով՝ այնպիսի կազմակերպության համար, որը լիազորված է այս ուղու համար: Նման դեպքերում կազմակերպության ռեժիմում տվյալներ ստանալու իրավունքները պետք է վերաբերեն այս ներբեռնմանը:

Ներբեռնումը չպետք է փոփոխի կամ ջնջի որեւէ պահպանված տվյալ:

Չափաբերման/ներբեռնման միացման էլեկտրական բնիկը սահմանվում է 6-րդ հավելվածով:

Ներբեռնման ընթացակարգերը սահմանված են 7-րդ հավելվածով:

### **19. Հավելյալ արտաքին սարքավորումներին ելքագրված տվյալներ**

Եթե ձայնագրող սարքավորումը չունի արագության եւ (կամ) պտուտաչափի էկրան, ապա այն պետք է ելքային ազդանշաններ փոխանցի, որպեսզի արագաչափն արագությունը ցույց տա, եւ (կամ) վազքաչափը ցույց տա ընդհանուր անցած ճանապարհը: Կամ ընտիր Վերահսկիչ տարածքի ցանցի անվադողերի միացումից (ISO 11898 Ճանապարհային ավտոմեքենաներ. թվային տեղեկատվության փոխանակում. Վերահսկիչ տարածքի ցանց՝ բարձր արագությամբ հաղորդակցության համար) զատ համապատասխան սերիական կապ օգտագործելով՝ մեքենայի միավորը պետք է նաեւ կարողանա տրամադրել հետեւյալ տվյալները, որպեսզի հնարավոր դարձնի դրանց մշակումը մեքենայի վրա տեղադրված այլ էլեկտրական միավորների կողմից.

- ընթացիկ Յու Թի Սի օրն ու ժամը,
- մեքենայի արագությունը,
- փոխադրամիջոցի անցած ընդհանուր ճանապարհը (վազքաչափ),
- տվյալ պահին նշված վարորդը եւ վարորդի օգնականը,
- տեղեկատվություն այն մասին, թե արդյոք տվյալ պահին վարորդի կամ վարորդի օգնականի բնիկի մեջ որեւէ պտուտաչափի քարտ տեղադրված է, եւ (առկայության դեպքում) տեղեկատվություն համապատասխան քարտային նույնականացման մասին (քարտային համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը):

Ի հավելումն սույն նվազագույն ցուցակի՝ այլ տվյալներ եւս կարող են տրամադրվել:

Երբ մեքենայի շարժիչը միացված է, այս տվյալները պետք է մշտապես հաղորդվեն: Երբ մեքենայի շարժիչն անջատված է, առնվազն վարորդի կամ վարորդի օգնականի գործողությունների ցանկացած փոփոխություն եւ (կամ) պտուտաչափի ցանկացած մուտքարկում կամ հեռացում պետք է հանգեցնի համապատասխան տվյալների



տրամադրմանը: Այն դեպքերում, երբ տվյալների տրամադրումը դադարում է մեքենայի շարժիչի անջատված լինելու հետեանքով, տվյալները պետք է տրամադրվեն այն ժամանակ, երբ մեքենայի շարժիչը նորից միացվում է:

## 20. Չափաբերում

Չափաբերման գործառույթը պետք է թույլ տա.

- ավտոմատ կերպով շարժման սենսորը միացնել մեքենայի միավորին,
- թվայնացման միջոցով ձայնագրող սարքավորման հաստատունը (k) հարմարեցնել մեքենայի բնութագրիչ գործակցին (w) (երկու կամ ավելի փոխանցման գործակից ունեցող մեքենաների վրա պետք է տեղադրվի փոխարկման սարք, որի միջոցով այս տարբեր գործակիցները կարող են ավտոմատ կերպով համապատասխանեցվել այն գործակցին, որի համար սարքավորումը հարմարեցվել է մեքենային),
- համապատասխանեցնել ընթացիկ ժամանակը (առանց սահմանափակումների),
- համապատասխանեցնել վազքաչափի ընթացիկ ցուցմունքը,
- թարմացնել տվյալների հիշողության մեջ պահպանված շարժման սենսորի նույնականացման տվյալները,
- թարմացնել եւ հաստատել ձայնագրող սարքավորմանը հայտնի մյուս պարամետրերը. մեքենայի նույնականացում, w, l, անվադողի չափը եւ, կիրառելիության դեպքում, արագությունը սահմանափակող սարքի կարգավորումները:

Շարժման սենսորի միացումը մեքենայի միավորին պետք է առնվազն ներառի՝

- շարժման սենսորի մեջ պահպանված շարժման սենսորի տեղադրման մասին տվյալների թարմացում (ըստ անհրաժեշտության),
- շարժման սենսորի նույնականացման անհրաժեշտ տվյալների կրկնօրինակում շարժման սենսորից մեքենայի միավորի մեջ:

Չափաբերման գործառույթը պետք է հնարավորություն ունենա չափաբերման/ներբեռնման միացման միջոցով ընդունելու անհրաժեշտ տվյալներ՝ համաձայն 8-րդ հավելվածով սահմանված չափաբերման ընթացակարգի: Չափաբերման գործառույթը կարող է նաեւ անհրաժեշտ տվյալներ ընդունել այլ միացումների միջոցով:

## **21. Ժամանակի համապատասխանեցում**

Ժամանակի համապատասխանեցման գործառույթը պետք է թույլ տա համապատասխանեցնել տվյալ պահի ժամը առավելագույնը մեկ րոպեի չափով եւ առնվազ յոթնօրյա միջակայքով:

Ժամանակի համապատասխանեցման գործառույթը պետք է թույլ տա չափաբերման ռեժիմում առանց սահմանափակումների համապատասխանեցնել տվյալ պահի ժամը:

## **22. Աշխատանքի կատարման բնութագրեր**

Մեքենայի միավորը պետք է միանգամայն շահագործելի լինի  $-20^{\circ}\text{C}$ -ից  $70^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի պայմաններում, իսկ շարժման սենսորը՝  $-40^{\circ}\text{C}$ -ից  $135^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի պայմաններում: Տվյալների հիշողության պարունակությունը պետք է պահպանվի մինչեւ  $-40^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի պայմաններում:

Մեքենայի միավորը պետք է միանգամայն շահագործելի լինի 10%- 90% խոնավության պայմաններում:

Ձայնագրող սարքավորումը պետք է պաշտպանված լինի լարման բարձրացումից, ֆազ-0 օղակի սխալ միացումից եւ կարճ միացումներից:

Ձայնագրող սարքավորումը պետք է համապատասխանի Հանձնաժողովի 1995 թվականի հոկտեմբերի 31-ի 95/54/ԵՀ հրահանգին՝ հարմարեցվելով Խորհրդի «Տեխնիկական առաջընթացի մասին» 72/245/ԵՏՀ հրահանգին, որը վերաբերում է էլեկտրամագնիսական համատեղելիությանը, եւ պետք է պաշտպանված լինի էլեկտրակայուն լիցքերից ու հոսանքի տատանումներից:

## **23. Նյութերը**

Ձայնագրող սարքավորման բոլոր բաղկացուցիչ մասերը պետք է պատրաստված լինեն բավականաչափ դիմացկունությամբ, մեխանիկական ամրությամբ, էլեկտրական եւ մագնիսական կայուն հատկություններով օժտված նյութերից:

Օգտագործման նորմալ պայմաններում սարքավորման բոլոր ներքին դետալները պետք է պաշտպանված լինեն խոնավությունից եւ փոշուց:

Համաձայն ՄԵՀ 529 ստանդարտի՝ մեքենայի միավորը պետք է ունենա IP-40 պաշտպանության աստիճան, իսկ շարժման սենսորը պետք է ունենա IP-64 պաշտպանության աստիճան:

Ձայնագրող սարքավորումը պետք է ենթարկվի համապատասխան տեխնիկական մասնագրերին, որոնք վերաբերում են էրգոնոմիկ կառուցվածքին:

Ձայնագրող սարքավորումը պետք է պաշտպանված լինի պատահաբար վնասվելուց:

#### **24. Նշումներ**

Եթե ձայնագրող սարքավորումն արտապատկերում է մեքենայի վազքաչափի ցուցմունքը եւ արագությունը, հետեւյալ մանրամասները պետք է երեւան էկրանի վրա.

- հեռավորությունը ցույց տվող թվի կողքին՝ «կմ» հապավումով արտահայտված հեռավորության չափման միավորը,
- արագությունը ցույց տվող թվի կողքին՝ «կմ/ժամ» հապավումը:

Ձայնագրող սարքավորումը հնարավորություն ունի նաեւ արագությունը մղոններով ցույց տալ: Այս դեպքում արագության չափման միավորը պետք է արտահայտվի մղոն/ժամով:

Ձայնագրող սարքավորման յուրաքանչյուր առանձին բաղադրիչի վրա պետք է նկարագրող պիտակ ամրացվի, որը ցույց կտա հետեւյալ մանրամասները.

- սարքավորումն արտադրողի անվանումը եւ հասցեն,
- արտադրողի սարքավորման մասերի համարը եւ սարքավորումն արտադրելու տարեթիվը,
- սարքավորման սերիական համարը,
- սարքավորման տեսակի հաստատման նշանը:

Երբ ֆիզիկական տարածքը բավարար չէ, որպեսզի ցույց տա վերոնշյալ բոլոր մանրամասնությունները, նկարագրիչ պիտակը պետք է առնվազն տրամադրի արտադրողի անվանումն ու ապրանքանիշը եւ սարքավորման մասերի համարը:

**IV. Պտուտաչափի քարտերի համար ներկայացվող պատրաստման եւ գործառական պահանջները**

**1. Տեսանելի տվյալներ**

Դիմերեսը պարունակում է.

«Վարորդի քարտ» կամ «Վերահսկման քարտ» կամ «Արհեստանոցի քարտ» կամ «Կազմակերպության քարտ» բառերը՝ տպված մեծ տառաչափերով՝ քարտը տրամադրած անդամ պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներով՝ ըստ քարտի տեսակի,

նույն բառերը Համայնքի մյուս պաշտոնական լեզուներով՝ որպես քարտի հետին ֆոն.

<b>Իսպաներեն</b>	TARJETA DEL CONDUCTOR	TARJETA DE CONTROL	TARJETA DEL CENTRO DE ENSAYO	TARJETA DE LA EMPRESA
<b>Դանիերեն</b>	FØRERKORT	KONTROLKORT	VÆRKSTEDSKORT	VIRKSOMHEDSKORT
<b>Գերմաներեն</b>	FAHRERKARTE	KONTROLLKARTE	WERKSTATTKARTE	UNTERNEHMENSKARTE
<b>Հունարեն</b>	ΚΑΡΤΑ ΟΔΗΓΟΥ	ΚΑΡΤΑ ΕΛΕΓΧΟΥ	ΚΑΡΤΑ ΚΕΝΤΡΟΥ ΔΟΚΙΜΩΝ	ΚΑΡΤΑ ΕΠΙΧΕΙΡΗΣΗΣ
<b>Անգլերեն</b>	DRIVER CARD	CONTROL CARD	WORKSHOP CARD	COMPANY CARD
<b>Ֆրանսերեն</b>	CARTE DE CONDUCTEUR	CARTE DE CONTROLEUR	CARTE D'ATELIER	CARTE D'ENTREPRISE
<b>Կելտերեն</b>	CÁRTA TIOMÁNAÍ	CÁRTA STIÚRTHA	CÁRTA CEARDLAINNE	CÁRTA COMHLACHTA
<b>Իտալերեն</b>	CARTA DEL CONDUCENTE	CARTA DI CONTROLLO	CARTA DELL'OFFICINA	CARTA DELL'AZIENDA
<b>Հոլանդերեն</b>	BESTUURDERS KAART	CONTROLEKAART	WERKPLAATSKAART	BEDRIJFSKAART

<b>Պորտուգալերեն</b>	CARTÃO DE CONDUTOR	CARTÃO DE CONTROLO	CARTÃO DO CENTRO DE ENSAIO	CARTÃO DE EMPRESA
<b>Ֆիններեն</b>	KULJETTAJA KORTTILLA	VALVONTA KORTILLA	TESTAUSASEMA KORTILLA	YRITYSKORTILLA
<b>Շվեդերեն</b>	FÖRARKORT	KONTROLLKORT	VERKSTADSKORT	FÖRETAGSKORT

քարտը տրամադրող անդամ պետության անվանումը (կամընտիր),

քարտը տրամադրող անդամ պետության տարբերանշանը՝ տպագրված նեգատիվով կապույտ ուղղանկյան մեջ եւ շրջապատված 12 դեղին աստղերով՝ Տարբերանշանները պետք է լինեն հետեւյալը՝

B      Բելգիա

DK      Դանիա

D      Գերմանիա

GR      Հունաստան

E      Իսպանիա

F      Ֆրանսիա

IRL      Իռլանդիա

- I Իտալիա
- L Լյուքսեմբուրգ
- NL Նիդեռլանդներ
- A Ավստրիա
- P Պորտուգալիա
- FIN Ֆինլանդիա
- S Շվեդիա
- UK Միացյալ Թագավորություն

տրված քարտին հատուկ տեղեկություններ՝ հետեւյալ կերպ թվարկված.

	<b>Վարորդի քարտ</b>	<b>Վերահսկման քարտ</b>	<b>Կազմակերպության կամ արհեստանոցի քարտ</b>
<b>1.</b>	Վարորդի ազգանունը	Վերահսկիչ մարմնի անվանումը	Կազմակերպության կամ արհեստանոցի քարտ

2.	Վարորդի անունը (անուն ները)	Վերահսկողի ազգանունը (առկայության դեպքում)	Քարտատիրոջ ազգանունը (առկայության դեպքում)
3.	Վարորդի ծննդյան ամսաթիվը	Վերահսկողի անունը (անունները) (առկայության դեպքում)	Քարտատիրոջ անունը(անունները) (առկայության դեպքում)
4.(ա)	Քարտի վավերականության ժամկետի սկիզբը		
բ)	Քարտի վավերականության ժամկետը լրանալու օրը (առկայության դեպքում)		
գ)	Քարտը տրամադրող մարմնի անվանումը (կարող է տպված լինել քարտի դարձերեսին)		
դ)	5-րդ վերնագրում ներկայացված համարից տարբերվող այլ համար՝ վարչական նպատակներով (կամընտիր)		
5.(ա)	Վարորդական իրավունքի համարը (վարորդի քարտը տրամադրելու օրվա դրությամբ)		
4	Քարտի համարը		
6.	Վարորդի լուսանկարը	Վերահսկողի լուսանկարը (կամընտիր)	—
7.	Վարորդի	Քարտատիրոջ	ստորագրությունը

	ստորագրությունը	(կամ ընտիր)	
<b>8.</b>	սովորական բնակության վայրը կամ քարտատիրոջ փոստային հասցեն (կամ ընտիր)	Վերահսկող մարմնի փոստային հասցեն	Կազմակերպության կամ արհեստանոցի փոստային հասցեն

ամսաթվերը պետք է գրվեն «օր/ամիս/տարի» կամ «օր.ամիս.տարի» ձևաչափով (օր,ամիս,տարի),

Դարձերեսը ներառում է.

քարտի դիմերեսի համարակալված տարրերի բացատրություն,

քարտատիրոջ հատուկ գրավոր համաձայնությամբ՝ քարտի հետ կապված հարցերի կարգավորմանը չվերաբերող տեղեկություն եւս կարելի է ավելացնել. նշված տեղեկությունները չպետք է որեւէ կերպ փոխեն օրինակի օգտագործումը՝ որպես պտուտաչափի քարտ :



# COMMUNITY MODEL TACHOGRAPH CARDS

FRONT

REVERSE

<p><b>DRIVER CARD</b></p> <p>1. 2. 3. 4a. 4c. (4d.) 5a. 5b. 7. (8.)</p>	<p><b>MEMBER STATE</b></p> <p>TARJETA DEL CONDUCTOR FØRERKORT FAHRERKARTE ΚΑΡΤΑ Ο ΔΗΤΟΡ 4b. DRIVER CARD CARTE DE CONDUCTEUR CÁRTA TIOMÁNAI CARTA DEL CONDUCENTE BESTUURDERSKAART CARTÃO DE CONDUTOR KULJETTAJAKORTTILLA FÖRARKORT</p>	<p>1. Surname 2. First name(s) 3. Birth date 4a. Date of start of validity of card 4b. Administrative expiry date of card 4c. Issuing authority (4d.) No for national administrative purposes 5a. Driving license number 5b. Card number 6. Photograph 7. Signature (8.) Address</p> <p>Please return to: <b>NAME OF AUTHORITY AND ADDRESS</b></p>
<p><b>CONTROL CARD</b></p> <p>(1.) (2.) (3.) 4a. 4c. (4d.) 5b. (7.) 8.</p>	<p><b>MEMBER STATE</b></p> <p>TARJETA DE CONTROL KONTROLKORT KONTROLLKARTE (4b.) ΚΑΡΤΑ ΕΛΕΓΧΟΥ CONTROL CARD CARTE DE CONTROLEUR CÁRTA STIÚRTHA CARTA DI CONTROLLO CONTROLEKAART CARTÃO DE CONTROLO VALVONTAKORTTILLA KONTROLLKORT</p>	<p>1. Control Body (2.) Surname (3.) First name(s) 4a. Date of start of validity of card (4b.) Administrative expiry date of card 4c. Issuing authority (4d.) No for national administrative purposes 5b. Card number (6.) Photograph (7.) Signature 8. Address</p> <p>Please return to: <b>NAME OF AUTHORITY AND ADDRESS</b></p>
<p><b>WORKSHOP CARD</b></p> <p>(1.) (2.) (3.) 4a. 4c. (4d.) 5b. (7.) 8.</p>	<p><b>MEMBER STATE</b></p> <p>TARJETA DEL CENTRO DE ENSAJO VÆRKSTEDSKORT WERKSTATTKARTE ΚΑΡΤΑ ΚΕΝΤΡΟΥ ΔΟΚΙΜΩΝ 4b. WORKSHOP CARD CARTE D'ATELIER CÁRTA CEARDLAINNE CARTA DELL'OFFICINA WERKPLAATSKAART CARTÃO DO CENTRO DE ENSAIO TESTAUSASEMAKORTTILLA VERKSTADSKORT</p>	<p>1. Workshop Name (2.) Surname (3.) First name(s) 4a. Date of start of validity of card 4b. Administrative expiry date of card 4c. Issuing authority (4d.) No for national administrative purposes 5b. Card number (7.) Signature 8. Address</p> <p>Please return to: <b>NAME OF AUTHORITY AND ADDRESS</b></p>
<p><b>COMPANY CARD</b></p> <p>(1.) (2.) (3.) 4a. 4c. (4d.) 5b. (7.) 8.</p>	<p><b>MEMBER STATE</b></p> <p>TARJETA DE LA EMPRESA VIRKSOMHEDSKORT UNTERNEHMENSKARTE ΚΑΡΤΑ ΕΠΙΧΕΙΡΗΣΗΣ 4b. COMPANY CARD CARTE D'ENTREPRISE CÁRTA COMHLACHTA CARTA DELL'AZIENDA BEDRIJFSKAART CARTÃO DE EMPRESA YRITYSKORTTILLA FÖRETAGSKORT</p>	<p>1. Company Name (2.) Surname (3.) First name(s) 4a. Date of start of validity of card 4b. Administrative expiry date of card 4c. Issuing authority (4d.) No for national administrative purposes 5b. Card number (7.) Signature 8. Address</p> <p>Please return to: <b>NAME OF AUTHORITY AND ADDRESS</b></p>

Պտուտաչափի քարտերը պետք է տպվեն հետին ֆոնի հետեւյալ գերակա գույներով.

- վարորդի քարտը՝ սպիտակ,
- վերահսկման քարտը՝ կապույտ,
- արհեստանոցի քարտը՝ կարմիր,
- կազմակերպության քարտը՝ դեղին:

Քարտի ֆիզիկական պաշտպանվածության եւ քարտի՝ խարդախությունից եւ ապօրինի միջամտությունից պաշտպանվածության նպատակով պտուտաչափի քարտը պետք է ունենա առնվազն հետեւյալ հատկանիշները.

- պաշտպանված հետնապատկեր՝ մանրագծերով գիլիոշիրային պատկերներով եւ ծիածանային տպագրությամբ,

- լուսանկարի համար նախատեսված վայրը, պաշտպանված հետնապատկերը եւ լուսանկարը պետք է իրար վրա լինեն,

- առնվազն մեկ երկգույն միկրոգրություն

Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո կարող են ավելացնել գույներ կամ նշաններ, ինչպես, օրինակ՝ ազգային խորհրդանիշներ եւ պաշտպանիչ հատկանիշներ՝ չհակասելով սույն հավելվածի մյուս դրույթներին:

## **2. Անվտանգությունը**

Համակարգի անվտանգությունը նպատակ ունի պաշտպանելու քարտերի եւ ձայնագրող սարքավորման միջեւ փոխանակվող տվյալների ամբողջականությունն ու վավերականությունը, պաշտպանելու քարտերից ներբեռնված տվյալների ամբողջականությունն ու վավերականությունը՝ միայն ձայնագրող սարքավորմանը վերապահելով որոշակի գրանցման գործառույթներ՝ բացառելով քարտերի վրա պահպանված տվյալների կեղծման ցանկացած հնարավորություն, կանխելով ապօրինի միջամտությունները եւ հայտնաբերելով նմանատիպ ցանկացած փորձ:

Որպեսզի համակարգի անվտանգությունն իրականացվի, ձայնագրող սարքավորումները պետք է բավարարեն պտուտաչափի քարտի ընդհանուր անվտանգության թիրախներով սահմանված (10-րդ հավելված) անվտանգության պահանջները:

Պտուտաչափի քարտերը պետք է ընթեռնելի լինեն նաեւ այլ սարքավորումների, ինչպես, օրինակ՝ անհատական համակարգիչների համար:

## **3. Ստանդարտները**

Պտուտաչափի քարտերը պետք է ենթարկվեն հետեւյալ ստանդարտներին.

- ISO/IEC 7810 Նույնականացման քարտեր. Ֆիզիկական բնութագրեր,
- ISO/IEC 7816 Նույնականացման քարտեր. Ինտեգրացված միացման սխեմաներ.

—

Մաս 1. Ֆիզիկական բնութագրեր,

Մաս 2. միացումների չափսերն ու վայրերը,

- Մաս 3. էլեկտրական ազդանշաններն ու փոխանցման ընթացակարգերը,

- Մաս 4. Ներարդյունաբերական հրահանգների փոխանակում,

- Մաս 8. Անվտանգության վերաբերյալ ներարդյունաբերական հրահանգներ,

- ISO/IEC 10373. Նույնականացման քարտեր.Ստուգման մեթոդներ.:

#### **4. Շրջակա միջավայրի վերաբերյալ եւ էլեկտրական մասնագրեր**

Պտուտաչափի քարտը պետք է կարողանա ճշգրտորեն աշխատել Համայնքի տարածքում սովորաբար հանդիպող բոլոր եղանակային պայմաններում եւ առնվազն -25oC-ից +70oC ջերմաստիճանային միջակայքում՝ երբեմնի մինչեւ +85oC բարձրացումներով. «երբեմնի» նշանակում է ամեն անգամ ոչ ավելի, քան 4 ժամ եւ քարտի կյանքի ընթացքում ոչ ավելի, քան 100 անգամ:

Պտուտաչափի քարտը պետք է կարողանա ճշգրտորեն աշխատել 10%-90% խոնավության միջակայքում:

Պտուտաչափի քարտը պետք է կարողանա հինգ տարի ճշգրիտ աշխատել՝ շահագործվելով շրջակա միջավայրի եւ էլեկտրական մասնագրերին համապատասխան:

Շահագործման ժամանակ պտուտաչափի քարտը պետք է համապատասխանի էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ Հանձնաժողովի՝ 1995 թվականի հոկտեմբերի 31-ի 95/54/ԵՀ հրահանգին, եւ պետք է պաշտպանված լինի էլեկտրակայուն լիցքերից:

#### **5. Տվյալների պահում**

Սույն պարբերության իմաստով.

- ժամերը գրանցվում են մեկ րոպե զգայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ,
- վազքաչափի ցուցմունքները գրանցվում են մեկ կիլոմետր զգայնությամբ,
- արագությունները գրանցվում են 1կմ/ժ զգայնությամբ,

Պտուտաչափի քարտի՝ տվյալների պահպանման պահանջները բավարարող գործառույթները, հրահանգներն ու տրամաբանական կառուցվածքները տրված են 2-րդ հավելվածում:

Սույն պարբերությունը սահմանում է տարբեր գործառական տվյալների նիշքերի (file) պահպանման նվազագույն տարողությունը: Պտուտաչափի քարտը պետք է հնարավորություն ունենա ձայնագրող սարքավորմանը տեղեկություն տրամադրելու այս նիշքերի պահպանման համար առկա իրական տարողության վերաբերյալ:

Այլ գործառությունների վերաբերող ցանկացած հավելյալ տվյալ, որը պահվում է պտուտաչափի քարտի վրա, պետք է պահվի՝ համաձայն անձնական տվյալների մշակման եւ նման տվյալների ազատ տեղաշարժի առումով անձանց պաշտպանվածության վերաբերյալ 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգի:

## **5.1. Քարտի նույնականացման եւ անվտանգության տվյալներ**

### **5.1.1. Գործածման նույնականացում**

Պտուտաչափի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ գործածման նույնականացման տվյալները.

- պտուտաչափի գործածման նույնականացումը,
- պտուտաչափի քարտի նույնականացման տեսակը:

### **5.1.2. Չիպի նույնականացում**

Պտուտաչափի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ ինտեգրացված միացման նույնականացման տվյալները.

- ինտեգրացված միացման սերիական համարը,

- ինտեգրացված միացման արտադրողի նշումները:

### **5.1.3. Ինտեգրացված միացման քարտերի նույնականացում**

Պտուտաչափի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեյալ սմարթ-քարտերի նույնականացման տվյալները.

- քարտի սերիական համարը (ներառյալ արտադրողի նշումները),
- քարտի տեսակի հաստատման համարը,
- քարտի անհատականացված նույնականացումը (ID),
- տեղադրողի նույնականացումը,
- ինտեգրացված միացման նույնականացումը:

### **5.1.4. Անվտանգության տարրեր**

Պտուտաչափի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեյալ անվտանգության տարրերի վերաբերյալ տվյալները.

- Եվրոպական հանրային բանաձեւը,
- Անդամ պետությունների հավաստագիրը,
- քարտի հավաստագիրը,
- քարտի գաղտնի բանաձեւը:

## **5.2. Վարորդի քարտ**

### **5.2.1. Քարտի նույնականացում**

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեյալ քարտային նույնականացման տվյալները.

- քարտի համարը,

- քարտը տրամադրած անդամ պետության անվանումը, քարտը տրամադրած մարմնի անվանումը, քարտի տրամադրման ամսաթիվը,
- քարտի վավերականության ժամկետի սկիզբն ու ավարտը:

#### **5.2.2. Քարտատիրոջ նույնականացում**

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ քարտատիրոջ նույնականացման տվյալները.

- քարտատիրոջ ազգանունը,
- քարտատիրոջ անունը (անունները),
- ծննդյան ամսաթիվը,
- նախընտրած լեզուն:

#### **5.2.3. Վարորդական իրավունքի տվյալները**

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ վարորդական իրավունքի տվյալները,

- քարտը տրամադրած անդամ պետության եւ քարտը տրամադրած մարմնի անվանումը,
- վարորդական իրավունքի համարը (վարորդի քարտի տրամադրման օրվա դրությամբ):

#### **5.2.4. Շահագործված մեքենաների տվյալներ**

Քարտի օգտագործման յուրաքանչյուր օրացուցային օրվա եւ այդ օրվա ընթացքում տվյալ մեքենայի շահագործման յուրաքանչյուր ժամանակահատվածի (շահագործման ժամանակահատվածը ներառում է մեքենայի մեջ քարտի բոլոր հաջորդական տեղադրումների/հեռացումների պարբերաշրջանները) համար վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ տվյալները.

- առաջին անգամ մեքենան օգտագործելու օրն ու ժամը (այսինքն՝ մեքենայի շահագործման այս ժամանակահատվածի համար քարտի առաջին անգամ տեղադրումը կամ, եթե շահագործման ժամանակահատվածն այդ պահին ընթացքի մեջ է, ապա՝ 00.00),

- տվյալ պահի դրությամբ մեքենայի վազքաչափի ցուցմունքը,
  - վերջին անգամ մեքենան օգտագործելու օրն ու ժամը (այսինքն՝ մեքենայի շահագործման այս ժամանակահատվածի համար քարտը վերջին անգամ հեռացնելը կամ, եթե շահագործման ժամանակահատվածն այդ ժամանակ ընթացքի մեջ է, ապա՝ 23.59),
  - տվյալ պահի դրությամբ մեքենայի վազքաչափի ցուցմունքը,
  - մեքենայի գրանցման համարը եւ մեքենան գրանցող անդամ պետության անվանումը:
- Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու առնվազն 84 նման գրանցումներ:

#### 5.2.5. Վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներ

Քարտի օգտագործման կամ վարորդի կողմից իր գործողությունների վերաբերյալ ձեռքով մուտքագրումներ կատարելու յուրաքանչյուր օրացուցային օրվա համար վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ տվյալները.

- ամսաթիվը,
  - ամենօրյա ներկայության հաշվիչ (այս օրացուցային օրերից յուրաքանչյուրի համար մեկով ավելանում է),
  - այս օրվա ընթացքում վարորդի անցած ընդհանուր ճանապարհը,
  - վարորդի կարգավիճակը՝ 00.00 –ի դրությամբ,
  - արդյոք վարորդն իր գործողությունը եւ (կամ) վարորդական կարգավիճակը փոխել է եւ (կամ) տեղադրել, կամ հանել է իր քարտը.
- 
- մեքենավարման կարգավիճակը (ԱՆՁՆԱԿԱԶՄ, ՄԻԱՆՁՆՅԱ),
  - բնիկը (ՎԱՐՈՐԴ, ՎԱՐՈՐԴԻ ՕԳՆԱԿԱՆ),
  - քարտի կարգավիճակը (տեղադրված, չտեղադրված),
  - գործողությունը (ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ, ՀԱՍԱՆԵԼԻ, ԱՇԽԱՏԱՆՔ, ԸՆԴՄԻՋՈՒՄ/ՀԱՆԳԻՍՏ),

- փոփոխության օրն ու ժամը:

Վարորդի քարտի հիշողությունը պետք է հնարավորություն ունենա պահպանելու վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալները առնվազն 28 օր (վարորդի միջին գործողությունը սահմանվում է որպես մեկ օրվա ընթացքում 93 գործողությունների փոփոխություն):

197 եւ 199 պահանջներով նշված ամսաթիվը պետք է այնպես պահպանվի, որ թույլ տա գործողությունների վերանայումն ըստ իրենց կատարման հերթականության, նույնիսկ ժամանակը համընկնելու դեպքերում:

#### **5.2.6. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերը**

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ տվյալները, որոնք վերաբերում են ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վայրերին ու մուտքագրվում են վարորդի կողմից.

- մուտքագրման օրն ու ժամը (կամ մեխանիկորեն մուտքագրման ընթացքում կատարված մուտքագրմանը վերաբերող օրն ու ժամը),
- գրառման տեսակը (սկիզբ կամ ավարտ, մուտքագրման պայմանը),
- մուտքագրված երկիրը կամ տարածաշրջանը,
- ավտոմեքենայի վազքաչափի ցուցմունքը:

Վարորդի քարտի հիշողությունը պետք է հնարավորություն ունենա պահպանելու առնվազն 42 զույգ նման գրանցումներ:

#### **5.2.7. Պատահարների վերաբերյալ տվյալներ**

Սույն ենթապարբերության իմաստով՝ ժամանակը պետք է գրանցվի մեկ վայրկյան զգայնությամբ:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտի տեղադրված ժամանակահատվածում ձայնագրող սարքավորման կողմից հայտնաբերված հետեւյալ պատահարների վերաբերյալ տվյալները.



- ժամանակի համընկնում (երբ այս քարտը պատահարի պատճառն է ),
- մեքենավարման ընթացքում քարտի տեղադրումը (երբ այս քարտը պատահարի առարկան է),
- վերջին քարտային փուլի սխալ ավարտում (երբ այս քարտը պատահարի առարկան է ),
- հոսանքի մատակարարման ընդհատում,
- շարժման վերաբերյալ տվյալների սխալ,
- անվտանգության խախտման փորձ:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու այս պատահարների վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- պատահարի ծածկագիրը,
- պատահարի սկսման (կամ եթե այդ պահին պատահարը տեղի է ունենում, ապա քարտը մուտք անելու) օրն ու ժամը,
- պատահարի ավարտի (կամ եթե այդ պահին պատահարը տեղի է ունենում, ապա քարտը հանելու) օրն ու ժամը,
- մեքենայի գրանցման համարը եւ գրանցող անդամ պետության անվանումը, որտեղ պատահարը տեղի է ունեցել:

*Ծանոթագրություն.. «Ժամանակի համընկնման» դեպքում.*

- պատահարի սկսման օրն ու ժամը պետք է համապատասխանեն նախորդ մեքենայից քարտի հանման օրվան եւ ժամին,
- պատահարի ավարտի օրն ու ժամը պետք է համապատասխանեն տվյալ մեքենայում քարտը մուտք անելու օրվան եւ ժամին,
- մեքենայի վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն տվյալ պահին պատահար առաջացրած մեքենային:

*Ծանոթագրություն.. «Վերջին քարտային փուլի սխալ ավարտման» պատահարի համար.*

- պատահարի սկսման օրն ու ժամը պետք է համապատասխանեն սխալ ավարտված փուլում քարտը մուտք անելու օրվան եւ ժամին,

- պատահարի ավարտի օրն ու ժամը պետք է համապատասխանեն պատահարի հայտնաբերման փուլում քարտը մուտք անելու օրվան եւ ժամին (ընթացիկ փուլ),

- մեքենայի վերաբերյալ տվյալները պետք է համապատասխանեն այն մեքենային, որում փուլը սխալ է փակվել:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու տվյալներ յուրաքանչյուր պատահարի տեսակի վերջին վեց պատահարի վերաբերյալ (այսինքն՝ 36 պատահար):

#### **5.2.8. Անսարքությունների վերաբերյալ տվյալներ**

Սույն ենթապարբերության իմաստով՝ ժամանակը պետք է գրանցվի մեկ վայրկյան զգայնությամբ:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտի տեղադրված ժամանակահատվածում ձայնագրող սարքավորման կողմից հայտնաբերված հետեւյալ անսարքությունների վերաբերյալ տվյալները.

- քարտային անսարքություն (երբ այս քարտը պատահարի առարկա է ),

- ձայնագրող սարքավորման անսարքություն:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու այս անսարքությունների վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- անսարքության կոդը,

- անսարքության սկսման (կամ եթե անսարքությունն ընթացքի մեջ է, ապա՝ քարտը մուտք անելու) օրն ու ժամը,

- անսարքության ավարտի (կամ եթե անսարքությունն ընթացքի մեջ է, ապա՝ քարտը հանելու) օրն ու ժամը,

- մեքենայի գրանցման համարը եւ գրանցող անդամ պետության անվանումը, որտեղ անսարքությունը տեղի է ունեցել:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու տվյալներ յուրաքանչյուր անսարքության տեսակից վերջին 12 անսարքությունների վերաբերյալ (այսինքն՝ 24 անսարքություն):

### 5.2.9. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու վերահսկման գործողությունների վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- վերահսկման օրն ու ժամը,
- վերահսկման քարտի համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը,
- վերահսկման տեսակը (արտապատկերում եւ (կամ) տպում, եւ (կամ) մեքենայի միավորի ներբեռնում, եւ (կամ) քարտի ներբեռնում (տե՛ս ծանոթագրությունը)),
- ներբեռնման պարագայում՝ ներբեռնման ժամանակահատվածը,
- մեքենայի գրանցման համարը եւ գրանցող անդամ պետության անվանումը, որտեղ կատարվել է վերահսկումը:

*Ծանոթագրություն.*.. անվտանգության պահանջներից կարելի է ենթադրել, որ քարտային ներբեռնումը ծայնագրվի միայն ծայնագրող սարքավորման կիրառման դեպքում:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու այդպիսի մեկ գրանցում:

### 5.2.10. Քարտային փուլի տվյալներ

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտի ընթացիկ փուլը սկսած մեքենայի վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- փուլի սկսման (այսինքն՝ քարտի տեղադրման) օրն ու ժամը՝ մեկ վայրկյանի ճշգրտությամբ,
- մեքենայի գրանցման համարը եւ գրանցող անդամ պետության անվանումը.

### 5.2.11. Հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներ

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտի տեղադրված ժամանակահատվածում մուտքագրված հատուկ պայմանների վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- մուտքագրման օրն ու ժամը,
- հատուկ պայմանի տեսակը:

Վարորդի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու այդպիսի 56 գրանցում:

### **5.3. Արհեստանոցի քարտ**

#### **5.3.1. Անվտանգության տարրեր**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու մեկ անձնական նույնականացման համար (PIN կոդ):

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու այն կրիպտոգրաֆիկական բանալիները/գաղտնագրերը, որոնք անհրաժեշտ են՝ շարժման սենսորները մեքենայի միավորներին միացնելու համար:

#### **5.3.2. Քարտի նույնականացում**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ քարտային նույնականացման տվյալները.

- քարտի համարը,
- քարտը տրամադրած անդամ պետության անվանումը, քարտը տրամադրած մարմնի անվանումը, քարտի տրամադրման ամսաթիվը,
- քարտի վավերականության ժամկետի սկիզբն ու ավարտը:

#### **5.3.3. Քարտատիրոջ նույնականացում**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտատիրոջ նույնականացման հետեւյալ տվյալները.

- արհեստանոցի անվանումը,
- արհեստանոցի հասցեն,
- քարտատիրոջ ազգանունը,
- քարտատիրոջ անունը (անունները),

- նախընտրած լեզուն:

#### **5.3.4. Շահագործված մեքենաների տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու շահագործված մեքենայի վերաբերյալ տվյալներն այնպես, ինչպես վարորդի քարտը:

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու առնվազն 4 նման գրանցումներ:

#### **5.3.5. Վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալներն այնպես, ինչպես վարորդի քարտը:

Արհեստանոցի քարտը պետք է կարողանա վարորդի գործողությունների վերաբերյալ տվյալները պահել վարորդի միջին գործողության առնվազն մեկ օրվա համար:

#### **5.3.6. Ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վերաբերյալ տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու ամենօրյա աշխատանքի սկսման եւ (կամ) ավարտի վերաբերյալ տվյալների գրանցումներն այնպես, ինչպես վարորդի քարտը:

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահելու առնվազն երեք զույգ նման գրանցումներ:

#### **5.3.7. Պատահարների եւ անսարքությունների վերաբերյալ տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու պատահարների եւ անսարքությունների վերաբերյալ տվյալներն այնպես, ինչպես վարորդի քարտը:

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու յուրաքանչյուր տեսակից ամենավերջին երեք պատահարների (այսինքն՝ 18 պատահար) եւ յուրաքանչյուր

տեսակից ամենավերջին վեց անսարքությունների (այսինքն՝ 12 անսարքություն) վերաբերյալ տվյալները:

#### **5.3.8. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալների ցանկացած գրանցում այնպես, ինչպես վարորդի քարտը:

#### **5.3.9. Հափաբերման եւ ժամանակի համապատասխանեցման տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու չափաբերման եւ (կամ) ժամանակի համապատասխանեցման գրանցումներ, որոնք քարտի տեղադրված ժամանակ կատարվել են ձայնագրող սարքավորումում:

Յուրաքանչյուր չափաբերման գրանցում պետք է հնարավորություն ունենա պահելու հետեւյալ տվյալները.

- չափաբերման նպատակը (առաջին անգամ տեղադրում, տեղադրում, պարբերական ստուգում),
- մեքենայի նույնականացում,
- թարմացված կամ հաստատված պարամետրեր (w, k, l, անվադողի չափը, արագությունը սահմանափակող սարքի կարգավորումները, վազքաչափի ցուցմունքները (հին եւ նոր), ամսաթիվը եւ ժամը (հին եւ նոր արժեքները)),
- ձայնագրող սարքավորման նույնականացում (մեքենայի միավոր, մեքենայի միավորի սերիական համարը, շարժման սենսորի սերիական համարը):

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու առնվազն 88 նման գրանցումներ:

Արհեստանոցի քարտը պետք է ունենա մի հաշվիչ, որը ցույց կտա քարտով իրականացված չափաբերումների ընդհանուր թիվը:

Արհեստանոցի քարտը պետք է ունենա մի հաշվիչ, որը ցույց կտա վերջին ներբեռնումից հետո իրականացված չափաբերումների թիվը:

### **5.3.10. Հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներ**

Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հատուկ պայմանների վերաբերյալ տվյալներն այնպես, ինչպես վարորդի քարտը: Արհեստանոցի քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու երկու նման գրանցումներ:

### **5.4. Վերահսկման քարտ**

#### **5.4.1. Քարտի նույնականացում**

Վերահսկման քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ քարտային նույնականացման տվյալները.

- քարտի համարը,
- քարտը տրամադրած անդամ պետության անվանումը, քարտը տրամադրած մարմնի անվանումը, քարտի տրամադրման ամսաթիվը,
- քարտի վավերականության ժամկետի սկիզբն ու ավարտը (առկայության դեպքում):

#### **5.4.2. Քարտատիրոջ նույնականացում**

Վերահսկման քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտատիրոջ նույնականացման հետեւյալ տվյալները.

- վերահսկիչ մարմնի անվանումը,
- վերահսկիչ մարմնի հասցեն,
- քարտատիրոջ ազգանունը,
- քարտատիրոջ անունը (անունները),
- նախընտրած լեզուն:

### **5.4.3. Վերահսկման գործողությունների վերաբերյալ տվյալներ**

Վերահսկման քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու վերահսկման գործողությունների վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- վերահսկման օրն ու ժամը,
- վերահսկման տեսակը (արտապատկերում եւ (կամ) տպում, եւ (կամ) մեքենայի միավորի ներբեռնում, եւ (կամ) քարտի ներբեռնում),
- ներբեռնման ժամանակահատվածը (առկայության դեպքում),
- մեքենայի գրանցման համարը եւ անդամ պետության՝ վերահսկվող մեքենան գրանցած մարմնի անվանումը,
- քարտի համարը եւ վերահսկվող վարորդի քարտը տրամադրած անդամ պետության անվանումը:

Վերահսկման քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու առնվազն 230 նման գրանցումներ:

### **5.5. Կազմակերպության քարտ**

#### **5.5.1. Քարտի նույնականացում**

Կազմակերպության քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու հետեւյալ քարտային նույնականացման տվյալները.

- քարտի համարը,
- քարտը տրամադրած անդամ պետության անվանումը, քարտը տրամադրած մարմնի անվանումը, քարտի տրամադրման ամսաթիվը,
- քարտի վավերականության ժամկետի սկիզբն ու ավարտը (առկայության դեպքում):

#### **5.5.2. Քարտատիրոջ նույնականացում**



Կազմակերպության քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու քարտատիրոջ վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- կազմակերպության անվանումը,
- կազմակերպության հասցեն:

### 5.5.3. Կազմակերպության գործունեության վերաբերյալ տվյալներ

Կազմակերպության քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու կազմակերպության գործունեության վերաբերյալ հետեւյալ տվյալները.

- գործունեության օրն ու ժամը,
- գործունեության տեսակը (մեքենայի միավորի մուտքագրում եւ (կամ) ելքագրում, եւ (կամ) մեքենայի միավորի ներբեռնում, եւ (կամ) քարտի ներբեռնում),
- ներբեռնման ժամանակահատվածը (առկայության դեպքում),
- մեքենայի գրանցման համարը եւ անդամ պետության՝ մեքենան գրանցած մարմնի անվանումը,
- քարտի համարը եւ քարտը տրամադրած անդամ պետության անվանումը (քարտային ներբեռնման պարագայում):

Կազմակերպության քարտը պետք է հնարավորություն ունենա պահպանելու առնվազն 230 նման գրանցումներ:

## V. ՁԱՅՆԱԳՐՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

### 1. Տեղադրում

Նոր ձայնագրող սարքավորումները պետք է տեղադրողներին եւ ավտոարտադրողներին մատակարարվեն չակտիվացված վիճակում: III(20) գլխում նշված բոլոր չափաբերման պարամետրերը պետք է համապատասխան եւ վավերական ստանդարտ արժեքներ ունենան: Այն դեպքում, երբ ոչ մի կոնկրետ արժեք չի համապատասխանում, այբբենական պարամետրերը նշվում են որպես «?», իսկ թվայինները՝ որպես «0»:

Նախքան ակտիվացումը՝ ձայնագրող սարքավորումը պետք է թույլ տա օգտվել չափաբերման գործառույթից՝ նույնիսկ գտնվելով չափաբերման ռեժիմից դուրս:

Նախքան ակտիվացումը՝ ձայնագրող սարքավորումը պետք է ոչ ձայնագրի, ոչ էլ պահպանի III.12.3-ից III. 12.9-ը եւ III. 12.12-ից III. 12.14-ը ներառյալ՝ կետերում նշված տվյալները:

Տեղադրման ընթացքում ավտոարտադրողները պետք է նախանշեն բոլոր պարամետրերը:

Ավտոարտադրողները կամ տեղադրողները պետք է տեղադրված ձայնագրող սարքավորումն ակտիվացնեն՝ նախքան մեքենան կլքի այն շինությունը, որտեղ կատարվել է սարքավորման տեղադրումը:

Ձայնագրող սարքավորման ակտիվացումը պետք է կատարվի ավտոմատ կերպով՝ քարտային բնիկներից որեւէ մեկում առաջին անգամ արհեստանոցի քարտ տեղադրելիս:

Հարկ եղած դեպքում, շարժման սենսորի եւ մեքենայի միավորի միջեւ պահանջվող առանձին միացումները պետք է կատարվեն ավտոմատ կերպով՝ նախքան ակտիվացումը կամ ակտիվացման ընթացքում:

Ակտիվացումից հետո ձայնագրող սարքավորման միջոցով պետք է ամբողջությամբ իրականացվի գործառույթների եւ տվյալների հասանելիության իրավունքները:

Ակտիվացումից հետո ձայնագրող սարքավորման ձայնագրման եւ պահպանման գործառույթները պետք է ամբողջությամբ կիրառելի լինեն:

Տեղադրմանը պետք է հաջորդի չափաբերումը: Առաջին չափաբերումը կներառի մեքենայի գրանցման համարի մուտքագրում եւ տեղի կունենա սարքավորման տեղադրումից կամ մեքենայի գրանցման համարի մուտքագրումից (կախված այն բանից, թե վերջինը որը կկատարվի) 2 շաբաթվա ընթացքում:

Ձայնագրող սարքավորումը պետք է մեքենայում այնպիսի դիրքով տեղադրված լինի, որ վարորդը կարողանա իր նստատեղից օգտվել անհրաժեշտ գործառույթներից:

## **2. Տեղադրման պիտակ**

Այն բանից հետո, երբ ձայնագրող սարքավորումը տեղադրումից հետո ստուգվել է, պետք է մի հստակ երեւացող եւ հեշտ հասանելի տեղադրման պիտակ ամրացվի ձայնագրող սարքի վրա, ներսում կամ կողքին: Հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի կողմից

կատարված յուրաքանչյուր զննումից հետո նախորդի փոխարեն պետք է մի նոր պիտակ ամրացվի:

Պիտակի վրա պետք է նշված լինեն առնվազն հետևյալ մանրամասները.

- հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի անվանումը, հասցեն կամ առետրային անվանումը,
- մեքենայի բնութագրական գործակիցը՝ արտահայտված որպես « $w = \dots$  հրում/կմ»,
- ձայնագրող սարքավորման հաստատունը՝ արտահայտված որպես « $k = \dots$  հրում/կմ»,
- անվադողերի արդյունավետ շրջանագծի երկարությունը՝ արտահայտված որպես « $1 = \dots$  մմ»,
- անվադողի չափը,
- փոխադրամիջոցի բնութագրման գործակցի որոշման եւ անվադողերի արդյունավետ շրջանագծի չափման ամսաթվերը,
- մեքենայի նույնականացման համարը:

### 3. Կապարակներումը

Հետևյալ մասերը պետք է կապարակնքվեն.

- ցանկացած միացում, որի անջատումը կարող է հանգեցնել անբացահայտելի փոփոխությունների կամ տվյալների կորստի,
- տեղադրման պիտակը, բացառությամբ այն դեպքի, երբ այն փակցված է այնպես, որ այն հնարավոր չէ հեռացնել՝ առանց վրայի նշումները վնասելու:

Վերոնշյալ կապարակնիքները կարելի է հեռացնել.

- արտակարգ իրավիճակի դեպքում,
- արագության սահմանափակման սարք տեղադրելու, կարգավորելու կամ վերանորոգելու նպատակով, կամ ցանկացած այլ սարքավորում տեղադրելու համար, որը կնպաստի ճանապարհային անվտանգությանը՝ պայմանով, որ ձայնագրող սարքավորումը կշարունակի գործել հուսալիորեն եւ ճշգրտորեն, ու շահագործման կհանձնվի հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի կողմից (VI գլխի համաձայն)՝ անմիջապես արագության

սահմանափակման սարքի կամ ճանապարհային անվտանգությանը նպաստող ցանկացած այլ սարքավորում տեղադրվելուց հետո կամ, այլ դեպքերում՝ յոթնօրյա ժամկետում:

Սույն կապարակնիքների բացման յուրաքանչյուր պարագայում պետք է նման գործողության պատճառները նշող գրավոր արձանագրություն պատրաստվի եւ տրամադրվի իրավասու մարմնին:

## **VI. Ստուգում, զննություն եւ վերանորոգում**

Վերջին անգամ թիվ 2135/98 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված 12.5 հոդվածի թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՏՀ) նշված պահանջներն այն հանգամանքների մասին, երբ կապարակնիքները կարելի է հեռացնել, սահմանված են սույն հավելվածի V(3) գլխում:

### **1. Տեղադրողների եւ արհեստանոցների հաստատում**

Անդամ պետությունները կհաստատեն, պարբերաբար կվերահսկեն եւ կհավաստագրեն այն մարմիններին, որոնք պետք է իրականացնեն.

- տեղադրումները,
- ստուգումները,
- զննումները,
- վերանորոգումները:

Սույն Կանոնակարգի 12(1) հոդվածի շրջանակներում արհեստանոցի քարտեր տրվում են միայն տեղադրողներին եւ (կամ) արհեստանոցներին, որոնք հաստատված են ձայնագրող սարքավորման ակտիվացման եւ (կամ) չափաբերման համար՝ համաձայն սույն հավելվածի կամ պատշաճ կերպով հիմնավորված լինելու դեպքում.

- որոնք չեն կարող կազմակերպության քարտ հավակնել,
- եւ որոնց մյուս մասնագիտական գործողությունները համակարգի՝ 10-րդ հավելվածով սահմանված անվտանգության համար հնարավոր վտանգ չեն ներկայացնում:

### **2. Նոր կամ վերանորոգված գործիքների ստուգում**

Յուրաքանչյուր առանձին սարք, լինի այն նոր, թե վերանորոգված, պետք է ստուգվի ճշգրիտ աշխատանքի եւ կարգալու ու ձայնագրելու ճշգրտության առումով՝ III.2.1-ով եւ III.2.2 գլխով սահմանված սահմանափակումների շրջանակներում՝ կապարակնքվելով V.3 գլխի եւ չափաբերման համաձայն:

### **3. Տեղադրման ստուգում**

Մեքենայի մեջ տեղադրվելիս՝ ամբողջ տեղադրման գործընթացը (ներառյալ ձայնագրող սարքավորումը) պետք է համապատասխանի III.2.1 եւ III.2.2 գլխում սահմանված առավելագույն թույլատրելի սահմանի վերաբերյալ դրույթներին:

### **4. Պարբերաբար կատարվող զննումներ**

Մեքենայի վրա տեղադրված սարքավորումը պետք է պարբերական զննում անցնի ցանկացած վերանորոգումից կամ մեքենայի բնութագրման գործակցի կամ անվադողերի արդյունավետ շրջանակի ցանկացած փոփոխությունից հետո: Սարքավորումը պետք է պարբերական զննում անցնի նաեւ այն բանից հետո, երբ Յու Թի Սի ժամը ավելի քան 20 րոպեով սխալ է, կամ երբ մեքենայի գրանցման համարը փոխվել է, ինչպես նաեւ երկու տարվա մեջ (24 ամիս) առնվազն մեկ անգամ:

Այս զննումները ներառում են հետեւյալ ստուգումները.

- ձայնագրող սարքի պատշաճ աշխատանքը՝ ներառյալ պտուտաչափի քարտում տվյալների պահպանման գործառույթը,
- համապատասխանությունը III.2.1 եւ III.2.2 գլխում սահմանված առավելագույն թույլատրելի սահմանի վերաբերյալ դրույթներին,
- սարքավորման վրա տեսակի հաստատման նշանի առկայությունը,
- տեղադրման պիտակի առկայությունը,
- որ սարքավորման եւ տեղադրման մյուս մասերի վրա կապարակնիքներն անվնաս են,
- անվադողի չափը եւ անվադողերի իրական շրջանագծի երկարությունը:

Այս զննումները պետք է ներառեն նաեւ չափաբերումներ:

## 5. Սխալների չափում

Տեղադրման ժամանակ եւ օգտագործման ընթացքում սխալանքների չափումն իրականացվում է հետեւյալ պայմաններով, որոնք պետք է համարվեն փորձարկման ստանդարտ պայմանների մի մաս.

- մեքենան բեռնավորված չէ, գտնվում է նորմալ աշխատանքային վիճակում,
- ճնշումն անվաղողերում համապատասխանում է արտադրողի ցուցումներին,
- անվաղողերի մաշվածքը ազգային օրենքով թույլատրելի սահմաններում է,
- մեքենայի տեղաշարժը.

—

- մեքենան պետք է ընթանա սեփական շարժիչի ուժով, ուղիղ գծով, հարթ մակերեսային վրա եւ  $50 \pm 5$  կմ/ժամ արագությամբ: Չափման հեռավորությունը պետք է լինի առնվազն 1000 մետր,
- պայմանով, որ այն կարող է համեմատաբար ճշգրիտ լինել՝ թեստի համար կարող են օգտագործվել նաեւ այլընտրանքային մեթոդներ, ինչպես, օրինակ՝ փորձարկման վայր:

## 6. Վերանորոգում

Արհեստանոցները պետք է կարողանան տվյալներ ներբեռնել ձայնագրող սարքավորումից, որպեսզի այդ տվյալները հետ վերադարձնեն համապատասխան տրանսպորտային կազմակերպությանը:

Հավաստագրված արհեստանոցները պետք է տրանսպորտային կազմակերպություններին տվյալների աններբեռնելիության վերաբերյալ հավաստագիր տրամադրեն այն դեպքում, երբ ձայնագրող սարքավորման անսարքությունը թույլ չի տալիս ներբեռնել նախորդ ձայնագրությունները, նույնիսկ այս արհեստանոցի կողմից վերանորոգվելուց հետո: Արհեստանոցը պահում է տրամադրված յուրաքանչյուր հավաստագրի պատճենն առնվազն մեկ տարի ժամանակով:

## VII. Քարտի տրամադրում

Անդամ պետությունների՝ հաստատած քարտ տրամադրելու գործընթացը պետք է համապատասխանի հետևյալին.

Պտուտաչափի քարտի առաջին թողարկման համարը պետք է հաջորդական ցուցիչ ունենա (առկայության դեպքում), ինչպես նաև պետք է ունենա փոխարինման ցուցիչ և նորացման ցուցիչ, որը հավասար կլինի «0»-ի:

Բոլոր ոչ անձնական պտուտաչափի քարտերի համարները , որոնք տրամադրվել են մեկ վերահսկման մարմնի կամ մեկ արհեստանոցի, կամ մեկ տրանսպորտային կազմակերպության, պետք է ունենան նույն առաջին 13 թվերը, և բոլորը պետք է ունենան տարբեր հաջորդական ցուցիչներ:

Առկա պտուտաչափի քարտին փոխարինող նոր թողարկված պտուտաչափի քարտը պետք է ունենա փոխարինված քարտի նույն քարտային համարը, բացառությամբ փոխարինման ցուցիչի, որը պետք է 1-ով բարձրանա (1.....9, Ա.....Ֆ հերթականությամբ):

Առկա պտուտաչափի քարտի փոխարեն թողարկված նոր պտուտաչափի քարտը պետք է ունենա փոխարինված քարտի նույն վավերականության ժամկետը:

Առկա պտուտաչափի քարտը նորացնող նոր թողարկված պտուտաչափի քարտը պետք է ունենա փոխարինված քարտի նույն քարտային համարը, բացառությամբ փոխարինման ցուցիչի, որը պետք է զրոյացվի (1.....9, Ա.....Ֆ հերթականությամբ):

Առկա պտուտաչափի քարտի փոխանակումը՝ վարչական տվյալները փոխելու նպատակով, պետք է ենթարկվի նորացման կանոններին՝ նույն անդամ պետության սահմաններում գտնվելու դեպքում, կամ առաջին տրամադրման կանոններին՝ մեկ այլ անդամ պետության կողմից կատարվելու դեպքում:

Ոչ անձնական քարտերի պարագայում «Քարտատիրոջ ազգանունը» տողը պետք է լրացվի արհեստանոցի կամ վերահսկման մարմնի անվամբ:

## VIII. Ձայնագրող սարքավորումների եւ պտուտաչափի քարտերի տեսակի հաստատում

### 1. Ընդհանուր կետեր

Սույն գլխի իմաստով՝ «ձայնագրող սարքավորում» բառերը նշանակում են «ձայնագրող սարքավորում կամ դրա բաղադրիչները»: Ոչ մի տեսակի հաստատում չի պահանջվում շարժման սենսորը մեքենայի միավորին միացնող մալուխի (մալուխների) համար Ձայնագրող սարքավորման համար նախատեսված թուղթը պետք է ձայնագրող սարքավորման բաղադրիչ համարվի:

Ձայնագրող սարքավորումը պետք է հաստատման ներկայացվի բոլոր համակցված լրացուցիչ սարքերի հետ միասին:

Ձայնագրող սարքավորումների եւ պտուտաչափի քարտերի տեսակի հաստատումը պետք է ներառի անվտանգությանը վերաբերող թեստեր, գործառույթային թեստեր եւ համաօգտագործելիության թեստեր: Այս թեստերից յուրաքանչյուրի համար դրական արդյունքները նշվում են համապատասխան հավաստագրով:

Համաձայն Կանոնակարգի 5-րդ հոդվածի՝ անդամ պետությունների տեսակի հաստատման մարմինները տեսակի հաստատման հավաստագիր չեն տալիս, մինչեւ չլինեն.

- անվտանգության հավաստագիր,
- գործառական հավաստագիր,
- եւ համաօգտագործելիության հավաստագիր՝

տեսակի հաստատման հայցի առարկա հանդիսացող ձայնագրող սարքավորման կամ պտուտաչափի քարտի համար:

Սարքավորման ծրագրային փաթեթի կամ սարքաշարի, կամ դրա արտադրության համար օգտագործված նյութերի հատկությունների ցանկացած փոփոխության մասին, մինչեւ արտադրության մեջ դրանց կիրառումը, պետք է տեղեկացվի այն մարմնին, որը տրամադրել է տվյալ սարքավորման տեսակի հաստատումը: Իրավասու մարմինը պետք է արտադրողին հավաստիացնի տեսակի հաստատման երկարաձգման մասին կամ կարող է



համապատասխան գործառական, անվտանգության եւ (կամ) համաօգտագործելիության հավաստագրերի թարմացում կամ հավաստիացում պահանջել:

Ձայնագրող սարքավորման ծրագրերի տեղում թարմացման ընթացակարգերը պետք է հաստատվեն այն մարմնի կողմից, որը ձայնագրող սարքավորման համար տեսակի հաստատում է տվել: Ծրագրային փաթեթի թարմացումը չպետք է փոխի կամ ջնջի վարորդի գործողությունների վերաբերյալ որեւէ տվյալ, որը պահպանված է ձայնագրող սարքավորման մեջ: Ծրագրերը կարող են թարմացվել միայն սարքավորումն արտադրողի պատասխանատվության ներքո:

## **2. Անվտանգության հավաստագիր**

Անվտանգության հավաստագիրը տրամադրվում է՝ համաձայն սույն հավելվածի 10-րդ հոդվածի դրույթների:

## **3. Գործառական հավաստագիր**

Տեսակի հաստատման յուրաքանչյուր թեկնածու պետք է անդամ պետության տեսակի հաստատման մարմնին տրամադրի բոլոր նյութերը եւ փաստաթղթերը, որոնք մարմնին անհրաժեշտ կհամարի:

Արտադրողին գործառական հավաստագիր է տրամադրվում միայն առնվազն 9-րդ հավելվածով նշված բոլոր գործառական թեստերը հաջողությամբ անցնելուց հետո:

Գործառական հավաստագիրը տրամադրվում է տեսակի հաստատման մարմնի կողմից: Շահառուի անունից եւ մակնիշի նույնականացումից բացի՝ այս հավաստագիրը պետք է նաեւ նշի կատարված թեստերի եւ ստացված արդյունքների մանրամասն ցուցակը:

## **4. Համաօգտագործելիության հավաստագիր**

Համաօգտագործելիության թեստերն իրականացվում են մեկ լաբորատորիայի կողմից՝ անդամ պետության հեղինակության եւ պատասխանատվության ներքո:

Լաբորատորիան պետք է արտադրողների՝ համաօգտագործելիության թեստերի հայցերը գրանցի դրանք ներկայացնելու ժամանակագրական հերթականությամբ:

Հայցերը պաշտոնապես գրանցվում են միայն այն դեպքում, երբ լաբորատորիան իր տրամադրության տակ ունի.

- համաօգտագործելիության թեստերի համար անհրաժեշտ նյութերի եւ փաստաթղթերի ամբողջական փաթեթը,
- համապատասխան անվտանգության հավաստագիրը,
- համապատասխան գործառական հավաստագիրը:

Արտադրողին պետք է տեղեկացնեն հայցի գրանցման ամսաթվի մասին:

Լաբորատորիան ոչ մի համաօգտագործելիության թեստ չպետք է կատարի այն ձայնագրող սարքավորումների կամ պտուտաչափի քարտերի համար, որոնք անվտանգության եւ գործառական հավաստագրեր չեն ստացել:

Ցանկացած արտադրող, ով հայց է ներկայացնում համաօգտագործելիության թեստի համար, պետք է համաձայնի այդ թեստի համար պատասխանատու լաբորատորիային թողնել նյութերի եւ փաստաթղթերի ամբողջական փաթեթը, որը տրամադրել է այդ թեստերի իրականացման համար:

Համաօգտագործելիության թեստը պետք է իրականացվի՝ սույն հավելվածի 9-րդ հավելման 5-րդ պարբերության դրույթների համաձայն, համապատասխանաբար, ձայնագրող սարքավորումների եւ պտուտաչափի քարտերի բոլոր տեսակների համար.

- որոնց համար տեսակի հաստատումը դեռ վավեր է, կամ
- որոնց համար տեսակի հաստատումը դեռ քննարկման փուլում է եւ որոնք ունեն վավեր համաօգտագործելիության հավաստագիր:

Համաօգտագործելիության հավաստագիրը պետք է լաբորատորիայի կողմից արտադրողին տրամադրվի միայն այն բանից հետո, երբ նա հաջողությամբ անցել է պահանջվող բոլոր համաօգտագործելիության թեստերը:

Եթե ձայնագրող սարքավորումներից կամ պտուտաչափի քարտերից մեկի համաօգտագործելիության թեստը հաջող չի անցնում, համաձայն 283-րդ պահանջի՝ համաօգտագործելիության հավաստագիր չպետք է տրվի, մինչեւ հայց ներկայացրած արտադրողը չկատարի անհրաժեշտ փոփոխությունները եւ համաօգտագործելիության թեստը հաջողությամբ չանցնի: Լաբորատորիան պետք է բացահայտի խնդրի պատճառը՝ անսարքությունից տուժած արտադրողների օգնությամբ, եւ պետք է փորձի օգնել հայց

ներկայացրած արտադրողին տեխնիկական լուծում գտնել: Այն դեպքերում, երբ արտադրողը փոփոխության է ենթարկում իր արտադրանքը, արտադրողի պատասխանատվությունն է համապատասխան մարմիններից հավաստիանալը, որ անվտանգության եւ գործառական հավաստագրերը դեռեւս վավեր են:

Համաօգտագործելիության հավաստագիրը վավերական է վեց ամիս ժամկետով: Այս ժամանակահատվածի ավարտին այն անվավեր է ճանաչվում, եթե արտադրողը համապատասխան տեսակի հաստատման հավաստագիր չի ստանում: Արտադրողն այդ հավաստագիրն ուղարկում է գործառական հավաստագիր տրամադրած անդամ պետության տեսակի հաստատման մարմին: